



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material







ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ. ԱԼԻՇԱՆԻ



08 APR 2013

6667

891.99.039

Q-31 E


13 APR 2011

Gpt S, u. G.

N: 9089.

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ. Ա.Լ Ի Շ Ա Ն Ի



ТБИЛИСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ГРУЗИИ
БИБЛИОТЕКА
7/XI-1922
ИМЕНИ А. МАСКЕНИАНА
Ч. III. КОЛЛЕКЦИЯ ИНСТИТУТА

¶ b u b s h u - u . q u g u r

1902

Ի յիշատակ Քսանեւիինգամեայ յոքելինի Աքբայութեան եւ Աքբեպիսկոպոսութեան Տեառն Տեառն Իգնատիոս Վ.Դ Կիւրեղ Ընդհանրական Աքբայի Ուխտիս՝ Նուիրէ

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ՏՊԱՐԱՆԻՑ

Բ Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Նուազ	52
Երկու խօսք	
Հ. Ալիշամի աշակերտութիւնը և քահանայութիւնը վարժապետ և դաստիարակ	1
Հ. Ալիշամի չոռլմ	12
Հ. Ալիշամի Մաթեմատիկա	24
Հ. Ալիշամի Լուսորա, ի Պրեփանել, ի Փարիզ, ի Հոնոր և ի Վենետիկ	34
Հ. Ալիշամի Փարիզ	37
Հ. Ալիշամի Գաստիարակի և Վենետիկ և ի Փարիզ	58
Հ. Ալիշամի Գաստիարակի վաճառք	61
Հ. Ալիշամի Մեսուչ Ռաֆայէլեամ վարժարանի	78
Հ. Ալիշամի Գրական արդիւմքները: Բաթաստեղծական երկեր	84
Տեղագրական երկեր	103
Զամազան գրութիւնը	124
Յորելեամ	134
Յորելեամի ծնուազբեր և յօդուածներ	139
Հ. Ալիշան իր գործերում մէջ	145
Հ. Ալիշամի հրատարակութիւններ	151
Ամոիպ գրութիւնը	163
Ամծամօթ գործեր	166
Հ. Ալիշամի կեամքը ու բարքը	173
Դրուազմեր և Զրոյցներ	179
Ամակնալ Երկնաչու	187
Ցաւակցութիւնը	195
	203



Ա. Ռ

ՆՈՐԾՆԾԱՅ ԱԲԲԱՆԱՅՐ

ԳԵՐՅԱՐԳՈՅ ՏԵՐ ԻԳՆԱՏԻՈՍ ԿԻՒՐԵՂԵԱՆ

Ա Ա Բ Ա Տ *

Ոչ յերին երին ձառագայրից ցընծաշէն՝
Որ զիեզ Հանդրին լուսավառէ ննդ զոյ Պոնտոս,
Այլ ընդ յուշիկ յուսոյն հիանամ լար յաշէն՝
Որով զազդ ազգ սլրտից զօդէ Տէր Քրիստոս.

Այն որ երբեմն առ մեծորեան թեկնածու
Յիշր օրինակ եւ յիշր անուն յարացոյց՝
Ծքրյանուն մանուկն երարձ յինքեան ու,
Նոյն մեզ բգիշեզ նորափլրիք Հայր կացոյց.

Զ'ի գերունակ գրգռանս զլրկացրն սովոր՝
Պէսպէս շնորհաց ամքարելով ի Քեզ փայլ,
Անդրադարձի նշուշես յորդիսլդ յորդոր.

Եւ յառ այս Ցուն ակընկառոյցն արդ աշխարհ՝
Որ հրմայէ Պետիդ շաշիդս այլեւսայլ,
Չոչ զնախահօրդ եւ զգրկչին ցոյց հետ խոնարհ:

Ի Ս. Դազար 6. Օդուսոս 1876

Հ. Դ. Ա. Ալիշան

* Գառանք իր անտիպ բանաստեղծութեանց մէջ:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Փղբրիկ հատորիս առաջին մասին մէջ կը ներկայացնենք
Հ. Ալիշանի կենսագրութիւնը պարզ պատմական ոճով. Երկրոր-
դին մէջ ակնարկ մը կու տանք իր գրական գործունէութեան: Կը
փութանք ըսելու որ գործս՝ հոյակապ համեարին ծովածաւալ վաս-
տակոց ուսումնասիրութիւնը չէ. այլ ժողովրդական գրութիւն մը
Նահապետին սիրելի Հայկակներուն եւ հայրենասէր հասարակու-
թեան համար պատրաստուած:

Հ. Ս. ԵՐԵՄ.

Ո՞ւ գու հանուրց յաղթական երկահանից դարուց նոր.
Բիւրք բիւրուց գան ամ յամէ, այլ որբան ծով մարդկութեան
Վերընթասցի եւ վիշի, և ի խըսան անդ աղդաց
Համօրէն ոչ դացեն միաք մի հաւասարք քոց մըտաց.

Լորու Պայտը

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ. Ղ. Մ. ԱԼԻԶԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԱՇԱԿԵՐՏԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԻՒՆԸ



Հ Ա Յ Ր Ա Լ Ի Շ Ա Ն Ի մանկական անունն
է Քերոբէ . ծներ է ի Կոստան-
դիոսպոլիս 1820ի Յուլիս 18ին : Հո-
րը անունն է Պետրոս *, խիլ մօրը՝
թագուհի : Ծնողաց ձեռքը եղած
ատեն , անտարակոյս ապագային
մէջ ստացած մեծ զարդացումին
համեմատ՝ մանկութեան հասակին
մէջ ունեցած է տաղանդին յարա-
կից նշանաւոր գէպքեր , հետաքրքրական վարք մը , որ
դժբախտաբար մեզ համար մութ են :

Բայց չանաարի մը կեսմքը և կենցագը , ոչ ոյնքան
պատահեկան անորոշ վիճակին մէջ դանուած ատեն ուշա-

* Իր անձնական օրոպրութեան մէջ կը յիշէ 1827 . գեկտ . 27ին իր
Հօր՝ Եւղոկիա աքսորութեն . ուսկից կը վերագառնոյ ի Կ. Պոլիս 7 յուն-
վար 1850 :



« ծեր նահապետիդ՝ տուր կակուղ հողիկ
որ զքիզ պիտի սիրեց , չայո՞ց աշխարհիկ » :

գրաւ կ'ըլլայ , որքան երբ նա կը սկսի տաղանդը մշակելու ասպարիզին մէջ ոտնակոխել : Որսվ մեզ համար , ոչ մանուկն Քերոբէ , այլ Մխիթարեան ուսանողն Ալիշան քննութեան և պատմութեան նիւթ կ'ըլլայ : Մենք կը խոստովանինք , որ Հայր Ալիշանի ոչ արշալոյսին , այլ վերջարյան ժամանակակից ըլլալով , կարող չենք իր պատանեկութեան որոշ պատմութիւնն գրել : Այդ կարող էր կատարել իր ժամանակակից Հայրերէն մին , մանաւանդ անոր մանկութեան գաստիարակը . սակայն գժբաղդաբար կատարուած չէ : Մենք բազգատելով իր գաստիարակին զ . չ . Անդրէս Ծռվիզեանի վարքը * իրեն մեզի ծանօթ կենցաղավարութեան հետ , զգալի նմանութիւն կը դանենք իր գաստիարակին ընդունակելի վարքին :

Հ . Ալիշան իր ինքնագիր Օրագրութիւնն ոնի , որ սկսած է ուսանողական օրէն , և զայն յառաջ վարած է մինչև իր այդ ընթացքին լրումն : Փոքրիկ տետրակ մըն է , ուր առանց գաստողութեան կամ խորհրդածութեան արձանագրուած են ամէնօրեայ գէոլքերը՝ երկու կամ երեք բառերով . գրուած են իր վանք գալու , ուստանողութեան , նորընծայութեան , վարժարանցիութեան և քահանայութեան թուականները , գաստիարակին և ուսուցիչներուն անունները , սկսած և աւարտած ուսմանց անունները ,

* Հմմա . Ա . Աւուստինոս Խորհրդաժուրիւնը - Թարգմ . Հ . Անդրէս Պ . Ծռվիզեան , Մ . Մխիթարեան . Վէնետիկ , Ա . Պաղար 1895 : Այս գրքի յառաջաբանը զբեր է Հ . Ալիշան . ուր նկարագրած է իր գաստիարակի կենցաղը , և իր հոգեւոր որդույն Հ . Ա . Պարսնեանի մարտիրոսութիւնը : Ամէնն ի միասին բովանդակուած են 20 միջադիր էջերու մէջ :



ՊԵՏՐՈՍ ՄԱՐԳԱՐ

ԱԼԻՇԱՆ · 1775+1834 ·

PIERRE MARCAR ALISHAN

NUMISMATISTE-ANTIQUAIRE

ԴՐԱՄԱԳԻՏ ՀՆԱՀԱՆԻՒՄ :

և թուականները, վաճքին մէջ եկող դացող միաբաններու և հիւրերու անուններն. միով բանիւ, այդ օրագրութիւնը իր ուսանողական կենսագրութեան համար, կարելի է համարել բոլորվին չոր ու ցամաք կենսագրական կմախքի բեկորներ. վասն զի իր ընթացքին կամ իր մասին, համեստութենէ շարժեալ, միշտ մունջ մնալ արժանի դատեր է: Այդ Օրագրութիւնը մեզի առաջնորդ առնելով, կը սկսինք իր ուսանողութեան պատմութիւնը:

Պատմանին Քերոբէ իր Սերոբէ եղբօր և ուրիշ բազմաթիւ ընկերներու * հետ, 1832 Մայիս 9ին կ. Պոլսէն կ'ուղեւորի, առաջնորդ ունենալով միաբանութեանս բազմարդիւն և տաղանդաւոր անդամ՝ Հ. Մկրտիչ Վ. Աւգերեանը: Վաճք կը հասնին նոյն տարուան Յուլիս 5ին, Պոլսէն մինչ Զանաք Պալէսի չորս օր կը դնեն: Յունիս 5ին, վենետիկ ծովեղը Մալամօքի հանդէպ, իրենց նաւը խարիսխ կը նետէ. երկու օր յետոյ կը հասնին վաճացս

* իր հետ վաճք եկող Ընկերներն են.

1. Յովհ. որդի Մկրտիչ հաճի Միքայէլեանց Հիւրմիւղեան:
2. Պոլսէն որդի Խալսմանեան Բարսեղի:
3. Վիչէն որդի Յովհաննէսի Խափանճի Օղուրի:
4. Յակոբ որդի Խումաշէի Յարութիւնի:
5. Աղնի կամ Աղնաւոր որդի Սահաթէի քառա Անտոնի:
6. Մկրտիչ որդի Անտոնի քառա Անտոնեան:
7. Յովհէփ որդի Յակոբի Շիշմանեան: Սա ուսումն առնելէն յետոյ, առանց քահանայանալու կը մեկնի վաճքէն: Հայ վիպասան հանճարութիւնը:
8. Անտոն որդի Գրիգորի Ասկերեան. (Հ. Տիմոթէոս):
9. Յարութիւն Լաղեան որդի Պէտքէռ Յուսէփի. (Հ. Պուղաս):
10. Սերոբէ Սլեշանեան, Եղբայր Հ. Ալեքսանի:

մօտակայ Լազարէթ անուամբ կզզին. միեւնոյն օրը կը վախաճանի Հ. Ալիշանի մայրը Թագուհի: Բոտ քաղքին առողջապահիկ սովորութեան, որպէս զի արեւելքէն եկող օտարականները տարափոխիկ կամ համաճարակ հիւանդութիւն մը չի բերեն, այն կղզւոյն մէջ քառասուն օր կը մնային բժիշկներու քննութեան ենթարկուելով: Ուխտիս, ինչպէս շատ մը նախկին անդամներ, նոյնպէս Հ. Ալիշան այդ օրինաւոր սովորութեան ենթարկուելով, ամսոյ մը չափ հօն կը մնայ: Յետոյ կը մտնէ Ս. Ղազար իր հոգւոյն և գիտութեան որբանը: Վանացս ամէնէն տաղանդաւոր անդամներէն ոմանք, ընդհանրապէս գիտութեամբ կամ լու ևս, չափահաս վիճակի մէջ որոշած են իսպան թողուլ աշխարհք և քաշուեր են ի կզզիս, նուիրուելով միանձնական կենաց խոստմնալից հոգեկան և գրական երջանկութեան. մարդարէական ոգւով չենք կարող թափանցել երկոտասանամեայ Քերոբէ մանկան սիրալը՝ իմանալու, թէ ինչ ներշնչմամբ թողուցեր է իր ծնողքը, սիրելի հարազատները և իր հայրենիքը. գուցէ ոչ մանկական միամատութեամբ, այլ երկնազգեցիկ, լուրջ զաղափարով որոշեր է իր այդ վիճակը. այս մասին եւս ոչ մի տեղեւ կութիւն չանինք:

Պատմանին Ալիշան հազիւ թէ վաճք կը հասնի, կը յանձնուի գաստիարակ Հ. Անդրէսս Ծավիզեանի. սա մի ընդօրինակելի աստուածանորհ Հայր էր, ձուլուած Մխիթար Արքահօր ձեռնասուն աշակերտաց Հնորհազարդ կաղապարով. ոչ հանճար մ'էր և ոչ գիտութեամբ և ուսմամբ մշակուած միաք մը, բայց ոնէր հոգեւոր մշակ

և սրտի առաջնորդ՝ մ'ըլլալու ամենէն կարեւոր առաւելու թիւնները, և այդքանը իր պաշտօնին համար բաւական էր: Ալիշանի գասընկերներէն և իր պատաննեկութեան ժամանակակից անձինք իրեն համար աւանդած և պատմած են, որ իր ուսանողական ընթացից առաջին օրէն ցոյց տուած է հանդարտ, երկիւղած, զգաստ, պարկեշտ, և այլ բազմաթիւ առաքինութեամբ պճնուած բարք մը. ընդ հակառակն իր եղբայրն Մերոբէ, քան զինքն թէն աւելի հանճարեղ, բայց խիստ տաք բնաւորութեան տէր լինելով, կրօնաւորական վիճակը իրեն անցարմար կը դանէ, որով մի քանի տարի վերջ, իր ծնողաց կը վերադառնայ:

Հ. Ալիշանի ուսանողութեան տոեն, Նորլնծայարանի (ուսումնարան) ուսմանց ծրագիրը շատ անձուկ էր և խիստ տարբական. այսու հանդերձ, այդ անբաւական ծրագիրը հանճարներ ստեղծեր է:

Եղյն ատեն վանացու Նորլնծայարանի դասատուն էր Հ. Գետրոս Մինասեան, որուն դասաւանդութեանց հետեւելով, կ'ուսանի իր վիճակին նախնական դիտութիւնները: Բայց միաբանութեանս սովորութեան, պատամաէ մը աւելի կը սպասէ. և Օգոստոս 42ին կը կատարէ

* Հ. Ալիշան իր այս եղբայրը շատ կը սիրէր, անոր Ամերիկա գնալուն վրայ երկու յուղեջ բանաստեղծութիւններ զբաժ է զոր տես Եղագք «Մաղթունի» էջ 54 և 59: Հ. Ալիշան անընդհատ նամակ կը գրէր իր այս եղբար, որ հնագիտութեան շատ հմուտ ըլլալով՝ իրեն հետինակած հնախոսական գործերուն շատ օգտակար կ'ըլլար:

զգեստաւորութիւնը *: 1833 Յուլիս 13ին իր դասին ուսուցիչը կը փոխուի. նոյն ատենները վանքին մէջ դասատուի պակասութիւն ըլլալով, ուխտիս աւագ աշակերտներէն է. Գաբրիէլ Այլվաղեան, գեռ քահանայ չի ձեռնադրուած, Նորլնծայարանի աշակերտաց վարժապետութիւն կ'ընէ. Ալիշան այդ երիտասարդ կորովամիտ ուսուցիչն կը սորվի հայ քերականութիւն, սուրբ գրոց պատմութիւն, բնական աշխարհագրութիւն: Գեռահասակ վարժապետը միայն հինգ ամիս դասաւուութիւն կ'ընէ. յետոյ իրեն տեղ կը փոխանակէ Հ. Միքայէլ Զէմպէրէք ճեան (1833. դեկտ. 9): Սա Ալիշանի դասին չորս տարի ուսուցութիւն կ'ընէ, և 1847 Մեպտեմբ. 23ին կ'երթայ Փատուա Մուրատեան վարժարանի դասատուի պաշտօնով: Հ. Զէնպէրէքճեան չորս տարուան մէջ կը սորվեցնէ հայ. խառ. լատ. գալ. քերականութիւն, Աստուածաշունչի, Հայոց և ընդհանուր ազգաց պատմութիւն, աշխարհագրութիւն, ճարտասաննութիւն, տրամարանութիւն, բանաստեղծութիւն: Նախորդ ուսուցիչը Հ. Գաբրիէլ Այլվաղեան 1837 Հոկտ. 23ին գարձեալ Ալիշանի դասին դասատու կ'ըլլայ:

Մանկական հասակին մէջ Հ. Ալիշան կը կորսնցընէ նաև իր հայրը Գետրոս. մօր և հօր կորուատը ամեն մի պատահի համար դիւրին է գուշակեն, թէ որքան աղէ-

* Նորեկներու Միաբանութեան զգեստը հապճեպով չեն տար, նախ անոնց վարքը կը դիտեն, և երբ կրօնքի մէջ ընդունուելու արժանի կը դատուին, այն ատեն միայն կրօնական զգեստ կու տան, իսկ հակառակ պարագային ետ կը դարձընեն:

Եսարշէ և որբան ողբական, սակայն չ. Ալիշան իր Օքագրութեան մէջ այդ երկու մեծ կորուստները չէ արձանագրած ախրանի բառերով կամ բացառքութեամբ այլ լոկ խաչանիով մը:

1836 ապրիլ 20ին կը կտաարէ իր վիլոնառութիւնը *,
Այդ միեւնոյն օրը պատանին Ալիշան կ'առնու զեւոնդ
անունը, որուն անուանակից սուրբին ջանացեր է նմա-
նելու ոչ միայն անուամբ, այլ և սրտով և հոգւով։ Ա-
լիշան Նորընծայարանի մէջ հինգ տարի կը մնայ, յետոյ
իր Ալբանիամ, Անտան, Յարութիւն, Յակով անուամբ

* Սա մի կրօնական հանդէս է: Ալսիթարեան ուստանողն, երբ բաւա-
կան հասակն առած է, զար օրինակ 16 կամ 18 տարին բալորած, և
վանքին մէջ գոնէ մէկ կամ երկու տարի կեցած, ու բարի վարք
մը ցայց տուած, այն տաեն իր վերակացուին բարի վկայութեամբ, վար-
չական ժաշովքը կ'որոշէ անոր միաբանութեան զգեստ տալը, այսինքն՝
վեղարաւոր փիլոնի գործածութեան իրաւունքը: Ալսիթարեան աշկերտի
մը համար, այդ աստիճանը շատ միախարական է և ունի մանկական
վերին աստիճանի ուրախութիւն մը, վասն զի նոյն տաեն, արտաքին
տարագով սովորական քահանաներէն ընաւ չի տարբերիր. իր մկրտու-
թեան անունը կը փոխառի և կ'առնու Հայ. Եկեղեցւոյ տօնելի սուր-
բէրէն միոյն անունը, ըստ իր յօժոր կամաց: Ուսանող պատանին
այդ աստիճանը առնելէն չորս օր առաջ, կրթութեան կը մտնէ, և նոյն
օրերուն մէջ, մի միայն հոգեւորով կը զբաղի. կը մտածէ իր ընտրելիք
վիճակին վրայ: Փիլոնաւորութիւնը Եկեղեցական յատուկ արարողու-
թեամբ կը կատարուի. նոյն օրը վանքին Վեհ. Արքան թիւ կը պա-
տարագէ, կը հաղորդէ ուստանողը, և յետ պատարագին, Եկեղեցւոյ գա-
ռին մէջ կը բազմի, ուսանողը կու գայ կը դաւանի հաւատոյ գաւա-
նանքը, և հասարակաց ներկայութեան փիլոնը վրան կ'առնու, կ'երզը-
ցուին յատուկ շարականներ, ամենէն վերջը՝ Արքան արարողութեան առ-
թիւ, փիլոնաւորին խրաս խօսելէն յետոյ, կը փոխէ ուստանողին անունը:

Ընկերներովը՝ կ'ամեցնի վաճքին բարձրագոյն կրթաբանը,
ուր հասակաւոր աշակերտները քահանայութեան կը պա-
տրաստուին : Հսո Երրեւ վերակացու, դարձեալ նոյն Հ.
Ա. Ծովիզեանը կունենայ: 1838 յունուար 28ին կը կա-
տարէ իր վիճակին ամէնէն աւելի սրտաշարժ կրօնական
մեծ հանդէսը. Ռէփառագրութիւնը*:

Հ. Ալիշան, ինչպես իր յորեկեանի յայտաբարութեան
մէջ արդէն յիշատակած է, ուխտագրութեան հանգէսը իր
անձին համար աւելի սիրելի գտած է, քան թէ քահանայա-
կան ձեռնագրութիւնը. միանձնաւէր հոգին կը մտածէր,
որ նոյն հոգեկան գաշնագրութեամբ, իր կեանքին վրայ
կը կատարուի ամենէն մեծ կերպարանափոխութիւնը.
աշխարհքի խաղառ լքում, և որտին տենչալի ու փարելի
անապատական խաղաղաւէտ կենաց գիւտն, որ զինքը
պիտի հասցընէր գրական ու հոգեկան փառաց գաղաթ-
նակէար . . .

Առաջին տարբները նոյն բարձրագոյն կրթարանին մէջ

* Եկեղեցական արարողութիւնը համանման է վերոյիշեալ փիլոնաւորութեան հանդիսին, երբ յետ փիլոնաւորութեան կ'անցնի երկու տարի, Մսիթարեան քահանայցու աշակերտը, ըստ իր աղասա կամաց, երկար տաեն մտածելէն յետոյ փափաք կը յայտնէ միաբանութեան անգամ ըլլալու, որ կը կատարուեի հասարակաց քուէի ընտրութեամբ և նոյն հասարակութեան առջեւ կրօնաւոր ըլլալու և Միաբանութեան զլեսոյն մշանցենաւորապէս հաւատարիմ մնալու խոստումն տալով: Ուխտադրովը, հանդէսէն առաջ, մի շաբաթ կրթութեան կը մտնէ, լաւ կը խորհի իր վիճակին խիստ մեծ պատասխանատուութիւնը: Ուսանողը ուխտադրութենէն յետոյ, այլ եւս Մսիթարեան կը օնաւոր մ'է, և քահանաներէն կ'սուչուե միայն պատարագ չի մատուցանելիս:

Ալիշան և իւրընկերներն կ'ուսանին թուաբանութիւն, երակրաչափութիւն, բնազանցութիւն, բարոյական վիլխափաշութիւն, տօմարագիտութիւն, տաճկերէն, գաղղիերէն լեզուներն . բնագիտութիւն, և աստուծաբանութիւն : 1840 Յունիս 7ին իր ընկերներով քահանայ կը ձեռնուդրուի, և ամբողջ տառմնական ընթացքը աւարտելու համար, տակաւին վարժարանի մէջ մէկ տարիէն տևելի կը մնայ:

Հ. Ալիշան իր կրթական վիճակին մէջ, ինչպէս աւանդութած են դասընկերները, ոչ միայն մեծ ուսումնասէր մը այլ և մեծ հաստրակասէր մ'եղած է : Վանացս փոքր և աւագ ուսումնաբաններուն մէջ գիւրին է դուշակելն որ բնոււ ծառաներ չկան, որով կրթաբաններուն ներքին նիւթական ծառայութիւնք՝ աշակերտները կը հոգան: Ալիշան այդ ծառայութեանց մէջ ալ տիպար հոգի մը ցոյց տուած է. իրեն յանձնուած պաշտօնները կատարելէն յետոյ, եռանդով ընկերներուն օգնութեան կը հասնի. վանքին եկեղեցւոյն մէջ, որ աւագ աշակերտաց ինամոց յանձնուած է, նա իր աշակերտութեան տաեն, արտաքոյ կարգի աշխատով ծառացեր է Աստուծոյ. կ'ըսուի թէ խորանները զարդարելու համար, անձարակ և անկարող ըլլալուն համար, ինքը վեր վար վազելով միւս ճարտար ընկերներուն զարդի պէտք եղած տառկանները արագութեամբ կը հասցընէր:

Յիշեալ երկու տառմնաբաններու մէջ ինչպէս տեսանկը,
Հ. Ալիշան ապագային հսկաց հեղինակ մը ըլլալու համար,
համապատասխան դիսութեանց և տամնուց դասեր տուած

չէ, սակայն հոն գրած է իր շողշողան ապագային հիմը. հոն ամրացուցած է իր հոգւոյն անսասանելի պարիսպները, որոնց վրայ մինչև իր նահապետական կենաց խորտակումը, մաքին հսկակապ շենքը կառուցած է, հանձարի, տաղանդի շենք մ'է այն. հայ գրականութեան փառապանծ մեծ յիշառակարանը:

Հ. ԱԼԻՇԱՆ

ՎԱՐԺԱՊԵՏ ԵՒ ԴԱՍԻԱՐԱԿ

Յետք քահանայութեան, ըստ վաճացու սովորութեան, նորընձայ քահանան՝ վարժարանի մէջ հաղիւ մէկ տարի կը մնայ, յետոյ իրբեւ միաբանութեան սովորական քահանայ միաբան մը, կը մննէ հասարակութեան մէջ, կը կատարէ իրեն յանձնուած պաշտօնը և աղաս յամերը կը նուիրէ զուտ գրականութեան։ Այս ժամանակն կը սկսի Միսիթարեան նոր քահանային մատենագրական ասպարէզի մէջ մննեն։ Հ. Ալիշանի պէս հանձարեղ մնքի մը համար, այդ վիճակը վերին տառիչ ճանի գդուելի էր. նա հասաւ այդ բաղզաւոր օրուան, զոր ոչ վանքին, այլ Ուսփայէլեան վարժարանի մէջ կը վայելէ. Վարժարանէն հաղիւ թէ կ'ենէ, հասարակութեան մէջ առանց մի ամիս մնալու, 1844 Օգոստոս 23ին յիշեալ ազգային ուսումնարանին ուսուցիչ կ'ըլլայ. բայց այդ պաշտօնը իր ցանկալի գրական պարապմանց բնաւ խոչընդունած էր գրել բանասոնդութիւններ, հոն եւս կը շունունդ գեղեցիկ քերթատածները։

Իր ուսուցութեան օրով՝ նոյն վարժարանի տեսչութիւնը կը վարէր մեծանուն դաստիարակ Հ. Ուսփայէլ Թրեանց*, սո իր պաշտօնին ձեռնհաս և բոլորովին վարժ ըլլալով, Հ. Ալիշանի վրայ ուսուցութիւնը այնքան չէր ծանրանար. և գուցէ չենք սխալիր ըսելու, որ Հ. Ուսփայէլ եւրոպական լեզուաց լու տեղեակ ըլլալով, և հին ու նոր մատենագրութեանց մասին խոր հմտութիւն ունենալով, երիտասարդ Հ. Ալիշանի ուսումնական զարգացման հաւանական է որ բաւական օգտակար եղած է։

Հայր Ալիշան արդէն իր այդ աւագ պաշտօնակցին մահուան առջիւ խօսած ** գամբանականովն, յայտնած է անոր ի՞նչ աստիճանի բարձր կրթութեան տէր ըլլալն։

1846 Յուլիս 15ին միաբանութեանս ընդհանրական Աբբան կը ծանուցանէ Հ. Ալիշանի, որ առ ժամս պէտք էր վարժարանի տեսուչ Հայրի Ուսփայէլ, իր հետ Հոսվմ

* 1856ին միաբանութեանս վարչական ժողովի հրամանին համեմատ, Հ. Յակովլոս Ճէլալեան և Հ. Արզիս Թէսպորեան՝ Ուսփայէլեան վարժարանը բանալու համար, Վենետիկոյ մէջ կը վնասեն վարժարանի յարմար պալատ մը՝ վերջապէս կը գտնեն Փէղարօյի պալատը, որուն իբրև տարեկան վարձ կու տան 4000 ֆիորին. կը պատրաստեն քսան աղոց համար սենետակներ։ Աւստրիա ժամանակուան Գեր. Աբբան Սուքիս Սումալ Պոլիս Հ. Անանիա Ճէլալեանի նամակ գրելով, Վարժարանի համար Եղբայր Ստեփանոսի Ճեռքով տառնը հինգ աշակերտ բերել կուտայ։ Գեր. Աբբան նորահասատատ Վարժարանին տեսուչ կը կարգէ զՀ. Ստրոկիս Թէսպորեան, որ իրեն օգնական և աշակերտաց իբրև ուսուցիչ և դաստիարակ կ'ընտրէ զՀ. Ուսփայէլ Թրեանց, երկորդական օգնական զՀ. Եսայի Մլլաքեան։ Վարժարանը կը բացուի 1856 մայիս 25ին։ Հ. Ս. Թէսպորեանէն վերջը տեսուչ կ'ըլլայ Հ. Ու. Թրեանց 1842, Յուլիս 6ին։

** Հմտութեան բազմապէս 1859 էլ 84։



Հ. Ռափայել Թոքանեց

տաներ, որով կը հարցընէ իրեն, թէ վարժարանին ուսուցչապետի պաշտօնը կրնայ յանձն առնուլ։ Նա իբրև հլու հոգատակ իր վեհին, սիրով յանձնառու կ'ըլլայ, բայց կը խոստավոնի, որ ֆիզիդայի գիտութիւնը աւանդելու կարողութիւն չունի և եթէ այդ գիտութեան աւանդութիւնն ալ յանձն առնէ, պէտք է զայն սորվելու համար նեղէ իր փափուկ կազմուածքը։ Վարչական ժողովքը կ'ուրաշէ որ այդ գասը աւանդէ Հ. Աբրահամ Ճարեան. իսկ փոքր աշակերտաց գասերն Հ. Մ. Քաջանի վարդապետն հոգայ. Հ. Ալիշանին ալ կը յանձնէ աւագ գասարանի դաստանդութիւնը և այն ամէն գասերն զոր տեսուչ Հ. Ռափայելն կ'աւանդէր։ Այս պաշտօնին հետ ինքը միանկամայն միաբանութեանս խնամակալաց ժողովի աւանդպետի պաշտօնն կը վարէր և ատենագպրութիւնը սկսած է վերցիշեալ թուականէն։ Հ. Ռափայելի վարժարանէն բացակայութեան, Փոխ-Ճեսուչ կը դրուի Հ. Սամուել, որ շատ քաղցր բնաւորութեան տէր ըլլալով, աղոց դաստիարակութեան համար, այդ աստիճանն քաղցրութիւնը ըստ Հ. Ալիշանի օգտակար չերեւիր, և այս գիտութիւնը Հ. Ալիշան ի պարտուց ըրած է իր վեհին՝ երբ սա սկսեր է վարժարանի լնիթացից մասին լիուլի տեղեկութիւն ուզել։ Վեց ամիս վերջը, Հ. Ալիշան, գարձեալ իր նախորդ տեսուչը իր քով կը դանէ, որով ինքն ալ դասաստութեան ծանր հոգերէն մի քիչ կը թեթեւայ. և ստիպողական էր այս փափոխութիւնը, վասն զի Հ. Ռափայելի բացակայութեան, Հ. Ալիշանի գործերը շատ ծանրանալով, սկսած էր ծիւրիլ և տկարանալ։

Հ. Ալիշանի հասակակից (վ. Հ. Քաջունի) օգնականին համար շատ անդամ խնդիր եղած էր վանք կանչել կամ ուրիշ կարեւոր պաշտօնի մը վրայ դնել. առկայն Հ. Ալիշան գնահատելով անոր անձնանուել տջակցութիւնը, միշտ դիմադրեր է և ջանացեր է իր քովէն չհեռացընելու զինքը։ 1847ին վանքի ուսանողաց գասատու կը պակսի, անհրաժեշտ կ'ըլլայ որ Հ. Մ. Քաջունի այդ պաշտօնինն սահմանեւի. և երբ կ'առարկուի որ Ոստի. Վարժարանը անոր պէտք ունի. Հ. Գ. Սյավողվակի կը պատասխանէ. Նախ վանքը պէտք է մտածել, յետոյ վարժարանը։ Վերա ջապէս Հ. Քաջունի կը մնայ գարձեռող իր նոյն պաշտօնին մէջ. և վանքին աշակերտաց համար ուրիշ քահանայ ուսուցիչ մը կը սահման։

Հ. Ավիշանի պաշտօնը երթալով կը ծանրանայ. Նա ինչպէս տեսանք իր դալար հասակէն սկսած է գասառութեան պաշտօնը, որ Հ. Արտիսյէլի բացակայութեան, աւելի զնասեր է իր առողջութեան. բաց ի այդ պաշտօնէն, նա միեւնպին ատեն «Բազմավիճակ»ի անդադար յօդուածներ հասցընելու պարոք ունէր. և զոր գովելի եսանդով կը կատարէր. ասնցմէ զատ, միեւնպին ատենները վանաց խնամակալաց ժողովը* գործօն վիճակի մէջ րի-

* Նոյն ատելսւան խնամակալաց ժողովը բազմաթիւ անձերէ կազմուած էր. Նախագահն էր Աւլստիս Գեր. Աբբան, զիստուր անդամներն էին վարչական ժողովի վեց առաջականները. ասոնցմէ զատ, երիտասարդ քահանայներէն ամենին գիտունները ու գործաւնեանները թուով հինգ վեց հազի՞ն այս ժողովին կարևոր մասն կը կազմէին: Այսպիսի անդամներէ կազմակերպեալ ժողովի շատ պատկառելի էր: Ասոր պարագն էր Միհթարեան ամէն վարչապահներու և աշակերտաց ուսմանդ ծռասպոն:

լալով, չ. Ալիշան իբրեւ ատենակալիք, շատ ժամանակ կը
սպառէր . այսչափը բաւական չէր . 1847ի Հոկտեմբեր
24ին, խնդիր կ'ըլլայ զինքը վանացա վարչական ժողովի
անդամ (առաջիկայ) կարգելու : չ. Ալիշանի պէս երկիւզած
արեգայի մը համար, այդ պաշտօնը այնքան ախորժելի
չէր, վասն զի նա կ'ըմբռնէր անոր մեծ պատասխանա-
տութիւնը : Նա առանց այդ պաշտօնի գերբապահնձու-
թենէն յափշտակուելու, ամէն ճիգ կը թափէ որ օձիքը
ազատէ . ունայնութեան մէջ վառք չէր փնտուեր . իր
վառքը գրչին ծայրն էր . . .

Յիշեալ թուականին, գիւտ խաչի օրը, վեհ. Աբբան
վանական ժողով կը գումարէ. 45 ժողովականք անակըն-
կալ կը հաւաքին: Գեր. Եախագահն ժողովականաց կ'ա-
ռաջարկէ չորս արժանաւոր քահանաներ, սրոնցմէ երկու
հոգի պէտք էր որ վարչական ժողովի անդամ ընարուէին:
Քուէարկութիւն կատարուելով, երկու ընտրեալներէն մին
կ'ըլլայ Հ. Ալիշան, և կը մոռնէ վեց ասաջիկայից կար-
գին մէջ: Յետ այս ընտրութեան, թէ և ազատիլը շատ
գժուար էր, բայց բանաստեղծ Հ. Ալիշան, գիւտեր կը
դանէ. ժողովքի մէջ խօսք կ'ըլլայ իրեն երիտասարդու-
թեան համար, և թէ առաջիկայ ըլլալու համար չափա-

շինելու և զիտելու թէ ինչպէս կ'աւանդուին իւրաքանչիւր սւամունքը:
Ժողովը ունէր երկու ատեհնապղիք, ասոնք ժողովքի կարգաբուութիւնքը
և զիտողութիւնքը կը հաղորդէին ուր որ անկ էր: Այս ժողովքին հետ
վարդապահներու աեսուցներու մեջ յարացերութիւն ունէին: Խնամակա-
լաց ժողովներ անսնց գատաւորը, և այս ժողովականաց որոշութեամբ
կը հաստատուէր կամ կը գացուէր վարժարան մը:



հաստարիք մը չունէր. հակառակ այլոց և նոյն իսկ գեր. Աբբայի հաստատութեան, ինքը կը պնդէ որ իրօք տակաւին ՅՈ տարեկան չի կար*, Այս պատճառաւ, նոյն օրը առաջիկայից ժողովքներէ վերջը, դարձեալ ընդհանուր գումարում կ'ըլլայ, բայց ժողովքէն առաջ Հ. Ալիշան ասոր անոր կ'ազաշէ որ այդ ծանը պատասխանաւութենէն զինքը ազատեն. և իր բնատուր բանաստեղծութեամբ ու համեստութեամբ կը համարձակի վեհին ըսելու, որ «Տարիքս աճեցուցիք, գէթ մոռաց շնորհքն ալ...». Գլխաւորապէս իր հրաժարականի պատճառը կը յայտնէ աւագ պաշտօնակցին Հ. Ռ. Թրեանցի: Միաբանութեանո սահմանադրութիւնը կը քննուի, թէ արդեօք առաջիկայ մը ընտրելու համար սահմանեալ յատուկ տարիք մը կամ թէ ոչ: Հ. Ալիշանի համեստութեան համար վտանգաւոր էր այս հետախուզութիւնը: Կը քննուի Սահմանադրութիւնը, չև կար որոշեալ տարիքի ու և է ինդիր, միայն կը պատուիրէ որ ընտրելի առաջիկայ մը «Ըստական» մը պէտք է ունենայ: Եւ ըստ սահմանադրութեան, Հ. Ալիշան անշափահաս չէր համարուեր. և որպէս զի իր առաջիկայութիւնը բնաւ ինդիր չի վերցնէ, դարձեալ քուէարկութիւն կը կատարուի: Հ. Ալիշան ակումբէն դուրս ելած՝ կ'աղօթէ որ չընտրուի: Իր

* Բայ միաբանութեանս սովորութեան, վարչական ժողովի վեց անընքն ընդհանրապէս վանքին ծերագոյն կամ հասակաւոր անդամներէն կ'ընտրուին. յարգուած է այս սովորութիւնը այն պատճառաւ, որ չակցիլ գլխաւոր վեհ, վարչէն:

այդ ընդդիմութեան մեծ պատճառն այն էր, որ իրմէ առաջ ընտրութեան արժանաւոր ծերեր կային: Հ. Ռ. Թրեանց քուէարկութեան ժամանակ, Հ. Ալիշանի հրաժարականի ամէն պատճառները կը յայտնէ. ժողովքը յարգելով անոր պատճառանքն, երկրորդ անգամ զայն չընտրեր. որով վեհ. Նախագահն կ'իմացընէ Հ. Ալիշանին, որ իր հրաժարականը ընդունուեր է. նա իսկոյն ուրախութեամբ ժողովականաց առջեւ կը համբուրէ իր վեհին աջը և շնորհակալութիւնները կը յայտնէ: Բայց մի քանի տարի վերջ (1851 Յուլիս 25) կը ստիպուի վերջապէս առաջիկայ ըլլալ. և արդէն մինչեւ ցկեանս այդ պաշտօնը (ի բաց առեալ երբ զենեափէն ուրիշ պաշտօնը բացակայ էր) խղճի մոօք կը կատարէ:

Հ. Ալիշան իր ընդունակութեան և պատկառելի բնաւորութեան համար, երիտասարդ քահանայից մէջ յետ Հ. Գ. Այվազովսկոյ՝ իրքի հաստրակութեան գրական մեծ գործիչ, ինքն կ'երեւի: Բատ միաբանութեանս որոշողական 1848 մայիս 30ին Ռափայէլեան վարժարանի տեսուչն Հ. Ռ. Թրեանց վանքիս աշակերտաց վերակացու կ'ըլլայ, այն ատեն իր օգնականն Հ. Ալիշան ուսուցչութեան պաշտօնէն աեսչութեան կը բարձրանայ:

Ուրեմն երիտասարդ Հ. Ալիշան վարդապետն 28 տարեկան հասակին մէջ կ'արժանանայ ծերունիի մը կամ չափահաս փորձ ու խոհունակ անձի մը արժանավայել պատասխանատու մեծ պաշտօնին: Ա. Ղաղարու վարչական ժողովը անշուշտ նոյն 28 տարեկան երիտասարդ քահանային վրայ տեսեր է արժանիք մը, տեսեր է տարօրի-

նակ յարմարութիւն մը, որ առանց վարանելու Ռւխտիս
այն ամենէն առաջնակարգ, և ամենէն պատուաւոր և պատ-
կանելի պաշտօնիերէն մին յանձներ է անոր : Եւ ինչ
որ լսեր ենք, չ. Ալիշան նոյն խակ իր ամենէն թեթեւ
և անփորձ, դալար հասակին մէջ, միշտ աննամն ծանրու-
թիւն մը, խոհեմութիւն մը և յարգելի վարք մ'ունեցեր
է. և իր այդ յատկութիւնները այնքան բնական համա-
րուած են, որ իրաւամբ իր փոքր հասակին սկսեալ
ցծերութիւն՝ ընդհանուր միաբանութեանս զուրգուրա-
նաց և յատուկ յարգանաց արժանացեր է:

չ. Ալիշան իր այդ ծանր պաշտօնին համար օգնական
ունէր վերոյիշեալ չ. Մանուէլ Քաջունի վարդապետն.
բաց ասաի, ուրիշ աշխատաւոր եղբայր մը, Եղ. Մտե-
փանոս Ռւմինական, որ վարժարանի մատակարարական
դործերը հոգալով, չ. Ալիշանի մեծ թիկունք կ'ըլլար.
այդ աշխատաւոր Եղբօրմէ զատ, ուրիշ Եղբայր մ'ալ, Ե.
Վարելով կ'օգնէր չ. Ալիշանի :

Վարժարանի այդ վեռահաս տեսուչը, իրեն յանձ-
նուած պաշտօնը շատ խնամքով կը կատարէ: Միեւնոյն
ատեն «Բազմավէպ» ի հիմնադիրը չ. Գ. Այվազովսկի՝
Փարիզ Մուրատեան վարժարան մեկնելով, նոյն խակ
«Բազմավէպ» ի Խմբագրութեան պաշտօնը չ. Ալիշանի
կը յանձնուի:

չ. Ալիշանի տեսչութեան օրով, վենետիկ խաղաղ վի-
ճակի մէջ չէր: 1848 մարտ 16ին գիշերը՝ վենետիկեցիք
Աւստրիոյ իշխանութենէն աղատելու համար, կը սկսին

յեղափոխական ցոյցեր. խռովութիւնը երթալով կը սաստ-
կանայ . վենետիկեցիք այդ ազգային շարժման մէջ մեծ
արիութիւն ցոյց կու տան, և քաղաքական աշխարհի առ-
ջև բաւական գովելի գիրք մը կը բռնեն, սակայն անհը-
նարին գժուարութեանց չեն կրնար գիմադրել: Աւո-
տրիացիք որ առ ժամա վենետիկեցիք ապաստիքն ըստ
տեղիք տուած էին, և վենետիկէն քաշուած, սակայն
յաղթանակի պատկը Ադրիանակի թագուհոյն վրայ իջնելու
յոյն չի կար. Աւստրիոյ նահանջեալ բանակը մինչև 1849
օդոսոս 24 կը պաշարէ զվենետիկ, թշնամոյն բանակէն
ուումբերը կը սկսին վենետիկոյ հրաշակերտ պալատներու
վրայ տարափել: չ. Ալիշան տեսնելով որ վտանգը կը
սաստկանայ, ամերոջ վարժարանի աշակերտներով մակոյէ
կը մննէ և կը գիմէ Ս. Ղազար. ճանապարհին անմիջա-
պէս մակոյէն քովը կը պայթի թշնամիէն արձակուած
ուումբ մը, սակայն անոնք ողջամբ Ս. Ղազար կը հասնին:
Քիչ ատենէն կը գագրի պատերազմը. որով չ. Ալիշան
վանքի մէջ 30 օր մնալէն յետոյ, գարձեալ աշակերտ-
ներով վարժարան կը վերագաւնայ *:

1850 օդոսոս 29ին, վերջին պարգևաբաշխութեան
հանդէսը կատարելով, աշակերտները կը լրացընեն իրենց
ուսմանց ընթացքը**:

* Իր անդրանիկ հանճարեղ աշակերտն է ծանօթ գրաբարագէտ բա-
նաստեղծ և կ. Պոլսոյ թատերական ամենէն մեծ զործիչն Արագիսն Զե-
քիմեան. որուն չ. Ալիշան՝ նախ մի քանի տարի ուսուցիչ և երկու
երեք տմիս ալ գտատիարակ եղած է:

** Կոյն ատենուան վերջին տարուան ուսումներն էին Բն աշակերտիւն.



Ա. Հերիւմեան :

Հ. Քաջունի վարդապետ պարգևաբաշխութենէն վերջը, աշակերտները հետն առած հայրենիք կը տանի. թէեւ ըստ վանական ժողովի որոշողութեան այդ պաշտօնը Հ. Ալիշանի յանձնուած էր, սակայն ընտանիքը գրեր էին կ. Պոլոէն որ առ ժամն ետ կենաց այդ ճամբորդութենէն, որով Հ. Ալիշան իր հարազատները և Հայրենիքը տեսնալու բաղդէն կը զրկուի, գուցէ առանց գուշակելու որ այդ զրկումը յաւիտենական էր:

Նոյն աշակերտները մեկնելով, վարժարանը բոլորովին թափուր կը մնայ: Պատերազմի սկիզբներն, աշակերտաց մէկ մասը ընթացքնին աւարտած ըլլալով, աշխատաւոր եղ. Ստեփան զանոնք հայրենիք տարած էր: Որով Հ. Ալիշանը իր բարձր պաշտօնէն կ'ազատի և կը մնայ վահկ:

Բնաբանութիւն, Զրաբաշխութիւն, Հրահանք հայ, իտալ, գալ, և անգլ. լեզուաց: Ֆիմիա, Գրահաշիւ, Ռւրուազրութիւն, Երաժշտութիւն: - Հ. Ալիշանի այս առաջին տեսչութեան աշակերտաց անուններն են. 1. Միքայել Երամեան, 2. Անտոն Փամպուքճեան, 3. Գէորգ Ամմուէլեան, 4. Թովմաս Եսայեան, 5. Պօղոս Գամալիկեան, 6. Տրդատ Զօհրապեան, 7. Պօղոս Ճէպէճեան, 8. Միքայել Ալարեան, 9. Պօղոս Զալճեան, 10. Գէորգ Սամանճեան, 11. Պօղիկարպոս Սարգսեան, 12. Ալբահամ Պինսոն, 13. Մատթէոս Մահմառ (Տես Բազմավէպ 1830 էջ 274):

Հ. ԱԼԻՇԱՆ Ի ՀՈՌՎՄ

Նոյն ատենները հասունեան և Հակիմասունեան ինդիքսները արծարծեր էին և նորոգուած Միսիթարայ տան նաև հատակութեան օրերն ։ Ուխտիս նոյն ժամանակուած վեհն գեր. գեորդ Հիւրմիւզ իր հետ առնելով գչայր Ալիշան 1850 սեպտ. 4ին. վենետիկէն կը մեկնի ուղեւորելով Հռովմ, և պաշտպանութիւն Ռւխտիս։ Այդ ճանապարհորդութիւնը Հ. Ալիշանին համար առաջինն էր. զայն մի փոքր տետրակի մէջ գեղեցիկ նկարագրեր է։ Կը յիշենք այն ամէն գեպեր, որ իր կենսագրութեան համար կարելի է հետաքրքրական համարուին։

Գէպի Հռովմ ուղեւորելու ատեն, ճանապարհին իւ տալիս Անդոնա քաղաքին հանդիպելով, հոն կայցելէ Ս. կիրակոս եկեղեցին, ուր կան Ս. Լիբերիոս Հայկագին սուրբ հշուարներն. կը տեսնէ Հռիփսիմեանց հայ միանձնուհեաց մենաստանը։ Նոյն ատեն այդ մենաստանը գեռ նոր կազուած էր. մենաստանին մէջ կը գտնուէին մայրապետ մը իր մօրը հետ և ուրիշ պառաւ մը։ Մայրապետն Լուցիս կ'ավաստայ որ տակաւին երկու նորը ընծայ կոյսեր ունին և անոնց թիւը բազմացընելու մեծ փափաք կը ցուցընէ։

Եարունակելով ճանապարհորդութիւնը, Սեպտեմբեր 9ին երկու մզոն հեռուէն, Հ. Ալիշան կը տեսնէ Հռովմայ Ս. Գետրոս եկեղեցւոյ գմբէթը. կը յուզուի մեծ բանա-

ստեղծը, և սիրտը կը արտփէ։ Նոյն օրը կը հասնի ի Հռովմ։ իր երեւակայութեան մէջ կ'արթնեար պատմուկան Հեթանոս և Քրիստոնեայ մեծ քաղաքը։ Զորս օր վերջը իր վեհին հետ կը ներկայանայ Ս. Պապին (Պիոս թ.)։ Ուխտիս գիտազետը կարեւոր եղած աղերսները կընէ Ս. Պապին. մի քիչ խօսակցութենէ վերջ, Ս. Քահանայապետը կը հարցնի Հարցընէ Հ. Ալիշանի անունը, զոր լոելով կը կրկնէ լէսն։

Ս. Պապին հեռանալէն վերջը նոյն օրը Ս. Վլասոյ գրչագիրները կը քննէ։ Մէկ օր վերջը իր հոգւոյն ամենէն ցանկալի մեծ հաճպիտերէն մին կը յաջողի կատարել՝ պատարագելով Ս. Գետրոսի եկեղեցին, Սուրբին գերեզմանին վրայ. կարելի է արգեօք լիսին ըմբռնել Նահապետին նոյն ատենուան յափշասկուած զգացմունքը...

Վատիկանու մէջ 40 ձեռագիր կը քննէ։ Տիեզերահաջակ Միքել Անձէլոյի՝ Մովսէսի արձանը տեսնելով, իր անձնական քննագատութեան համեմատ, գլուխը փոքր կը գտնէ, մօրոքը շատ հերձուեալ և ջրանման, լուսեղէն եղջերները շատ եղջերանման։ Անտարակցյա բանաստեղծ Հ. Ալիշան իր երեւակայութեան առջեւնապէս պատկրացուցած է Սինայ լեռնէն շատուածային պատգամախօս մեծ մարգարէին նկարը, գործ հաւասար չէր գըտնար նոյն քաջածեան արձանագործի հրաշակերտին։ Կը գիտէ Հրէից աստուածային պատուհան ինքնաւ կալի նշանաւոր բաղնիքները և մայրասպան Ներսի պալտու, որուն սենեկաց ձեզունի նուրբ նկարներուն վրայ կը զմնյլի։ Կը բարձրանայ Ս. Գետրոս մայր եկեղեցւոյ

գմբեթը, կը մնոնէ անոր խնձորին մէջ, միաքը դրած էր հրաշալիք մը տեսնել, սակայն անոր բնաւ չհաւնիր։ Ա. Պետրոսի մատենադարանի նկարներու և հնութեանց վլրայ կը սքանչանայ, հոն կը գտնէ Ռոկեբերանի պատկեր մը. վլխուն վրայ հայերէն այրուրեն դրուած. իսկ ձեռքը բոնած պլրակին վրայ չայր մեր որ յերկինս դրութիւնը։ Զատոնք տեսնելէն յետոյ միեւնոյն օրը երեկոյեան իր վեհին հետ Լիբանանու հարց գործակալին այցելութեան կ'եթան։ Խոսակցութեան միջոց Ալիբանանցի վարդապետը կը համարձակի ներսիսապաշտ չ. Ալիշանի ըսել, որ Լամբրոնացին Ս. Ներսէու չերետիկուաց գլուխն է և ոչ սուրբ. պատարագի մեկնութիւնը լի է հերետիկոսութեամբ, և այս պատճառաւ զայն Հռովմայ Ծաւալոցին մտաներ են։ Ապշեցուցիչ և խիստ անարդական յանդգնութիւն մըն էր չայ. Եկեղեցւոյ հրեշտակային վարդապետի մասին այսպիսի զրպարտութիւն մը. չ. Ալիշան որ զմայլած էր նոյն սրբագոյն վարդապետի սերովքական վարուց և աստուածային հոգեզմայլ երկասիրութեանց վրայ, մանաւանդ «Պատարագի մեկնութեան», կը սարսի, թէ մի՛ գուցէ երկնային շանթմը գայ հրկիզէ այդ անհանդուրժելի լեզուն. նա վերջապէս իր սուրբ վրէժինդրութիւնը չի կարենալով զսպել, համեստութեամբ կը պատճառաբանէ. — Եթէ Լամբրոնացին Սուրբ չէ, այն ատեն ով պիտի կընայ արքայութիւն մտնել, մի միայն վարքը շօշափելի վկայ է իր սրբութեան։ Սուրբին «Պատարագի մեկնութեան» համար չ. Ալիշան կը հարցընէ. «Հարցաք թէ իցէ նորա ընթերցեալ՝

ասէ ոչ, և ոչ իսկ գիտէր թէ ծանօթութեամբ տպագրեալ է մեր, թերահաւատէր և ընդ Օձնեցին, և յասել մերում թէ արդարացոյց զնա սրբագրութեանն ատեան, թերահաւատէր և ընդ թարգմանութիւն գործոցն, զոր հարազատ լինել երդուեալ էին հակառակորդքմեր... Ծնդ որ առաւել արտմեցայ ընդ նախատինս Ալբրդոյն քան բարկացայ, այլ և յուսամ ի Տէր, զի նոցին բարեխօսութեամբ ողորմեցի և մեզ։ Այս երկու առղերն ըաւական են ցոյց տալու, թէ չ. Ալիշան ինչպիսի՛ ներոզամիտ բնաւորութեան տէր անձ մ'էր. ներոզամիտ նոյն իսկ իր այն վառ երիտասարդական եռուն զեռուն վիճակին մէջ. սուրբ վրէժինդրութիւնը իր մէջ նոյն ատեն ըմբոսացած էր, սակայն նա քաջ էր իշխելու իր կրից վրայ. թէեւ կիրքը պարագային համեմատ, իրաւացի էր, օրինաւոր էր և արդար. Նա կը տեսնէ իր չայ պաշտպան սուրբերէն սրտին ամենէն սիրելիին, ահոելի տգիւտութեամբ ամրաստանուիլն, զրպարտուիլն. սակայն նա չի բարկանար, այլ կը տրամի. և այդ արտմութիւնն ալ կարծես յանցանք համարելով, կը ինդրէ որ նախասուած Սիրելին և Սուրբն Լամբրոնացի, երկինքէն բարեխօսըլլայ իրեն և թաղութիւն խնդրէ այդ սուրբ վրէժիընդրութեան... Մենք նպատակ չունինք ծանրանալու Լիբանացին այն աեսակ քաղաքավարութեան վրայ. գա նոյն ժամանակուան համար անծանօթ և նորանշան ագիտութիւն մը չէր...

Լատինացիք զմերս Լամբրոնացի Ներսէու կոչած էին երկրորդ Պօղոս Տարսոսնեան և չայր Ալիշան նոյն սուր-

բին նախատման երկրորդ օրը, առաջին ջարսոնեան Պօզուի նահատակութեան վայրի այցելելով, բուժում կը խնդրէ ազդիս հիւանդ ու տարանջատ մոքերու։ Մեծ և ճարտարախօս առաքելոյն հոյակապ հին տաճարը 1823ին դժոխային հրդեհի խաղառ ճարակ եղած էր. Հ. Ալիշան նոյն առեն կը տեսնէ նորը լրանալու մօտ, որոն ճարտարապետութեան, սեանց և մօղայիքներու ճոխութեան վրայ կը սքանչանայ. Պատմոքանի և աշխարհագէտի հետաքրքրութեամբ կը գիտէ՝ պատանի հասակաց յոյժ համակրելի Ս. Ալեքսինոսի տունը. և մաքրաշնորհ օրինրդաց ուշագրաւ վեստեան կուսանաց բոլորակ սիւնաշար տաճարը։ Քրիստոսական հոգւայ վառարան Հ. Ալիշան, մեծ եռանդով կը գիտէ գէպ ի Ս. Սեբաստիանոսի գետնագամիանները, ուր նախկին քրիստոնեաները գոզունի կը պաշտէին մեծ ֆրկելը և հեթանոս արիւնուուշտ կայսերաց Ակող գաղանային հարուածներու փոխորկին տակ, կը պատրաստէին, կը կազմակերպէին Քրիստոնէական կրօնքը։ Սակայն Ս. Պապի երեսվոխանը կնքած էր անոնց գոները, արդիլուած էր այցելութիւնը* սրտարեկ կը հեռանայ և քայլերն ուղղելով գէպ ի Ապակեան ճանապարհը, կը զննէ վաղեմի բոլորակ դամբան մը, որ ունէր իր պատմական յիշատակները. Մեծ անուաննեալ Կրտսոսի կնոջ Կիկիլիայ Մետիլլայ շիրիմն էր այն։ Կրտսոսի անունը անշուշտ յիշեցուց իրեն նոյն հարուստ ու ագահ

* Բայց վերջապէս Հռովմէն գեռ չէտրածած. մի օր Լատինական դռնէն դուռը զանուած բաց գետնագամբաններուն մէջ կը մտնէ, և ժամերով, վաղեմի քերեղմանները կը զննէ։

Հռովմէական հռչակաւոր հիւպատին Հայոցս հետ ունեցած յարաբերութիւնն, և աճեղազօր Տիգրանայ բանակին մէջ անոր աստուածապատուհաս սատակումը. գա այն լատին հիւպատին էր, որ երդմնազանցութեամբ մտաւ Երուսաղեմայ տաճարը, մօտեցաւ որբութեան սրբոցին և կողոպտեց վերցուց ութ հազար քանիքար սոկի։ Հ. Ալիշան ի յիշատակ այս պատմական գիպուածոց, վերոյիշեալ շիրմէն կտոր մը փրցընելով, գրանը կը զնէ։ Միեւնոյն կողմերը ուշագրութեամբ կը զննէ խրոխա Հռովմէական վեհապետաց ապարանից աւերակները, որոնք ժամանակին Հայաստանի գանձերու աւարով զարդարուած էին. իսկ այժմ տատասկներով և գրաստներու բուտերով գոցուած ու ծեփուած... Sic transit gloria mundi!

Ապակեան ճանապարհի վրայ կը շարունակէ իր հետաքրքրական այցելութիւնները. զմայլելով կանգ կ'առնէ փոքրիկ եկեղեցիի մը առջեւ, որուն վրայ կը կարդայ Quo vadis Domine* աւանդական խիստ նշանաւոր վերտառութիւնը. կը մտնէ նոյն փոքր տաճարին մէջ, ուր կը տեսնէ այն քարը, որուն վրայ Յիսուս սոքը գրած էր, կ'առնու տնոր պատկերը և սոնենիշ տեղէն քարին վաշին։

* Ըստ աւանդութեան՝ կը համարուի թէ Պետրոս առաքեալ երբքիստոնէից յորդուով ներոնի ձեռքէն ազատելու համար Հռովմէն կը հեռանար, զբրիստոս կը տեսնէ որ խաչը ուսը առած գէպի Հռովմէ կ'երթայ։ Առաքեալը կը հարցընէ. Յո՞ւ երրաս Տէր Quo vadis Domine. Յիսուս կը պատասխանէ Նորէն խացուելու կ'երրամ։ Այն առեն Ս. Առաքեալը կը հասկնայ որ Տէրոջ կամքն էր նահատակութենէ խոյս չի տալ։ Որով Հռովմէ կը մտնէ ու կը խաչուի։ Տէսիլք տեղը կը շինուի մը նոյն յիշեալ վերտառութեամբ։

Յանորդ օրը Վատիկանու մատենագարանն այցելելով կը գտնէ 13 հատ հայկական ընտիր գրչագիրներ, որոնց յիշատակարանները կ'ընդօրինակէ:



Առաջի վարժարան (Պալատ Գևեռքիոյ) ի Վենետիկի:

Կը մոնայ Օգոստոսի տիեզերահոչակ ինքնակալի պատառը, այն ալ աւերակ էր, միայն մի քանի կամարակապ աղիւսէ վլած որմեր մնացեր էին: Պարծենկոտ ինքնակալը մահուան ժամանակ կ'ըսէր, թէ իր թագաւորելէն



Հ. Արքահամ Ճարկեան:

առաջ Հոսմը աղիւսէ շենքերով գտած էր, այժմ մասհուան ժամանակ, զայն կը թողու մարմարէ քարերով պճնազարդած։ բայց Նահապեալ միայն աղիւս կը տեսնէր նոյն խկ փառապանձ կայսեր պալատան մէջ . . .

Հ. Ալիշան մի քանի ամսուան մէջ Հոսվմայ դրեթէ ամէն նշանաւոր մանաւանդ պատմական հնութեամբ ծառնօթ տեղերը կ'այցելէ։ Հետաքրքրութեամբ ամէն դրչագիր մատենագարաններու մէջ կը վինտէ կը դտնէ հայ ձեռագիրներ։

Հոսվմ երկար ատեն չի մնար. հարկ կ'ըլլայ որ մի քանի ամիսէն վենետիկ գտանայ: Վեհն կը յայսնէ որ Ռաֆայէլեան վարժարանը բացուելու համար Հ. Ալիշան Ճարեան կ. Պոլսէն տասնըհինդ աղայ հետն առած վենետիկ կուգայ, և որպէս զի վարժարանական ընթացքը կանոնաւոր կերպով սկսի, Հ. Ալիշանի վերադարձը անհրաժեշտ կը դատավի. շուտով պատրաստութիւն տեսնելով, կ'ելլէ Հոսվմէն և հոկտ. 15ին վենետիկ կը հասնի. և ուղղակի կ'երթայ նոր վարժարանը՝ Զենորիոյ անուն պալտառը՝ որ առժամանակեայ վարձուած էր և դեռ նոր Հ. Ճարեան եր բերած աշակերտաներով հոն հաստատուած էր*: Վար-

* Հ. Ճարեան կ. Պոլսէն երբ աշակերտաները կը բերէ, շուտով ըստ հրամանի վեհն և խորհրդակցութեամբ վարչական ժողովոյն, կը բանայ Ռաֆայէլեան վարժարանը, Վեհն վենետիկ չքանուելով, բացման հանդիպութեամբ 21ին առաւոտը եր դրան երեցներով վարժարան կ'երթայ, բայց ման հանդիպութեամբ ներկայ կ'ըլլան վանքիս միաբանները և քաղաքէն երեցնեցական և պաշտօնական նշանաւոր անձեր և բարեկամ-

ժարանիս մէջ Հ. Ալիշան այս անգամ մեծ պատասխանատուութիւն մը չունէր. իր եռանդուն ուսուցչական պաշտօնին հաւատարիմ միալով, ժամանակ կը գտնէր գրական գործեր պատրաստելու:

Հաղորդուին նորեկ աշակերտաները: Պատարագէն յետոյ խաչի շարականներ երգելով, Ծիրանաւորը կենաց վայտով օրհնութիւն կու տայ: Կրօնական արարողութիւնները լինալէն վերջը, հանդիսականք կը հաւաքուին վարժարանի գեղեցիկ դահճին մէջ ուր Ծիրանաւորը սրտառուէ խօսքերով հայ վարժարանին գովելի նպատակը և կրօնաւոր դաստիարակաց եռանդուն գործը: Երկրորդ օրը կը սկսի դասաւանդութիւնը: Դպրոցի վարիչն կ'ըլլայ Հ. Ալիշան Ճարեան, իսկ Հ. Ալիշան առ ժաման հան կը մնայ երբեք ուսուցիչ և աշակեց եր դասընկեր տեսուչ վարդապետին: Այս կերպով Հ. Ալիշան նորահաստատ Ռաֆ. վարժարանի անդրանիկ և հին վարժարանի չորրորդ տեսուչ կ'ըլլայ:

Հ. ԱԼԻՇԱՆ Ի ՄԱՆԹՈՒԱ

Յաջորդ տարին 1854 հոկտ. 8ին, իստալիոյ մէջ վաքրիկ ճամբորգութիւն մը կ'ընէ, կ'երթոյ Մանթուա. մի միայն այն նպատակաւ, որ հոն տեղեկութիւն առնու Ս. Սիմէոֆն Հայկազնի մասին։

Ճամբորգութեան երկրորդ օրը Մանթուա կը հասնի; ուր Մայր եկեղեցւոյ կանոնիկոսէն Ս. Սիմէոֆն Հայկազնի մասին գլքեր գտնալով, Սուրբին վրայ կարեւոր տեղեկութիւններ կը քաղէ։ Հասարակաց գրատան մէջ ուր կան 4800 գլքեր, 1000 ձեռագիրներ, կը փնտոէ Հայկազն Ս. Սիմէոֆնի գրուածք մը, բայց չի գտնար. միայն լատին գլշագրաց մէջ Ուկը. Արմաքանոսի Հայոց մոլորութեանց վրայ ճառած ձեռագիր մատեանն կը գտնէ։ Հ. Ալիշան այս գիրքը ուրիշ շատ մատենագարանաց մէջ փնտուած էր բայց չէր գտած, գրապետէն կը ինդրէ որ եր ծախքով օրինակէ այդ գլշագիրը. առկէ զատ Հայոց վերաբերեալ ուրիշ ձեռագիր չի գտնար. – Հոկտ. 10 ին Մանթուայէն 12 մկնն հեռաւորութեամբ Ս. Բենեդիկտոս աւանն կ'ուղեւորի. հոն կը գտնէ Ս. Բենեդիկտոսի և Ս. Հայկազն Սիմէոֆնի տաճարը. մեծ զմայլանքով կը գիտէ Հայ Սուրբին նուիրական խորանը. թողունք որ ինքն Հ. Ալիշան իր չքնար գիւտը պատմէ. «և որպէս յանկարծոյն ի հաճոյական յապուշ կը թեալ կառչէի, անդէն և անդ տեսանելով ճշգրիտ հայեցի կերպարանո յանդրի»

Հողագործ ի պատկեր Սրբոյն կանգնեալ յաջմէ սեղանոյն, արտաքոյ մատրանն, այր ճգնաւոր, կարճ հասակաւ, մեծագլուխ և լայնաճակատ, բոլորագէմ, զուարիւերես, հերձամօրուս, զգեցեալ պարեգօտ և վերարկու, և վեղար հայկական զկէս գլխոյն ծածկելով, աջողիւ հանգրիճելով զվերարկուն, և ի վերայ բազկին՝ մատեան ազօթիցն, իսկ ձախուն գրկելով զեղջերուն կանգուն։ Թէպէտ և առ յետին նորոգութեամբ տաճարին առ Յուղեաւ թուէր շինեալ անդրին, այլ առանց երկելով համարաց Սիմէոֆնի. ոչ գիտեմ թէ կայցէ արդեօք ընդ նոսին և այլ ինչ յիշատակ ի նմանէ, կամ խորդ կամ գրուած. զի որմնեալ փակեալ է սեղանն, և չգիտէ ոք ինչ զայսմանէ, և քակել ինձ զնոյն անմարթ էր. և էր գրեալ ի վերայ սեղանոյն լատին գրով.

SIMEONI. MONACO
PATERONO CAELESTI
SOSPITATORI
SODALES. SUI

այսինքն է. «Սիմէոֆնի Միանձին Երկնաւորն Պաշտպանի Արագահասի Զավոզք իւր»։ Անդ արժանի եղեալ իմ մատուցանել զաստուածային պատարագն ի վերայ սեղանոյ Սրբոյն, արժանի լինէի ապա և զանդին գանկ

գլխոյ նորին, որ անթերի և անարատ պահէր անդ յոսկեզօծ լավտերաձև տփի՝ յ835 ամաց հետէ, և գդուել և համբուրել, և իմով ձեռամբ՝ օդնութեամբ աւագերիցուն՝ հատանել մասն յոսկերաց ծոծրակին, բաղում ջանիւ, զի կարի կուռ և ամուռ էին ոսկերքն և բժիշք դանակաց, աքցանաւ կարօտեալք ի հատանել զնըշխարն»*:

Հայ Սուրբի հրաշագործ նշխարն առնելով, կը վութայ Մանթուա. մատենադարաններու մէջ նոյն Սուրբին վրայ լատիներէն մի քանի գրութիւններ կը գտնայ: Հ. Ալիշան այլ ևս իր նողատակին հասած էր. առանց հոն ուշանալու կը դիմէ իր պաշտօնավայրը ի վենետիկ:

* Հմբաւ. Բաղմավէպ 1884 էջ 10:

Հ. ԱԼԻՇԱՆ Ի ԼՈՒՏՐԱ.

1854 դեկտ. 5ին, միաբանութեանս վարչական ժողովը կ'որոշէ որ նա փութայ դէպ ի Լոնտրա ուր կատարելու կարեւոր գործ կար: Ուափայէլեան վարժարանի համար էր այդ գործը. այդ վարժարանը վենետիկյ մէջ երբ կը հաստատուի, կը վարձեն ֆեզարօ անուն գեղեցիկ պալատը*, ոակայն նա աշակերտաց համար պարտէզ չունենալուն և տան տէրը ամէն տարի տան վարձքը բարձրացնելուն համար, կ'որոշեն իսպառ զայն թողուլ և ուրիշ շէնք մը գտնել. ինչպէս վերը յիշեցինք, կը գտնան Զենորիոյ շէնքը: Վահիքիս վարչութիւնը յօդուտ այն կրթական հաստատութեան կ'որոշէ որ նոյն շէնքը փոխանակ ամէն տարի վարձելու, դնէ. և այս որոշողութեան համար կարեւոր էր բաւական գրամ զոր ձեռք բերելու նպատակաւ Հ. Ալիշան 1852 Յունուար 18ին կ'ուզեւորի Լոնտրա. հոն վարժարանիս բարերարաց զարմէն Պ. Լուվիլի Փաստաբանի աջակցութեամբ, դրամականատան մէջ եղած Ուափայէլի ստակէն կը հանէ 125 000 ֆրանք: Այս տոթիւ իր կատարած ուզեւորութիւնը բաւական հետաքրքրական ըլլալով, զայն համառօտակի կը յիշենք:

* Այս պալատը տասը տարուան համար վարձուած էր. երբ տասը տարին լրացաւ, տան տէրը կ'ուզէր պալատը 200,000 ֆրանքի վաճառել:

Ճանապարհին կ'այցելէ զեննայի գրչագրաց մատենաւուարանը. կը տեսնուի գիւանապետ կոմի Այլիսէնֆէլտի հետ և իր միջոցով մի քանի հայ գրչագրաց յիշատակարանները կ'ընդօրինակէ: Հոն կը գտնէ նաև Սարգիս Հէճնցոյ Աստուածաշունչ մատենից բաղդատութեան ձեռագիրն*: Կ'այցելէ զեննական Միխթարեան հարց վաճար, որոնց թանգարանը ճոխ կը գտնէ և ի կարգի: Հոն Հ. Սիպիլեանի հետ Ռուբինեան գրամոց մասին երկար կը խօսի:


Վեննա երկար չի մնար, կը փութայ իր նպատակին. Երկու օրէն կը հասնի ի Պետին, ուր մուերմութեամբ Փէղերմանի հետ երկու օր կ'անցընէ. Մ. Խորենացւոյ մասին կը վիճէ. մատենադարանին մէջ կը գտնէ 40 հայ գրչագիրներ, գրամներու թանգարանի մէջ 45 ռուբինեան գրամներ մի արձաթէ գրամ 8իգրանայ և երկու Միհըրդատայ, և այլ պղնձէ Հայ գրամներ: Փէղերմանի տան

*Հ. Յ. Տաշեանի գրչագրաց ցուցակը մանրամասն կը խօսի այս գրչագրին վրայ: Ճակատը կը կրէ հետեւեալ գրութիւնը, զոր կ'ընդօւննակէնք յեւեալ ցանկէն. «Եղեւ յամի Տեսան 1773: Զաստուածաւունչն ապագրեցեալ ի Միհրար աբբայէն համեմատեցի ընդ գրչայ աստոռածալնից, որք էին ի գրչատան սրբոց Յակոբեանց ի սուրբ Քաղաք Երուսաղէմ, եւ որ ինչ անհամեմատ, կամ աւելի պակաս գտանցաւ ի գրչայսն զլիսովն եւ համարովն աստ ժաղովեցի: Իսկ զինի բառիցն եղեւալ հայերէն թիւքն ցուցանեն զթիւս աստուածաշընչն թէ ի քանիս տեսեալ եմք նոյնպէս: Համեեցի Սարգիս արեկան Աստուածաշունչի մասին, գաղափար կուտան այդ բաղդատաւաւելութէ կը համարինք: Գոհացուցիչ տեղեկութեանց ցանկացովք, կառակ ին զիմել վերոյիշեալ ցուցակին:

մէջ գրչագրաց յիշատակուրաններ կ'ընդօրինակէ: Խորենացւոյ Ա. Գիրքը կը բաղդատէ Լայրցիկեան օրինակի հետ: Կ'աճապարէ կը փութայ գէպ ի Լոնտոն, ուր Հ. Ալիշան վարժարանական այդ տաղտկալի գործին մէջ, նոյն խոկ հայ գրչագիրներ գտնալու հետամուտ կ'ըլլայ: Իր բնաւորութիւնն էր, ուր որ երթար հայ սուրբի մը խորան, հայ վանատուն մը կամ նախնեաց ձեռագիրներ վնտուել: Լոնտոնի մէջ ալ կը յաջողի գտնալ մի քանի ձեռագիրներ: Քէմպրիճի համալսարանի գրչագիրները քննելով, կը գտնայ երեք հայ աննշան ձեռագիրներ, Սազմոս մը, Պարզատօմնոր մը և Տաղարան կամ Սարկաւագատեատր մը, երեքն ալ հնութիւն չունէին. Երրորդէն կ'ընդօրինակէ Թէաթինաց կարգէն կղեմայ վարդագետի* Ամենասուրբ Երրորդութեան վրայ զրած սասմաւորը: Կիրտոն գիւղի վարժարանի մը ձեռագրաց ցանկն պրապելով, արար գրոց բաժնին մէջ կը գտնէ անթուական հնագիր հայ Սազմոս մը: Լոնտոնի գիւղերու մասին յափշտակուած կը խօսի. գեղջկական տեսարանները իր բանաստեղծ եւ րկակայութեան շատ հաճելի ու սիրելի եղած են, միայն միայնութիւնը իր անբիծ զուարձութեան ներգաշնակութիւնը կը կոտրէ: Բնկերութեան մէջ Հ. Ալիշան մենաւութիւնը կը կուրք: Կամ կը կուրք: Կը նեզուէր միայնը էր, բայց ընկերութիւնէն գուրս, կը նեզուէր միայնութենէ, և իր այդ նեզութիւնը փարասելու համար,

* Այս ոչ անձանօթ հայագէտ փամօզօ վարդագետի մասին կան յիշատակութիւնք Հ. Տաշեանի գրչագրաց ցուցակին մէջ (էջ 112): Լիուլի տեղեկութիւնք տես Հայ. Պատմութիւն Հ. Զամշեանի. Պ. էջ 622. և լէօ Հայ. Տպագր. էջ 128-145:

շարունակ իր քմաց ախորժելի դերք մը կը կարդար։
Լոնտոնի միայնութեան մէջ իր ընկերութիւնն էր ա-
մերիկեան քնարերգութիւններու ընթերցումը։ Նու իր
վառ ու դալար երեակայութեամբ բնութեան գրաւիչ
տեսարաններուն հետ կը մտերմանար, անոնց մունջ լե-
զուէն կը հասկընար, և օդային երաժիշտները որ իրենց
սուր շրթունքներու մեղեդիով զեփիւոի մրմունջներուն
հետ միացած՝ բունաստեղծի երեակայութիւնը կը յու-
զեն, նոյն երաժիշտներէն մին հոն, ի լոնտոն կը խան-
դարէ Նահապետին ընթերցումը։ կը գրէ Հ. Ալիշան,
«Եւ ահա թռչուն մի ի ծառոյն որ հանդիպոյ՝ սկսու ձայն
մի հակիրճ կրկնել իբր ու ի ձայնաւոր տառիւք և ն ա-
աւարտմամբ և անդադար զնոյն յեղյեղէր, և իմ հա-
շուեալ ժամացուցաւ գտի՝ զի 34 անդամ կրկնէր ի
վայրկենի, և կրկնեաց 26 վայրկեան, այլ փոքր մի յամը
զյետին վայրկեանսն, մինչև յանցանել կառաց՝ լռեաց.
պարզ ձայն, այլ ընդ անդադար կրկնեն սիրանայի, և
կամէի գիտել թէ զի՞նչ խնդրէ, զի իբր հազար անդամ
զնոյն կրկնէր, և իմ ծանրացեալ սիրտս թեթևացաւ»։
Հ. Ալիշան թողլով Ամերիկեան քնարերգութիւններն, կը
սիրանայ այն նոր երաժշտի միօրինակ երգերուն վրայ։
Քրիստոս անուն վարժարանի պարտէզէն, Միկտոնի տըն-
կած թթենիի ծառէն ի յիշատակ կը փրցընէ երկու տերե-
ու կը պահէ. և մեծ բանաստեղծը երկու տերեիով անդղիացի
մեծ բանաստեղծի յիշատակը անմուռաց կը յարգէր։ Կոյր
բանաստեղծին թթենիներէն հեռանալուն՝ իրեն տարօ-
րինակ անակնկալ դէպք մը կը պատահի. ճանապարհին



Հ. Ալիշան ի լոնտոն աշխարհական տարազով։

միայնակ գտնուած ատեն, իրեն կը մօտենայ անծանօթ անձ մը, քաղաքավարութեամբ ընկերանալով, իրեն կ'իւ մացընէ որ ինքը Մասոններու ընկերութենէն է, և թէ պատրաստ է իրեն օգնելու, եթէ իր ընկերութենէն ըլլար։ Հ. Ալիշանի պէս սրբակաց կրօնաւորը՝ առանց այլայլելու կը պատասխանէ, որ ինքը ունի իր միաբանութեան գլուխը և իր յատուկ կրօնաւորական ընկերութիւնը։ Նոյն ճանապարհորդութեան ատեն Հ. Ալիշան արտաքսապէս եկեղեցական մը կամ կրօնաւոր մը չէր երենար, վասն զի աշխարհական զգեստով էր, թողոցած էր սկ կարճ մօրուք մը. այս կերպարանքը միամիտ մասնը յուսալիր պատրանքի մէջ կը դլորոշէ! capitom- եօն կատարեալ էր...

Հ. Ալիշան կը շարունակէ լոնտոնի մէջ իր պատոյտը. Բարհամ Բարք դղեակի ձեռագրաց մէջ կը գտնայ տասը հատ հայ գրչագիրներ, զոր հետաքրքրութեամբ կը քննէ. Դղեակին վաղեմի ծառերուն տակ քերթողական տողերով կը նկարագրէ իր այդ այցելած պատմական վայրը. Նա կ'երգէ.

Աղնիւ ի զարմ եւ ի սիրու, — քան զոր չիք զուն — բարեկամ՝
Ըղսեաւ քողով նըժեհիս երբեմ արկեալ սոկեամ,
Խշանմակերպ յօրինաց յանկարծ ըզկեան իմ խըրթին,
Ի խուն խըզէս ի Պարհամ մուծեալ զըզեակ մհծ եւ չին.
Ի վայր սիրուն, ուր բնութեան ճարտարավետեալ նուրբ դործեաւ,
Յիշատակը բազմագէմք ճեմին ընդ լայն հովանեաւ.
Զէնք դիւցաղանց դահլըն՝ աղդեն ըզփառ եւ կորանս,
Եւ հընութիւն՝ նուիրական ինձ յարշարէր ըզսահմանս:
Որպէս կուսան մի հըսկաց սըփուալ զօթոց զիրուտար
Տարածանէ զգեղանիստ սա զիրս հաղար արտավար,

Բըլուրք եւ դաշտք եւ հովիտաք ի ամա նկեալ խառն եւ լըճակք ջանազանեն լոգեզոյն գեղեցկագոյն եւս որակ. Ամեն փիճիր ընդ կաղնեաց հինաւուրց, շնձք թաւոսունք, Պօղանըսիկ սոխակաց պատգամատեցք հովասունք. Են են աստ թառք մուսայից եւ քերգողաց պիտարանք, Բանասիրաց հովանիք եւ սիրելեաց ճեմարանք. Ճամարձակ է տեղիս ու անբան որդւոց ըընութեան. Արօտականք բազմերամք պէս պէս ըբջեալ ձեմ գընան. Սիզաճարակ աստ նախիր հայթհայթէ կաթն անուշակ. Մատըսուակել ի սեղանն աստօտին հեշտ ճաշակ. Կայտուէ զուարակն ի մարմանէ՝ շարժեալ աղի ապիսեան. Անձկաւ ըստեանց մայրենեաց գընան գաւինք հեղաձայն, Վաղեն պառակիք եղջերուաց աճիւնաձիւղ բարձեալ սար, Մերձին զուարթունք, հեռանան զարհուրանաց հաւասար. Յեղակարծուց ի խարձէն կանքնէ զականչ նապաստակ, Եւ յըստուերաց խոկ խեթկեալ մինի՝ խըշտին փախըստեակ. Խառն ընդ գասակ քառունեայց՝ աստ ճարպին փետրաւորք, Ընդ հաւուց ընտանեաց գոն սիրամարդ թաղաւորք. Գրախտին եւ իմ հայրենի գետափանց հիւր՝ փանան հաւք, Ասզք բուզիւեակք եւ նազողք արծաթ ալեաց՝ ուէք կարտաք:

Ընդ աղք աղք կենդանեաց հայեցեալ՝ նոր ըզգամ կեանս, Եւ նորանորս ինձ ածէ հանոյ՝ փոփոխ մէն վայրկեանս: Ի մենաւոր գարակիս նըստեալ մենիկ հաշտակիր՝ Յարձակավայրը խաղաղ հեղիկ շարժեալ աշաց ծիր. Հովիտ տարած ընդ գարիւս ակսուարեկ անդ կանաչ, Մայրը եւ պուրակը մերձ ընդ մերձ ինձ եւանեն ընդ առաջ. Հարթածաւալ ագրարակ՝ զոր սափրեաց սուր գերանլի, Եւ ալէնէ ի զնիիւս շըթիւալ խարտեալ զէսք անդի, Ընդ մէջ ոստոց՝ ժածանին արծաթեղյն մըկանունք, Որովէս անձայն մի կիթառ, թէ՛ւ հանապազ թըթթըսունք, Խոկ յայն կուսէ սեւակերպ ժառաստանին՝ չին չոսի՛, Պէս մահարձանք ի լերինս սըփուեալը՝ աչաց նըկարի՛... Ո՛չ, մարդիկ բազմակիրը խաղան շարժին անդ անդուէ, Եւ ճիկ մի ոչ ժամանէ նըկասովիս ինձ զանխուէ, Արտին զինեւ զաշտամած կաղնոյ կողերըս կայտառ, Զորով գարուն ինձ հարիւր է նոդելուզեալ ձորձ պայժառ. Զեր տակուին ծովակալ նորմանդին սաստ եղեալ աստ:

Մինչ երկրագրաւ ընդամէք ի հող՝ արմատ սորին հաստ.
Ազդս երեսուն ետես սա ՚նդ տերեւս տապաստ ի յերկիր,
Եւ տակաւին պանդբխատիս հովանանայ ինքըն ժիր:..
Ա՛հ, պայազատ երկիր մարդ, զի՞նչ քան ըդքեզ անհաստատ.
Փոփէին ազգը, պետովթինք, եւ կայ ՚նշարժ ծառ հաստարմատ.
Հրոսակը հիւսիսոյ հոգին ի մասսա արեւու,
Սընդեպակիցն եղենեայց՝ լինի ալեաց սանձարկու.
Եւ ծովակոծ մօրափանց մանկունք գարեալ տարագէմն
ի մէջնիրկեայն ագարակ ձրդեն արօր յամրաճեմ:..
Յայս անլաճմռնս ելի, լետանըն հուպ՝ դիտել համարձակ:
Ո՛հ, երկնածոր սիւդ քարձանց, ով շորջ սահմանք ընդարձակ...
Այլ ո՞ն, զի՞նչ անդր ի վայր... չիցն ծովու այն ալիք.
Չիցն եւ յայնկոյս ծովուն իմ հեռացեալ հայրենիք...
Ա՛հ, ըզծով տեսի ես, եւ ծորեաց սիրս ի ծոցիս,
Դանեայ դիս նըժգեհ եւ յիշեցի զայրենիս ..
Բարեաւ մընաք Պարհամայ բարձք եւ բաստք գուր երջանիկ:
Դանամ երթամ ես հանգչել ի հայրենին իմ խըզիկ:

Բանաստեղծ Նահապետը իր այս վսեմ քերթողական
տողերուն մէջ, նկարագրելով Պարհամ դղեակը, ցոյց
կու տայ, որ իրեն համար ոչինչ է հոն գտած ու տեսած
գրախտանման բնական ու արհեստական պերճութիւնը.
Նա կ'երազէ Հայրենիք, իր ազգատին պարզուկ խղիկը...

Հեռանալով բանաստեղծի քնարն ու սիրուը յուզող
դղեակին, նա դարձեալ, իր ուղեւորութեան լուն նպաւ-
տակին կը զբաղի, նա ատոր համար անդադար կ'աշխատի,
կը նեղուի, և այդ պատճառաւ նոյն իսկ կը հիւանդանայ և
սաստիկ ջերմ հիւանդութեամբ մի քանի օր անկողին կը
մնայ. կը հիւծի, ուժաթափ կ'ըլլայ. իր որտնեղութիւնը
ալ աւելի կը սաստկանայ, երբ այդ դործին կարգագիր
անձինք, իսնդիրը միշտ կը յետաձգեն, և իրեն որոշ պա-
տուխան մը չեն տար: Նա արդէն իսկ խղիկէն գուրու

ելած՝ թափառական պայյատովը, և գրասեղանէն հեռանա-
լովն, կը տանջուէր, մանաւանդ երբ իր առջև կը տեսնէ
անտարբեր, և գործը կնճուստող անձեր: Հ. Ալիշան իր
այդ տաղտուկը և մաղձոտ վիճակը կը ջանայ փարատել՝
քերթուածներ գրելով և ուրիշ բանաստեղծական գրքեր
կարդալով և թարգմանելով. այդ իր պանդխտութեան
օրերուն մէջ թարգմանած է ի Լոնտոն սիրելի բանա-
ստեղծ Lord Byronի «Childe Harold's Pilgrimage» գրաւիչ
քերթութիւնը*:

Օգսֆորդի մատենագարանին մէջ կը գտնէ 18 հայ
գրչագիրներ. Պոտլէյեանի մէջ կ'օրինակէ հայ գրչագիր-
ներ: Օգոստոս 5ին վենեակոյ վարժարանի գրամական
խնդիրը յաջողութեամբ գլուխ հաներով, այլ ես ի Լոն-
տորա երկար չի մնար. նոյն ամսոյն վերջին օրը կը մեկնի
դէպի Փարիզ: Ընթերցողը կընայ գուշակել որ, Հ. Ա-

* Այդ թարգմանութեան յառաջաբանին մէջ կը գրէ. «Ոչ ընդ
նշանաւորս միայն քերթողաց գալուս, այլ եւ առաջին ի նոսին
վկայեալ է ի յուլից գիտնոց՝ Պայրըն Անգլիացի, զորոյ ճաշակս
քերդուածոց մատուցաք երբեմն մերազնեացս ի ծավկաքազս ուրեք,
իսկ այժմ ընձայեմք զընտրեագոյն մասն համուէն գոսւածոց նորին,
որ է յետին կամ Զորլորդ երդ անուանեալ քերդութեան Պանդխտու-
րիւն Հարոլդայ Ասպետի... մերս իսկ նժդեհութիւն ի հայրենիս անդը
քերդովին, ուր առաւել քան զյօժարութիւն յամեալ, զտաղտուի օ-
տարտքեանս այսպիսեաւ իմն կամեցայ ակովիել կամ տանջել՝ ոչ
զիւրաթափ թարգմանութեամբ. սոյնպիսի իմն հնարա հնարեալ եւ
հեղինակին երբեմն՝ արկանէր զանձն ի փոք և ի տուժ ուսանել
զմերս հայերէն գժուարագիւտ բարբառ, ի մերսւմ իսկ զրունս վա-
նաց »: Անգլիացի տաղանդաւոր բանաստեղծը գտած էր իր քնարին
արժանաւոր և ձեռնհաս քնարերգու թարգմանիչը:



Հանգստարան Լեռնելիքուն, Լոռիկինեան բազաւորի:

լիշան նաև հոս կեանքի և հետաքրքրութեան կեդրոնին մէջ, Հայու աճիւն և Հայու միտք պիտի վնտուէր. ատոնք միայն իրեն աշագրութիւնը կրնային գրաւել. իրեն փոյթ իր Փառիզու հռուզեռ լարժումը և մի օր ողբերց գութեան մը ներկոյ Կ'ըլլայ՝ բարերազդուրար Հայուն անունը վեց անդամ՝ կը ֆեռուի օտար հոչակաւոր թատերաբեմին վրայ, նա պանծանօք իր յաշատեարին մէջ կարձանագրէ այդ դէպքը, համարելով զայն Հայութեան չքնաղ փառք մը: Կ'այցելէ մայրաքաղքին այն ամէն տեղաց, ուր կ'իմանայ թէ կը գտնուին Հայ ձեռագիրներ, վաղեմի Հայոց ազգային արձանագրութիւններ, շիրիմներ, սրբոց պաշտելի նշխարներ: Փարիզու մէջ նա մելամազծիկ չէր, ինչպէս ի Լոնտրա: Հս իրեն ընկերներ ոնէր, վանքին հոգեկից եղբայրները, որ նայն ատեն Մուրատեան վարժարանի վարիչ և ուսուցիչներ էին: Իրեն առաջնորդն կ'ըլլայ Հ. Ս. Թէոդորեան: Անհոնապէս կը յուզուի Ս. Գիոնեսիս անուամը տաճարին մէջ. և արդէն կարելի չէր որ զգայուն բանաստեղծը կարենար զսպել իր սրտի արտիստը՝ հոն, ուր կը ահսնէր Հայութեան 4000ամեան հայպետաց վերջին առիւծին վերջին փառաց հանգստարանը* որուն վրայ մեծ բանաստեղծը կը կաթեցընէ իր արտաստաց կայլակները...

* Հ. Ալիշան իր արձակ զրութեանց անուշիկ Յուշիկներուն մէջ կը զրէ. «Ամենայն հայազգի որ Բարիկու քով Ս. Գիոնեսիսի աբբայարանի տաճարին այց ելնէ և իջնէ անոր տապանատունը, չի կրնար առանց մեծ և խոր մտաքրութեան չտեսնել քնարան մը թագաւորի, թագիւ, խաչիւ և առիւծով, և վահանաւ մը՝ յորում քանդակեալ են

Հնասէր Նահապետը կը շրջի լուվրի մուզեանը. հսն ևս իր սրտին մօտ կարեսր յուշարձաններ կը դանէ. կը տեսնէ հսկայ Տրդառայ անդրին ձեռքը բիր մը բռնած. իր աչէն չեն վրիսլիր երեք պարթեւազն կրանիդեայ արձաններ Prisonier Barbare մակագրութեամբ։ Հ. Ալիշան զատնք գեռ չի տեսած, կ'ուզէր իր մի որոշողութիւնը կատարել. նա վեճնետիկէն մեկնելուն, որոշած էր որ Փարիզու մօտ ի կանա գտնուած Հայկազն Ս. Մակարայ նշխարներու երթայ այցելէ. իր որոշածը, մանաւանդ երբ որոշումը սուրբ էր և հաճելի սրբոց, պէտք էր անպատճու կատարէր։ Առ ժամն կը թողու փարիզը, սեպտեմբեր 26ին (1852) կը մեկնի, մէկ օրէն կը հասնի ի կանա

նշանք թագաւորութեան Հայոց և Երուսաղեմի և Լուսինեան տան։ Աչք մէկէն կու տեսնեն այս խորապելու, Cy gist Lyon, Roy d'Arménie. (Ասո հանդի Լեւոն թագաւոր Հայոց). և գարձեալ «Cy gist le très-noble et excellent prince Lyon de Lizingne, quint Roy Latin du royaume d'Arménie, qui rendi l'âme à Dieu, à Paris le XXIX jour de novembre. l'an de grace M. CCC. XX et XIII.»։ Կախ թաղուած էր Փարիզու Կելեստինեան (Célestins) կրօնաւորաց վանքի եկեղեցւոյն տւագ լուսանէն քով (1593). կամարակապ պատին մէջ հաստատուած էր իր մահարձանը սե տապանաքարսով։ Չորս դար անցնելէն յետոյ. երբ Փարիզ գայլութի և խոսվի մէջ էր, նոյն իսկ խաղաղանինջ հանգուցեալ ներու հանդիսաը վրդավեցաւ. ազատութեան, հաւասարութեան և եղբայրութեան դրօշակիր ամենիւը հիմնայատակ ըրաւ ամէն հոյակապ յիշատակարաններ, և այդ բռնկած փոթորկի ճիրաններէն չափատեցաւ նաև մեր վերջին թագաւորի աճիւնն. ամենիւը տապալեց և անոր քնարնը։ Խաղաղութիւնը աիրելուն, իր տապանաքարը գետեղեցաւ վերոնիշեալ Ս. Գիոնեսիսի եկեղեցւոյն մէջ։ Բայց անոր պաշտելի աճիւնը անշքացաւ։ Մեր հակատաղիրն էր զրկուիլ նոյն իսկ թագաւորաց մուլիքն։

ուր Ս. Բաւոնի արբայարանի մէջ կը գտնէ Ս. Մակարայ տաճարը*, կը տեսնէ կիսակործան գերեզմանը, ուր ժամանակին թաղուած էր տենչալի հայկազն Ս. Մակար եպիսկոպոս. որուն քնարանին փասին մէջ մանալով, իբրև յիշատակ, կ'առնու գերեզմանին շաղախէն մի քանի կտորներ։ Քաղքին մայր եկեղեցւոյն մէջ Ս. Մակարայ նուիրուած խորան մը կը տեսնէ. կ'աշխատի սուրբին նշխարներուն ջերմեռանդ. համբոյրներ տալու, սակայն կարելի չըլլար. բացակայ էր սուրբ նշխարաց պահապանը։ Կ'երթայ Պրիւքսէլ, կը տեղեկանայ որ հոն ևս հայ սուրբի մը յիշատակը կը յարգուի, կ'իմանայ որ օտարահնչակ Ս. Խրիստիոս անուամբ Հայկազն սուրբին գլուխը քաղքին մայր եկեղեցւոյ մէջ կը պահուի. Կ'երթայ զայն տեսնելու, սակայն անկարելի կ'ըլլայ. ժողովրդապետը կը պատասխանէ թէ կնքուած է։

Պրիւքսէլն կ'երթայ Ռատենու, ուր բնութեան գեղեցկութիւնը և իր միայնութեան մելամաղձոտութիւնը կը զրգուն իր խանզը, և կ'երթէ «Հիւսիսային ծովու» հետեւեալ գեղեցիկ երգը.

ՅՈՍԻԹԵԱՆ ծով հիւսիսի հեմիմ միայնակ
Երես պարզեալ առ հողմն՝ թեւս և նաւակ.
Զուարթ է արեւս, ծովս ծիծաղ, հողմն ընդոյր,
Հանդարտ ևս սիրտ յիշատակօք մաղձաթոյր.
իսկ միտք՝ ալխս անալ ի ծով իւր սըստին,

* Սա առաջ վանքի սեղանատուն է եղեր, յետոյ 4068ին ի յիշաւակ սուրբին եկեղեցւոյ փոխուած է. ութանկիւնի գեղեցիկ չէնք մ'է, աւերակ վիճակի մէջ։

Մերթ ըստ հողմոյս առ Աստուած վեր տառանին,
Մերթ ծաւալեալ յուխտ հաւասար սիրելեաց՝
ի հայրենի ձբգին ի հողն յալս աշխաց.
Եւ մերթ ի լուրջ եւ ծածանուաս հայելով՝
Զանցեաւն յիշեն եւ դայժմու կհանըս դոզզով:
Աչք իմ յուղեն զանը լընդյանակ ծովըս խոր,
Միտք իմ զապայն անհետազօտ ու ահաւոր,
Հեշտ իմն հանդարս բազիսի նու տափնապըս զանխուլ
Եւ գուարձանամ եւ երկնչիմ ես անդուլ:
Եւ յառաջէ նաւակս ի շունչ օժանդակ,
Թողեալ ի թեկն ըղբէլուիս բովանդակ,
Փուանկաց ափունք յաջմէ, Ոլանտ յահեկում,
Ու անէ Ալպիոն՝ իմ արշելան ապասում,
Եւ հնուագոյն՝ շաւիդ շարժուն, որ կը իսկու
Տանի թուրիս՝ գեկեան աշաց ի յակճուտ...
Ո՞վ նոր ալիք, նո՞ր ափունք, ձեզ ողջոյն տամ
Ողջոյն մ'եւելի, զորս ոչ տեսից միւսանդամ.
Ընդհուզ երթեալ կառեաց յիմ եզր հայրենի...
Այլ սիրու մերթէ զսահման, երկնից իդա լինի:

Դեռ Փարիզ չի վերագարձած, կառօք կը մանէ պա-
տերազմական յիշատակով անմահացած վաթէուզի դաշ-
տը, ուր ճեմած ատեն կ'երեակայէր Յալսափատեան դաշ-
տը: Իր քնարին լարերը կը սկսին թրժուալ. նա կ'երդէ
դաշտին պարտեալ առիւծն Նախոլէն, որ 420,000 զօրօք
կ'ուզէր փշրել Վէլլինկթօնի Մնդղիական դժոխային լէ-
զէնը. սակայն յաջողութեան, յաղթանակի բազզը չի
ծիծալեցաւ աշխարհակալ Առիւծին. անզղիական բանա-
կին օգնութեան հասաւ Բրուսիականը. նա լքաւ, փախա-
ի Փարիզ. փլած էր աշխարհասաստ մեծ Պատերազմիկին
դոռոզութիւնը. և հայրենիքը կը ցաւէր անոր տխուր
պարտութիւնը: Այդ պատերազմի դաշտին մէջ, ներ-

կայ գտնուած երիտասարդ մը, Նահապետին ցոյց կու-
տար բանակներու տեղերն. նա կը զննէ Նախոլէնի պար-
տութեան ի յիշատակ կոթող Առիւծը. որ իր վրայ խոր
տպաւորութիւն կը թողու.. իր միտքը անկից դժուարաւ
կը բաժնէ. նա կը բարձրանայ նոյն կոթողին վրայ, երեա-
կայութիւնը կ'ընկղմի Նախոլէնի մեծադղորդ յիշատակ-
ներուն մէջ, հետաքրքիր այցելու անդղիացի ընտանիք
հոն խուժելով կը խոռվեն Բանաստեղծին քնարահիւս
մոածականն, նաև կ'իջնէ կոթողին և այցելուաց տետրա-
կին մէջ կը գրէ

« Առիւծ անուն ևս Ալիշան,
Թողի յԱռիւծս ոյս զիմ նըշան » :

Վաթէուզ իր յիշատակներով և յուշարձաններով Նա-
հապետին երգել կու տայ, հետեւեալ, յուզիչ ողբերդը.

Պանկրէւստ, յահեղ խազմիցս ի դաշտ զի՞ խնդրես.
Բնկո՞րս զինուց ու ազանց, փառաց սըդատես.
Գլուխք զորից սպասարինաց նընջին նու քեւ
Որբ յաւիտեան ոչ կանգնեսցին առ արեւ.
Պերձանզամք յայգուն ի յաղթ գիմեալք աստ
Ընդդիմարարտք բեկան զինչ մայք գիտապաստ.
Մինչ համախումք երիտասարդ Եւրոպայ
Զարանց արւոյն լուծանէր վրէժ անոպայ.
Այն որ սփուրք տիեզերաց արհաւիրու
Աստ ծանեաւ զյոյս մարդոյ եւ ճիզն առաւիրու:
Եսանց եւ նա, անցին յաղթեալ եւ յաղթող...
Ո՞ւմ կայ գէտակն արձանա՞ առիւծս այս կոթող:
Սումէժ, զոշեան զանազնութիւն մարդոյս հետ:
Ես ցող մ'յարիւմքս հեղեալ փախւիմ սըրտաբեկ:

Հայր Ալիշան սըտաբեկ կը վութայ ի Փարիզ:
Հոկտեմբեր մէկին նա մայրաքաղքին մեծ մատենադա-

րանին մէջ, իրեն ցանկալի գրչագրական հետազոտութեանց զբաղած էր. Հ. Գ. Այլվաղակի զինքը գրչաց գիւանապետ թենոյի կը ծանօթացընէ: Անպատճմութախութեամբ կը թերթէ գտած խորենացւոյ երկու ճառերը, նամակը, գտատառակի պատմութիւնը: Մատենագրանէն Մուլտառեան վարժարան կը տանի Երտապեմայ ժամատեղաց երկաթագիր խիստ հին ձ'աշոց մը զոր երկար ատեն կը քննէ: Մի քանի օր կը յաճախէ յիշեալ գրչագրաց մատենագրանն և կը քննէ զանազան ծօնական գրչագիրներ: Քննելով ճառընտիր մը, կը գտնէ Աբգարութուղթը, որ իրեն Ղերաբնայի պատմութիւնը կը թուի: — Այս իրեն սիրելի քննութեանց երկար ժամանակ չի կրնար զոհել, հոկտ. 47 վանքէն զինքը կը կանչեն. նա այլ ես առանց յապաղելու կրօնական հնազանդութեան կոչին հպատակելով, ու զեւորելու կը պատրաստուի. նոյն ամսոյն 22ին ֆարիզէն կը մեկնի: Ճանապարհին տեսութեան արժանաւոր քաղաքները կ'այցելէ: Զուիցերիայէն Աւարիոյ սահմանը անցնելու ատեն, Հոկենսոի կողմերը, սահմանագլխի պահապահները Հ. Ալիշանի իտալիա մոնելը կ'արգիլեն, ըսելով որ անցագիրը Աւարիոյ գեսապանէն սասրագրուած չէ. իր քով գտնելով մեր հայրենիրի « Ողբամ զըեղ » նկարը, կը կարծեն թէ նա մի խտալացի յեղափոխականէ. նա կը բացատրէ պատկերին ինչ ըլլալը և իր վիճակը. անսնք հազիւ մի քիչ կը համոզուին. բայց տակաւին կը պնդեն անցագրի յիշեալ խնդրոյն համար: Զմեռ էր, եղանակը վայրագ և ինքը կը գտնուէր Աբլիւ-

կէն սառնամնիկ լերան ստորոտը: Այդ գէպքը իրեն մեծ շուարում կը պատճառէ. շուտով ի Միլան նամակ կը հասցընէ, որ այդ արգելքը վերցընէն: իր տագնապը և տիրութիւնը փարատելու համար, կ'այցելէ Հոկենսոի հեղեղատին, ուր կը զմայլի բնութեան վայրենի տեսարաններուն վրայ: Եւ գէպքը արդէն իսկ բանաստեղծական խանդնի բորբոքած ըլլալով, նա կ'երգէ իր դիտած Հոկենսոը, և այն երգը կը հնչեցընէ իր տագնապին դառն շեշտերը. մարգիկներէն զզուելով կ'ապաստանի տիեղերաց բնութեան.

Ի մարտկանէ զըզուեալ՝ կմը առ քեզ քնութիւն, ապաստան, Ընդ զիւր եւ գար բըլբակիս նըստեալ անոք բացական. Աչք բաժանեալ ընկանուո՞ւ խընդիւմ որբախ մըսիթար. Շատ սա նձուեկ կըրեաց, ո՛չ, խիթամ՝ պայթի չարաչար:... Ցանվայր վայրէ չերկընչիս, Ոգի, ուր գու՝ անդ պարտէզ. Համ' ան ըլլալաց քո յերկնէ, եկ, վագեան՝ նոր վախարձեզ, Կաց թիկնազահ, անվեկանդ վահանէ ողբախ հովանի: Եւ յերիւրեա զձայն ողբախ յարձակ ցաւոց զընտանի: Լուրջ հրաման դրաւ ինձ եղեալ զօգուտ իմոց սիրելեաց: Ի բիւրալան յիմ վայրէն յարեւմըտից ծագ վարեաց. Եւ մինչ մըպահեալ յամբըն բաղդ՝ բանայր ըլչեաս հայրենեաց՝ Եւ ես սիրաւ լոյնէի սիրակարօտ ընտանեաց, Եւ վերացեալ իր հեղեղ յորդեալ Հոկենսո վրիխավար: Գլուխ գլուխ կարծէի նոր սախիք ողջոյն իսկ զաշխարհա, Եւ գեղեցին Հելուետեայ տըւեալ ողջոյն համառօտ: Զիմ եւ զյուդունց փութայի լընուլ զերկայնըն կարօտ, Ու այն ինչ զահեղն Բասկելիւկ մողեալ սահման ի թիկանց, Զիտալականն աննուի նոր չերմազոլ գետավանց, Եւէ, կարծեալն այն կոսպար պանդիխութեան՝ լիառն ժանու՝ Երջանկութեանս ինքնին, ո՛չ, եղեւ նա բնան աղամանն:... Ոչ նա, զի ծնունդս է բնութեան, թէպէս եւ ցուրտ եւ խոշոր, Այլ Խըծքիծ մարդատեաց իրաւանց՝ եղ զայն խոյս:

ի մէջ սառին՝ սառնագոյն պատկամ ըղսիրտ իմ ելոյծ,
Սեւացաւ ինձ աշխարհս, եւ բաղդ ըղեկմ, իւր կափոյց...
Դարձուցի զալու ի մարդոյ, եւ անկաւ յիս յուշ սիրելեաց...
Եւ խոյս տըւեալ ի չին՛ դիմել լերանց եւ ալեաց...
Այս ի եարձու զահուանլիս կառչեմ կոթող կենդանի՝
Զըգեալ աչս յաւսահատ ըղբընութեամբ վայրենի.
Զիւնագագաթն ուր լերինք աստի ու անտի վերամբարձ
Յուս քարակոյա կըրեն պարս ոստաճապալ եղեւնեաց.
Լեառնահովիտք տափնապեալք ձըմենատանջ հիւսիսեաւ՝
Ղօղեն ըզխուն դալարիս ընդ եղեւնուտ հովանեաւ.
Հօսն յա. մրաճեմ թափասիրի խնդրէ զյետինն անդ ճարակ,
Մինչեւ պատեալ համօրէն ի համագոյնն ըսպիտակ.
Տըւարածիկն ի բացեայ նըստի աներդ ու մնուըրինդ
Վարկարասի ակնարկեաւ, եւ արձականլք կան ըսոխի.
Հազիւ ծաղիկ մի յայտնի իբր աշնայնոյն վերջապահ,
Սակայն եւ նա ոչ տեսուէ զարցալուայն վաղուի պահ.
Մեկնալ երթեալ է յովտէս սիւզ հարաւոյ սըրտաւէտ,
Եւ գուսանքն օդայինք չըւեն գընան վեր ըգհետ.
Կողերք անայիք ցըրտասարտու ճարճատին՝
Մոյորերամ հաւուց լեալ պատուանդանիկ ինչ յետին.
Սեւատարած լոկ ադուաւ բանայ կառաչ տիսրարար,
Օրհասական բընութեան մահաճաւէր փողահար.
Արեւ գանդաղ երեւեալ ընդ ծագ լերին բալաղէմ.
Զափէ զըրջանն համառատ թանդուղելով տրտմաճեմ.
Եւ ամպք յաճախ յաշաղկուար՝ ճառագայթիցն արկեալ ցանց,
Նըշաւակեն մերկութեամբ ըղճակատ հօրըն հրապանձ:
Տեսեալ զըստուերն ցըրտին՝ հաւն ընտանի անպատկառ
Ի գիտէն ձայն ածէ սուր, նըշմն ըըքոյ ամպավար:
Խակ ես մելնակ նըստիմ գէտ մոհասարտու բընութեան,
Եւ ցուրտ նորին ձաղկակոծ աղդի յիրանս իմ հա. մայն.
Ու անա գալարք եւ սոխնք կապուաք ժառոց հողմաւած.
Վայր մի զափիւքը քերեալ երթան ի սոր միզամած.
Տերեւ մու արուգ եւ անպէտ, այլ սիրաս ի նա զորովի.
Ճակասս յարմունկըն պըշնում՝ մինչեւ անհետ չերեւի.
Ու ոչ անարտուր՝ արկեալ զալս այլուր՝ խըներեմ ինչ ըլքոս.
Եւ ըսփոփանս ինչ միակ հաւաչաձայնս է շանհոս: ...
Զի՞ ողբաս, գե՞տ, զանշատեան առուակքէ՝ արդէն անցարիք՝
Հանգոյնս աչաց բըլշականց պազու եւ ճապաղու ու անխըլիրտ.

Մինչ ինք յերկուց լեաւնասար գահից կըտրեալ հուն պըզտոր՝
Վախէ ի վախ վազնս գաս զըլիս յանդունդու ահաւոր.
Սերտ ի թունէ շունչ ի բերան՝ ես կըսուեալ յեզըր վախին՝
Ի վին հայիմ կարկաջուն՝ ուր չուրբդ եռան եւ պուղին,
Մերթ ընդ պարմելոս բախեալ եւ վրիխացեալ աննահանջ,
Որպէս վիշապ մու անարդիլ սողեալ գեսեալ քաջալանջ,
Մերթ տարածին ի ծըմակս եւ անկանին ի ծործորս,
Մերթ ի խոփոմս անձկացեալ՝ մինչեւ մի վաղ առ հաւորս,
Մերթ լայնալիք՝ լուծ առեալ բաղմակամոր կամըրջաց,
Հաւուց գուլով ճանապարհ, եւ լիր ամուր քաղաքաց:
Այլ յետ բնաւէն՝ զի՞ լինիս, յաղթեալ ժայռից եւ լերանց
Ագարակի սպաս հարեալ ու առիթ շինից մեծագանձ,
Հազար փարոսախ քարշելով ըզմըկանունս ժիր եւ չունչ,
Զեւեալ սահմանս աշխարհաց եւ ծածանեալ յերկրի ունչ,
Ո՞չ, ի ծովս որկուածէտ անկեալ թափիս հիբարար,
Եւ քազզը ալեսակք ի գառինս յուրեալ վատնին վայրապար:
Այլ բաղզ Հունու, զոյր գիտեմ ի մէջ կըրճից որորան,
Ու ազօթ մըտացս որոնեմ ըլհուսոկ զանդարձ ծածկարան: ...
Այլ, ոչ, ի. հասա ահաւոր՝ զոր աղեր՝ զի՞տ յարավար,
Զիցին ընթացը սահմանաց՝ ինոց կենացը տիսպար.
Յետ ընդ կըրից այսքանեաց վարելոյ զոիրտ իմ ընդ վախ,
Յետ մըրցելոյ նէ այնքանեաց տարերց ժայռից ովերախ,
Յետ բիւրո հեղիկ մընչանց եւ սակաւուց որոտմանց,
Յորմամ ա. աց ալէնոս աղատական բացցի անց,
Յետ բաշակերպ ընթացիցն ինձ ինչ եւցէ յանդիման: ...
Ո՞չ, զարհուրիմ, Ո՞չ, երթ կափն ինձ զոյր գերեզման: ...
Այլ բուռն է մահ, ոչ, ազկետ կու 'րիմն ըցնուսկ բան որբոխ,
Ու ածեալ ըզկեմ ի վերայ՝ նիստ անդ պահակ Պահկըսիս: ...

Վըրդովուած է Հայր Բանհաստեղծը. անցագրի այն խըն-
դիրը ապօրէն օրէնք և բոհութիւն համարելով յուզուած
դարձեալ կը հնչեցընէ իր քնարը.

Քընար լարիմ ի ապրուուտ սար սառամանեացս ի Սպելիկէն,
Մուսայիք, մի զարհուրիք, լըսել երբէք՝ ձնդ մեղք են,
Օրէնք ապօրէնք զիս կաշկանդեցին ի ձեանց գահ:

Յորում ձըմեռն մերձաւոր, և հեռագոյն դոհ եւ աչ.
 Օդը եւ գետին համաձուլեալ յոշեպակցց եղեման
 Յաւերական կանդնեն կոսպար շըտից ըլքնադ բընութեան...
 Ա՛, բընութիւն, ահ, հայրենիք, ի մոռացօնս էք դուք սոս,
 Յանդուզն խոկ յոյս՝ չիշխէ խըգել զըմաղձապատո տուադաստ.
 Յեղանակք արփայինք ոչ հորովին սատ զոնազան,
 Զըմեռն ծեր ու անմեռ նըստի յամառ ի պազ գերեզման.
 Վաղէ արտօսոր յաջն՝ ոյց ոչ ինչ բաց ի բըքոց երեւն,
 Եւ յերկիր անկեալ, աւանդ, եւ հոր կայլակքն իմ սասին.
 Զուր՝ բիթք զինեալք ի վրէժ՝ յուղեն զակատութեանըն սահման,
 Եւ չըգորին քըսան քայլ, ձիւն հուալ, ձիւն չուրջ, ձիւն ամենայն:
 Եւ զինչ յայրան արհամիր տրի զիս հեռի յիմ բարեաց. —
 Մոռացութիւն միոյ գըֆի զոր բոնութիւն պահանջնեաց.
 Ո՛վ նախանձ նախանձ, զազան երկիր զու մեզ բանտ կարգես,
 Եւ անպատկառ ի բըքալէզ լերանց խոկ ծայր՝ լար սրփան.
 Ուր չիք զուզա նըկուն, ուր ոչ սուբակն խոկ անգզ՝ յուզէ զիս,
 Դու զուղեւոր տարաշխարչիկ կապես քան կազս յերկաթիս.
 Գէժ թէ փոքու իւկիք խուարին կանգնեալ եր սուն քու աղահ,
 Ի հեզ հովարի կամ ի ստորոտ խոկ չըսկայիս ձիւնագահ,
 Զուրկու յընկերաց՝ ըսփոփէի արդեօք տեսկեամբ բընութեան,
 Եւ ոչ զկայտառ կեանս յօրհասին մատնէի հուալ ի սահման:
 Ո՞ւմ ես մեղայ, զի՞ գործեցի չար, ընդէ՞ք բանտո ահաւոր.
 Հայրենեաց հառաշելով՝ հերձաւ հագազն իմ բոլոր,
 Ընդ սասն եւ քար բացի նձ շաւիզ ու նտ բընութիւն ահաքեկ,
 Եւ դուք մարզիկ տըմարզիք՝ դուք զիմ հայրենիսն ինձ փակէք:...
 Ա՛, անէծք ցուբորք քան ըդուացյու տացեն... զ՞ո, զ՞ոմ եղբարս.
 Քաւ ինձ զզմարէ անիծանել, անիծեան՝ կիրք չարաբարս,
 Որ սըպըրդեալ յասոսուածավայր սիրտ մարգիկութեան եղին բոյն,
 Քան ըդմայու եւ վագերս յարզարեալ զայն խըստագոյն:
 Ո՛վ արութիւն դու զօրաւիզն բոլորից ուզգութեանց,
 Կարկառ առ սիրտ զաջտ աննըսւն, զի մի պազի յեղեմանց.
 Բագում սիրով վառեալ է սա հւ քաղցի յուշովն հայրենի,
 Ա՛, մի զըձձեալ եւ թերթաթափ՝ չիչց՝ ի ցուրտու այս սահմանի:

Երկու օր բնութեան գեղեցիկ տեսարաններու մէջ
 թափառելէն յետոյ, կը ստանայ իտալիա մանելու ազա-

տութիւն: Ալսարիոյ գեսպանին սասորագրութիւնը անցաւ-
 գըին մէջ չունենալն իրեն յանցանք համարելով, պահա-
 պաններէն ներսզութիւն կը խնդրէ. և ուղեւորութիւնը
 կը շարունակէ. Հոկտ. 4ին կը հասնի վեհնետիկ:

Նոյն տասն իրեն կը յանձնուի Ուխտիս ներկայ վեհի
 դասուն դաստիարակութեան պաշտօնը, զոր ամենայն
 խնամօք կը սկսի կատարել: Եւ այն օրը որ նա այդ
 պաշտօնը կը սկսի, իրեն կ'որոշուի նոր և աւելի ստի-
 պողական պաշտօն մը:

Հ. ԱԼԻՇԱՆ Ի ՓԱՐԻԶ

Միենոյն առենները Պարսաւագիր և ջառագովուրիւն անուաննեալ հանրածտիթ տեսրակներու պատճառաւ՝ վանքիս և Փարիզու մեր միաբաններու միջեւ արխուր խրամատ մը բացուեր էր. և խզուած էր ներդաշնակութեան կազը, զոր զօդելու համար, վանքիս վարչական ժողովը կ'որոշէ որ Հ. Ալիշան իրքի պատգամաւոր Միաբանութեան կողմէն երթայ Փարիզ, խօսի մեր հարց հետ և պարզէ լինդիբը: Ուստի գեռ հազիւ երկու ամիս վարած հոգեւոր դաստիարակութեան պաշտօնը, ի լուր հնազանդութեան ձայնին, գարձեալ կ'ուզեւորի ի Փարիզ. մեկնելու օրը (1853 12/4) իր քահանայացու աշակերտաց հրաժեշտի ճառ մը կը կարդայ. սիրելիներէն հրաժեշտը իրեն համար շատ դառն էր, և այդ դառնութիւնը հնազանդութեան սուրբ ձայնովը կը ջանար քաղցրացընել: Վեց օրուան մէջ Փարիզ կը հասնի և փութանակի իր պատգամաւորութեան գործը կը սկսի կատարել: Այս ուղեւորութենէն կ'ուզէ օգտավիլ, — դարձեալ հայ ձեռագիրներ հայ սուրբելու ուրբավայրեր փընտուելու կը զբաղի: Ա. Ժընէվիէվի մատենագարանին մէջ կ'ընդօրինակէ Աւետիք պատրիարքի մի քանի յիշատակարաններ: Շոգեկառօք կ'երթայ ի Բիթիվիլիէ մօս Եղամի Քաղքի, կը դանէ Ա. Գրիգոր Հայկազնոյ տաճարը, ուր ամփոփուած են սուրբին նշխարները: Կը տեղեկանայ որ

նաև Եգուի (Estory) գիւղի մէջ կը պահուին հայ սուրբին նշխարներէն. հետիւան հօն կը գիմէ, ժողովրդապետէն կ'աւանու սուրբին կենսագրութիւնը զոր կարդարով կը համառօտէ: Գիւղի երեցը կը պատմէ որ 1644էն սկսեալ հայ սուրբը հօն կը տօնուի: Նոյն տեղերը կը տեսնէ հայ սուրբին յիշատակին նուիրագործուած մի քանի մատուռներ և անոր քարայրը, ուր եօթը տարի ճգներ է, տեղոյն աւագերէցէն կ'իմանայ որ այս քարայրին ուխտի բերեր են անդամալոյծ տղայ մը և հայ սուրբին ազօթքով տղան ողջ առողջ դարձեր է:

Զատկի երրորդ օրը այն կողմերը ի պատիւ սուրբին մեծ հանդէսներ կը կատարեն. և տարուան մէջ մի քանի անդամ ի յիշատակ սուրբին ուրիշ տօնախմբութիւններ ալ կը կատարեն: Եգուի գիւղի եկեղեցւոյն մէջ կը տեսնէ Սուրբին հողանիւթ եպիսկոպոսի զգեստով արձանը:

— Փարիզ վերագանակով իր պատգամաւորութեան համար ինչ որ պէտք էր կը կատարէ, և ազրիլ 20ին դէպի վանդ կ'ուզեւորի: Լիսնի հաստրակաց մատենագարանին մէջ երեք հատ ձեռագիր կը դանէ, իրեն կարեւոր եղածները կ'ընդօրինակէ:

* Հմբառ. Քաղաք. Աշխարհագր. էջ 519:

զինքը կ'ընդունին։ վենետիկ չհասած, Բաւխայի և Մի-
լանու մատենագարաններուն այցելելով, կը դանէ մի քա-
նի հայ գրչագիրներ, ուսկից կարեւոր կտորներ կ'օրի-
նակէ։ — Մայիս 3ին վաճք կ'ըլլայ, կատարած էր պատ-
գամաւորութեան պաշտօնը։

Հ. ԱԼԻՇԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ

Արկին ճամբորդութենէն նա վաստուցել էր. իրեն
ծանը պաշտօններ կարելի չէր յանձնել. սակայն այսու
հանդերձ զինքը բոլորովին անգործ չեն թողուր. արդէն
որոշած էր, որ Փարիզէն դասնալէն վերջը, զինքը վան-
քիս աւագ աշակերտաց գաստիարակ կարգեն. սակայն
Հ. Ալիշան այն ատեն այդ պաշտօնը յանձն առնելու տրա-
մադրութիւն չունէր, և արդէն իր փափուկ կտզմնութեան
և մանաւանդ մելամաղձիկ բնաւորութեան համար պա-
տասխանատու գաստիարակութեան պաշտօնը կրնար վնա-
սակար ըլլալ. ուստի աւելի փոքր վարչական պաշտօն մը
կը յանձնեն. զինքը գարձեալ քաղքիս Բաֆայէլեան վար-
ժարանը կը դնեն։

Եղին ատեն (1853 Նոյեմբ. 40), վարժարանի տես-
չութիւնը կը վարէր Հ. Ալիշանի սիրելի գասընկերն
Հ. Արբահամ Ճարեան. Հ. Ալիշան վարիչ կ'ըլլայ ոչ
ամբողջ վարժարանին, այլ աշակերտաց մէկ դասին*։ Այս

* Հ. Ալիշանի գաստիարակութեան և կրթութեան յաձնուած աշա-

Յովոէփ Եազըճեան	Յակոբ Բուլճեան
Թովիսաս Թէրզեան	Յովհաննէս Շահինեան
Յովհաննէս Ալթունեան	Յովհաննէս Թաւուքճեան
Գաւէթ Թրեանց	Գէրգ Ազաւուլահեան
Պօղոս Մաղաքեան	Յովակիմ Արտապեան



Թուվաս Թուրքեան:

պաշտօնին մէջ բանաստեղծ Նահապետը շուտով կը սթափի. քերթողներու բնատուր մաղձառութիւնը կը բուժի. իր ընտանի և քաղցր բնաւորութեան համար, աշակերտաց շատ հաճելի կ'ըլլայ, անոնք իր սենեակէն, իր գրասեղանէն անբաժան կ'ըլլան:

Վարժարանին մէջ նա կը սկսի պարապիլ հնագիտական լուրջ աշխատավթեանց, յարատեւութեամբ՝ պատայ հրատարակելիք մեծահատոր հնախօսական, պատմական և աշխարհագրական երկասիրութեանց համար, գրական ճոխ ատազներ կը ժողվէ: Վարժարանի աշխայժամկեր իրեն ազգին կենդանի պատկեր կը ներկայանան իր քնարերգու վասկուն երևակայութեան, որով նա անդադար կը գրէ քերթուածներ, ճառեր և ամէն նշանաւոր հանդիսաւոր օրերու առթիւ կամ ընութեան հաճոյական տեսարան մը տեսնելուն, կը թրթուացընէ իր աշխայժ կիթաւը:

Ներգաշնակ էր, նախանձելի իր այդ վիճակը: Վարժարանի մեծ պատասխանատուն Հ. Ճարեանն էր, որ դաստիարակութեան մէջ ամենաքաջ ըլլալով, կըթական գործը վառաւոր կ'ընթանար. Հ. Ալիշանէն զատ վարժարանին մէջ նոյն տաեն ուսուցչական գործին թեւ ու

Մկրտիչ Աճէմեան

Արապիսն Թուլեան

Ոռւտուլի Այտընեան

Մկրտիչ Բարեկենդանեան

Այս աշակերտներէն իբրև բանաստեղծներ ծանօթ են ՊՊ. Թէրգեան և Աճէմեան: Հ. Ալիշան ասոնց ներշնչեր է Պինդարի քնարերգու ողին. և անոնց սորվեցուցեր է նախնեաց լեզուն: Այդ երկու բանաստեղծները իրենց զըտական համբաւը Հ. Ալիշանի կը պարտին:



Մկրտիչ Աճեմեան :

թիկունք էին գիտուն թուաբանագետն Հ. Հմայեակ վ. Պապիկեան և ազգեցիկ գաստիաբակն Հ. Եւդ. վ. Ռոկանեան : Այս չորս միաբաններու օրով, վարժարանը պատկառելի էր. ամէն միաբան կը ջանար անձնանուիրութեամբ իր գործը լաւ կատարելու:

Հ. Ալիշան իր ընդունակութեան և հոռո ու համեստ բնաւորութեան համար, ամենուն սիրելի էր. ամէն մի դաստիաբակ կը ջանար իրեն օգնական ունենալ այդ համակրելի միաբանը: Հ. Աբրահամ Ճարեան թէն շատ անգամ իր այդ կորովամիտ օգնականէն չի զրկուելու համար ամէն ջանք թափեր և յաջողեր էր, սակայն երբ փարիզու վարժարանը հարկ կ'ըլլայ իր նախկին վառքին հասցընելու, և այդ պատճառու երբ նոյն վարժարանի տեսուչ Հ. Ռափայել Թիրեանց զէ. Ալիշան իրեն օդնական կը խնդրէ, և Ռւխտիս վարչութիւնը նոյն խնդիրը օրինաւոր և անհրաժեշտ կը տեսնէ, այն տեսն՝ Հ. Աբրահամ կը զրկուի իր սիրած օգնականէն: Հ. Ալիշանի համար նոյն էր երկու վարժարաններու ալ պաշտօնը. նա համահաւասար կը սիրէր երկու վարժարաններն ալ, վասն զի հոն կը թուող աշակերտները իր սիրած միւնոյն ազգին հարազատ զաւակներն էին. իրեն համար երկու աւագ տեսուչներն ալ համահաւասար սիրելի ու յարգելի էին:

Հասարակութեան և ազգին գործին բոլորանուէր պատրաստական աբեղայ զինուոր մ'էր. կ'ընթանայ հոն, ուր հնազանդութեան ձայնը կը հրամայէ: 1858 մայիս 10ին վենետիկէն գէպ ի ֆարիզ կ'ուղեւորի: Ի Մին-





Մ. Փորբուգալ Փաշայ:


լսէն՝ կը գտնէ զվիճակիման* հայագէտը, որուն կ'ընծայէ իր «Նուադներէն» մի օրինակ. և հետք հնարանական գիտութեան վրայ երկարօրէն. կը խօսի: Գրատան մէջ կը քննէ հայ հին և նոր գրչագիրներ։ Այս անգամ ճանապարհորդութիւնը շատ երկար չի տևեր. նա մայիս 19ին արգէն ֆարիզ Մուրատեան վարժարանը կ'ըլլայ և իր պաշտօնին գլուխ կ'անցնի։ Հ. Ռափայէլ խրախուսուելով այս ժրաշան օգնականի եռանգուն գործունէութենէն, աշակերտաց յառաջագիմութեան համար, նորանոր միջոցներ կը գտնէ, ստէպ քննութիւններ կը կատարէ, քաջալերական մետաղներ կը բաշխէ։ Աշակերտք տեսնելով իրենց վարիչներու անձնանուէր ջանքը, գեռ աւելի հոգի առնելով, կ'աշխատին։ Այդ երկու քաջ վարիչներու օրով, յառաջագէմ աշակերտաց թիւը կը բազմանայ **. այդ ժամանակ ծանօթ բանասէր Մ. Փորթուգալ Փաշայ իր կորովամիտ ընկերներու մէջ ամէնէն քաջը կը հանդիսանայ, և երբ իր դասընկերներն 1858 գեկտեմբերի մէջ աւարտելով իրենց ուսումնական ընթացքը, հայրենիք կը վերադառնան, ինքը կը փափաքի մի տարի ևս վարժարան մնալ, որպէս զի գեռ աւելի հմտանայ իր սիրած ուսմանց մէջ։ Բանասէր Փաշան իր այդ ժամանակները, Հ. Ալիշանէն շատ օգտուեր

* Հռչակաւոր գերման արեւելագէտ հմուտ աստվածաբան, մեզ Հայոցս ի միջի իր զանազան հեղինակութեանց, ծանօթ է իր հետագայ գրութեամբ «über den arischen Ursprung der armenischen Sprachen»; Munich, 1844.

** Հմբար, Բաղմազէպ 1858. էջ 467, և 555։

է. «րովլ յանհունս երախտագէտ մնաց իր բանաստեղծ ուսուցչին. իրրե մասունք նահապետին լուսանկարը իր ծոցը կը պահէր. սէրը փոխագարձ էր. Հ. Ալիշան ևս յատուկ դորովով կը սիրէր իր այդ սիրելի ուսումնատենչ աշակերտը»:

Հ. Ալափայէլ Թօրեանց՝ իր նոր օգնականի հետ քիչ առեն կը մնայ: Վարժարանը սկսած էր նախանձելի ուղղութեամբ յառաջ ընթանալ. անողորմ, տանջող և նահասակող հիւանդութիւն մը զինքը անկողին կը ձգէ. որով Հ. Ալիշան միանդամայն թէ տեսչի և թէ ուսումնապետի պաշտօն պէտք էր վարեր. և կը վարէ: Ցեսին հիւանդութիւնը կը ծանրանայ, կը սաստկանայ. Հ. Ալիշան գերմարդկային գուրդուրանքով պահապան հրեշտակի մը պէս չհեռանար իր սիրելի պաշտօնակցին մահճէն. բժիշկներու խնամոց հետ, կը խառնէ իր անարատ ազօթքները և աղերսները. սակայն ի զուր. հիւանդը երկարօրէն տանշուելէն և վիրաբոյմներու խարաններու և սրերու պկող փորձերուն ենթարկուելէն յետոյ, 1858 դեկտեմբեր 9ին կը կնքէ իր մահկանացուն: Նա հայ մանկուցին 23 տարի լուրջ և ընդունակ դաստիարակութեան պաշտօնին մէջ յողնած էր. կը գիմէր հոն՝ ուսկից կ'ակնկալէր իր արդեանց պսակումը: Հ. Ալիշանի զգայուն սրտին համար այդ կորուսով դառն հարուած մ'էր. զայն կ'ողբայ իր մէկ դամբանական գեղեցիկ ճառով՝ զոր նախընթացաբար յիշեցինք: Այդ ճառով նա ցոյց կու տայ առ իւր աւագ պաշտօնակիցն ունեցած անկեղծ յարդանքն, սէրն և անոր վրայ ունեցած մեծ համարմունքն . նա նոյն ճառով կը



ՄՈՒՏՍԵԱՆ ՎՐԱՅՈՒՄ Ի ՓԱՌՀՉ.

Բ. ԳԱԴԵԿԱՆ

պարզէ համեստցելոյն աղնուական բնաւորութիւնը, դաստիարակիչ մեծ ընդունակութիւնը, միաբանութեան մէջ անոր ունեցած հազուագիւտ գեղեցիկ ձիբքերն, և թէ նա որքան ի զուր և սխալմամբ զրպարտուած է մի քանի թշնամիներէ:

Միաբանութիւնս զչ. Ալիշան համեստցելոյն ծանր պաշտօնին արժանաւոր յաջորդ գատելով, զայն Մուրատեան վարժարանի տեսուչ կը կարգէ: Սա այլ ևս այդ պաշտօնին մէջ կարելի էր քաջ վարպետ մը համարուիլ երկար տարիներ վարժարանական ընթացից մէջ կենաւով, մանաւանդ որ իր հետ ունենալով ձեռնչաս գատիարակներ, անոնց կրթական ուղղութեան հետելով, կը սկսի փարիզու վարժարանի տեսչութեան ծանր պաշտօնը. իրեն օգնական կունենայ զչ. Գրիգորիս վ. Մէրճանճեան, որոն հետ վենետիկէն եկած էր, և չ. Սուքիաս վ. Պարսնեան, այս երկուքն ալ զչ. Ալիշան կը յարգէին, որով անոր գործին ամենայն եռանդեամբ թե թիկունք կ'ըլլային: իր տեսչութեան տեսն, վարժարանը դեռ աւելի համակրելի կ'ըլլայ. տեղոյն գաղթական աղդայինք, վարժարանի հետ ջերմ և ընտանի յարաբերութիւն կ'ունենան: Միայն իր անոնը բաւական էր. ժողովուրդը գիւթուած Ալիշան անուան արձագանքէն, կ'աշխատէր իր զաւակը այդ նախանձելի տեսչին աշտկերտ ընելու, գիտնալով որ իր հովանաւորութեան տակ, զաւակը հայրենիքէն դուրս, հայրենիքի անկեղծ հրավառ երազներու մէջ պիտի ապրէր: Գեռ հազիւ միամեայ տեսչութեան պաշտօնը վարած էր, կը կատարէ աշա-

կերտաց մրցանակաբաշխութեան համեստէսը (46 յունուար 1859ին): Եղյն օրը ի ներկայութեան փարիզու նշանաւոր անձանց և ազգային բարեկամաց, կը կարդայ վերայիշեալ գամբանական ճառը, յետոյ աշակերտաց քաջալերական միտալներ կը բաշխէ:

Հ. Ալիշան իր թէ ուսուցչութեան, և թէ տեսչութեան տառեն, ամէն պարգեւարաշխութեան, միշտ մի հմտալից ազգային պատմական կամ հնախօսական ճառ և կամ քերթուած կարդալու սովորութիւնն ունեցած է, և այդ ճառերը տա հասարակ, ամէն անդամ լոյս տեսած են «Բաղմավէպ» ի մէջ: Յիշեալ պարգեւարաշխութենէն վերջը, գարձեալ նոյն տարին, Օգոստոս 4ին, միենայն համեստէսը տեղի ունենալով, մեծանուն հանդիսականաց առջի, ուր ներկայ էր իրրի նախագահ հանդիսին Պ. Գայլը զաղղիացին, չ. Ալիշան գաղղ. լեզուով խոր հմտութեամբ կը ճառէ Հայկայ թուականին վրայ*:

Ուսմանց ծրագիրը բազգատմամբ այժմեան ազգային բարձրագոյն վարժարանաց, աւելի գերազանց էր. ասկից կէս գար առաջ չ. Ալիշանի վարած վարժարանի մէջ, կ'աւանդի տարբական և միջին ուսումներէն զատ՝ նաև յիմաստախրութիւն, իրաւագիտութիւն, քաղաքական տեսութիւն, իւղաներկ գիմազծութիւն, աեսարանագծութիւն, երաժշտութիւն. այս յետին ուսման մէջ աշակերտներէն մին Յակոբ թումանսեան այնքան կը յառա-

* Այս ճառն իր աշակերտներէն մին թարգմանած է, հրատարակութիւնը տես «Բաղմավէպ» 1860 յունուար 4:

ջանայ, որ պարզեւաբաշխութեան օրը, իր ինքնահնար
Պարը (Mazurka) կ'երգէ, որ նոյն տաենները կ. Պոլսոյ
մէջ տպուած կը ծախուի ալ*: Այս եղակի նորութիւնը
տեղի կ'ունենայ 1864 օգոստոս 12ի պարզեւաբաշխու-
թեան օրը. այն հանդիսին ներկայ կը գտնուին վանքիս
վեհ-Աբբան, նշանաւոր արեւելագէտներ, ազգային և օ-
տարազգի մեծանուն հանդիսականներ։ Հ. Ալիշան գար-
ձեալ ազգային ճառ մը կը կարդայ գազզիերէն, և ամբողջ
հանդիսականաց ուշագրութիւնը կը հրաւիրէ Հայտասա-
նի բնական, ճոխ յայտնի և թաքուն հարստութեանց
վրայ։ Նոյն օրը հանդիսականք մեծ հետաքրքրութեամբ
կը զննեն վարժարանի նոր ընթացաւարտ աշակերտնե-
րէն Յակոբ Տամատեանի և Մկրտիչ Լիմննեանի իւզա-
ներկ գեղեցիկ նկարներն։ Այդ աշակերտներէն առաջի-
նը, գեռ ողջ է, արտասահմանի մէջ կ'ապրի, մինչեւ վերջ
անհունապէս սիրած է իր գաստիարակ Հ. Ալիշանը,
որուն կենդանագիրը շատ տեսակ գիրքով և հաղարաւոր
օրինակներով լուսագրեր է. բաց ասոմի, սա իր այդ
գաստիարակի հնախօսական հրատարակութեանց, վրձնով
և Կրչով՝ երախտագիտութեամբ օդակար եղած է **.

* Այս աշակերտը յետոյ իր մասնաճիւղը կը մշակէ Փարիզու Սո-
սերվատուր ամպաւ հաստատութեան մէջ. և Փարիզ գըտ-
նուած ատեն, վարժարանին ամբն ոլորդեւաբաշխութեան, միշտ նոր
նոր երգեր հնարելով, զանոնք նոյն հանդիսին երգած են աշակերտք, և
հանդիսականք գնահատած են այդ գեռաբուսիկ հայ երաժիշտ կարող
պատահնեն։

** Յիշեալ նկարիչ աշակերտը նոյն իսկ ուսմանց մէջ քաջագոյններէն
էր. Աւելիս երկհարիւրամեայ յոբելեանին առթիւ, ի նշան երախտագի-



Հ. Ալիշան եկեղեցական փիլոնով 15 մայիս 1861 :

մինչև մահուընէ զերջը, գեռ Հ. Ալիշանին նամակ կու գտր իր այս երախտագէտ և համակրելի աշակերտէն :

Գաղղիացի երեւելի տոեալ դէմքեր վարժարան յա-
ճախելով, մեր ազգի մասին շատ զոհացուցիչ տեղեկու-
թիւններ կ'առնուն : Հ. Ալիշան իր բնասուր ձիբքով, օ-
տարին զշացատան հրաշակերտ մը կը նկարագրէ և
հայութիւնը հանճարեղ ազգ մը : Անոնց կը պատմէ ազ-
գին հին պատմութիւնը, փառաւոր և յաղթական ան-
ցեալը, ազգիս բնիկ ողին իր ամէն ձիբքերով : Յատա-
գովը բանիբուն հսեաւոր մ'էր, Հայաստան հրաշակերտ
մը, կորուսեալ դրախտ մը ներկայացընելով, անոր գե-
զովն կը գիւթէր իր ունիդիրները : Հեռաւոր և խոր
աեսութեամբ, վարժարանի հանդիսաւոր տօնախմբու-
թեան օրերուն, Հայրենիքի մասին միշտ կը կարդար
գրաւիչ գաղղիերէն ճառեր :

Միով բանիւ, Հայութիւնը Եւրոպային ծանօթացընե-
րու համար, Հ. Ալիշան մեծ միջոց մ'էր. սակայն այս
ազգային խիստ կարեւոր ծառայութիւնը կարճ տեսեց:
Վասն զի, նու Փարիզու մէջ հաղին մի քանի տարի
մնաց : 1860 սեպտեմբերի մէջ, միարանութիւնս կը կա-
տարէ ընդհանուր ժողով, նոյն տաեն ինքն, ըստ կանոնի,
տութեան, մեզ նուիրեց երկու հատ մեծկակ ծովային իւղաներկ նկար-
ներ : Որոց մասին Հ. Ալիշան մահուընէն չորս օր տառջ, գեղարուեսափ
սիրահար՝ երիտասարդ վարդապետի մը զիտուղութիւնը ուղեց իմանալ.
Նա իրեն համեստութեամբ զիտուղութիւնը ըրաւ, ինքն ալ իբրև արհես-
տոգէտ մը : Էսցատրեց ամպերուն և ալեաց մը մասը բնակոն է և արը
քննադատելի . Էյնատարած էր իր գատուղութեան ձիբքը, նու իբրև
բանաստեղծ գեղարուեսափ մասին երբեմն շատ լաւ գտաստան կ'ընէր :

Յուրկում: Յ. Տամաս: Յ. Զամազ. Ա. Տէօլլէթ: Կ. Պաղիրի: Մ. Կիւրմիամ:



Աշակերտ Հօր Ալիշանի և Մուրատեան վարժարանի :

այդ ժողովին ներկայ կ'ըլլայ: Մի և նոյն ժողովին մէջ, կ'ուրոշուի որ ֆարիզու տեսչութեան պաշտօնը թողու և գայ վանք հաստատուի, վարելով քահանայացու աշակերտաց վերակացուի պաշտօնը: Թէև իրօք ֆարիզու պէս միջավայրի մը մէջ, իր վարժարանական տեսչութիւնը բազմապիսի օդուտներ ունէր, սակայն նոյն ատեն վանքին մէջ այդ իրեն առաջարկուած պաշտօնն ալ, դեռ աւելի օգտակար, նա մանաւանդ անհրաժեշտ կը նկատուի, վասն զի նոյն ատեն այդ պաշտօնին համար, փորձառու և ձեռնհաս միաբան կը պակսէր: Հ. Ալիշան չի մերժեր իրեն յանձնաւած այդ նոր պաշտօնը, միայն վարչութենէն կը խնդրէ որ առ ժաման իրեն ժամանակ շնորհուի, որ ֆարիզու վարժարանը գեռ աւելի կարգի դնէ և նիւթական գործերը կարգաւորէ: Կը շնորհուի իր օրինաւոր խնդիրքը: Շուտով կը վերադառնայ ի ֆարիզ: Վարժարանին յառաջացած աշակերտները 1864 Օգոստոսին, կ'աւարտեն իրենց ուսմանց ընթացքը: Մի քանի տարի անոնք կ'օգտուին չօր Ալիշանի եռանդադին դաստիարակութենէն. դէպի այդ պատկառելի դաստիարակն՝ անսահման համակրանք ցոյց կու տային: Հ. Ալիշան իր այդ ձեռնաստն մոտաւրական սանիկները (թուով 15) կ'առաջնորդէ մինչև ի Մարտէյլ. Բանաստեղծ նահապետին համար իր սիրելիներէն անջատումը սաստիկ սրտաշարժ էր. իրեն փափուկ բնաւորութեամբ՝ աշակերտաց փափկացած սիրու թունդ կ'ելլայ. կը տրոփէ դաստիարակ նահապետին կուրծքը, նաւը կը սուլէ, կը շարժի ու կը շարժէ սրտեր. ալեաց ճողիկւններու հետ գոռ

կը թնդայ աշակերտաց յուզուած կուրծքէն երախտագիտութեան որոտը կեցցէ Հայր Ալիշան... կը խշխայ նահապետին սիրական սիրու, խաչի նշանով օրհնելով դանոնք, կը թոթովէ, « Երթաք բարեաւ. Սիրելիք »...

Մեկնի նաւն, երթայ եւ հեռանայ,
Լընուն աչք ծըսով զոր արձակէն,
Եւ ծով ի միջի մեր լայնանայ,
Հետք ըլհետ ծածկէն...

Հ. ԱԼԻՇԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ Ի ՎԱՆՍ

Հրաժեշտի գառն յիշատակը կը նորոգուի մանաւանդթէ կը բորբոքի, երբ հնազանդութեան ձայնի հնչելուն, 1864 նոյեմբեր 3ին, ֆարիզու աշակերտները թողլով՝ վանք կը քաշուի: Առանձնացեալ, ճգնասուն, աշխարհքէ բոլորովին անջատ, և անոր բազմապիսի տուամիներուն անփորձ բանաստեղծ կրօնաւորին համար, ձեռնասուններէ բաժանումն շատ սրատուչ էր. այդ տեսարանները զինքը միշտ յուղած են:

Ֆարիզէն գառնալուն՝ անմիջապէս իրեն սահմանուած պաշտօնը կը սկսի. իրեն յանձնուած էր եօթը քահանայացու աշակերտներ, նա անոնց պէտք էր առաջնորդէր իրենց վիճակին կատարելութեան մէջ: Կատարեալ կրօնաւորը, կատարեալ աշակերտներ կը պահանջէր: Նա ըմբռունած էր, այդ իրեն յանձնուած պաշտօնի ծանրութիւնը՝ որ իր երկիւզած խղճին վրայ կ'աղզէր, իրեն համար անկից փախուստը անհնարին էր. հնազանդութեան ձայնը հնչուն էր, որոտացող, որուն տուանց խիզճ ընելու, չէր կրնար անլուր մնալ: Յառաջ վարեց այդ պաշտօնը. նա մի քանի տարուան մէջ իր հոգեառն աշակերտաց թէ դաստիարակ էր և թէ ուսուցիչ. անոնց ներշնչեց կրօնքի զինուորի գիւցազնական արիութիւն, անթերի հպատակութիւն, միաբանութիրութիւն, ազգին և հասարակութեան օդատակար ըլլալու պարտականութիւնը, անոնց իր

գրական անխոնից ու յամառ աշխատասիրութեամբ, գրական մարդ մը ըլլալու գեղեցիկ օրինակն եղաւ. բայց թէ աշակերտները ապագային իր այդ հոգեվառ և հոգելուս ներշնչած սկզբանց որչափ հաւատարիմ պիտի մնային, այդ ինքը մտածելու և հոգալու չէր, վասն զի ապագան գաստիարակութեան պատասխանատուութենէն դուրս էր, աշակերտին ապագան ոչ գաստիարակին, այլ աշակերտին ողջմուութեան կը պատկանի: Նա միաբանութեան ներկայացուց իր ձեռնասուն աշակերտները՝ չ. Վահան Մէհմէրեան, չ. Սահակ Հէքիմեան, չ. Սերովէ Քուշներեան, չ. Քերովէ Քուշներեան, չ. Յարութիւն Գաղէղեան, չ. Սրապիսն Պարոնեան և չ. Մատթիս Զոտոյեան:

Այս փոքրաթիւ աշակերտաց մէջ թէկ ոչ իր լայնածաւալ տաղանդին, սակայն կրօնական սկզբանց և միաբանական ոգւոյն նախանձորդ հարազատներ ունեցաւ: Այժմ ատոնցմէ չորսը վախճաներ են. ամուբն Քուշներեան և չ. Հէքիմեան բնական մահուամբ, իսկ չ. Սրապիսն Պարոնեան ի Պարսկաստան Սաւրայի մեր վանատան մէջ աղզայնոյ մը սրով կը սպաննուի*: Այլք գեռ կ'ապրին**:

* Զենք սւզեր կրկին նկարագրել այդ ողբերգու տեսարանը, որ յօրագիրս և Հօր Ալիշանի «Ս. Աւգոստինոսի խորհրդածութիւն» անուամբ զրքին մէջ մանրամասն ի ցոյց զրուած է:


** Այս գործին նպատակէն դուրս կը համարինք իր գրական աշակերտաց բանաստեղծ և պատմաբան չ. Քերովէ Քուշներեանի և ծանօթբանասէր Գաղէղեանի (Եսրայը Բիւղանդացւոյ) և անդղիագէտ չ. Մ. Չոտոյեանի մատենագրական արգեանց վրայ խօսիլն:



Հ. Ալիշան 3 մայիս 1865:



Հ. Քերոբիկ Պռչհնկուսի:



Հ. Արապիոն Պարոնեան:


Հ. Ալիշան այս աշակերտաց օրով, իր վարած կղերական վարժարանին փոքրիկ պարտէզին մէջ աշակերտաց շինել տուած է այն փոքր աւազանը, որ իր ձեւով նման է վահայ լճակին . որոշ էր Հ. Ալիշանի նպատակը : Հայրենիքի այն գեղեցիկ լճակի պատկերն հոն իր աշակերտաց աչաց առջև ներկայացնելով, անոնց կ'ուզէր ներշնչել տալ Երկնքէն յետոյ, Հայրենիքի նուիրական ուշը: Եւ նոյն լճակը դեռ իր վճիռ ջրով և մաքրավայր յիշատակով, կը դարդարէ մեր կզզեակը: անոր քրթունքները ծով ծիրանեգոյն ծաղիկներէ կը համբուշը մունքները ծով ծիրանեգոյն ծաղիկներէ կը համբուշը: ծաղիկները որոնք յիշել կու տան Հայրենիքի լճակին մէջ բուսած լիմ, կտուց ու Աղթամար դալարագեղ տաճարակիր ժայռերը:

Այս աշակերտաց օրով Հ. Ալիշան գրական համեստ հոգեշտուխ յիշատակ մ'ալ թողած է, « Հաղորդասէր » անուամբ գիրք մը: իր աշակերտները, քահանայ ձեռնաշնուրելէն քիչ առաջ, անոնց կը յանձնէ աստուածառէր դժուար երիցու Տ. Մկրտիչ Բականիի L'Anima devota della Santissima Eucaristia հաղորդուով հոգիներու յիսուսախօս գիրքը, « թարգմանեն . իւրաքանչիւր աշակերտ իրեն բաժին եղած մասը կը թարգմանէ, զոր յետոյ Հ. Ալիշան սրբագրելով, իր կողմանէ անոր կը կցէ սուրբ գիրքէն և մեր նախնեաց շարականներէն ազօթքներ, ուլաքական ազերներ: Աշակերտաց քահանայութեան առթիւ 1865ին լցո կը տեսնէ այդ գիրքը և որ նոյն թուականէն ի վեր ջերմեռանդ հոգիներու առ Բարձրեալն սրտէ սլացած կնդրուկի տեղ կը ծառացէ:

Հ. ԱԼԻՇԱՆ

ՏԵՍՈՒԹՅԱՓ. ՎԱՐԺԱՐԱԿԻ

Հ. Ալիշան իր հոգեւոր սաներուն հինգ տարի դաստիարակութիւն կ'ընէ . անոնց քահանայութենէն վերջը նա ազատ էր այդ պաշտօնէն . բայց միաբանութիւնը այդ գրասէր հասակաւոր միաբանը իր սենեակը , իր գրքերուն մէջ ազատ չէր թողուր . հազիւ թէ կ'աւարտի դաստիարակութեան պաշտօնը , միաբանութիւնս զինըը դարձեալ Ռափայէլեան վարժարանի տեսուչ կը դնէ : Նա 1866 մայիսին , նոյն վարժարանի պետն էր . այժմ 40 տարեկան էր , կրթական պաշտամանց մէջ իր բազմ ամեայ տաժանելի աշխատութեամբ՝ վարժած էր մանկանց բնոյթը և միտքը մշակելու գժուար արհեստին : Իր նոյն ատենուան պաշտօնին ձեռնուու կ'ըլլան Հ. Պ. Նազարեթեան , Հ. Ս. Պարոնեան և Նորայր Բիւզանդացի . այս երկու վերջինները իր ձեռնասուն քահանայ աշակերտները , իրենց վերակացու ջեսչին ամենայն եռանդեամբ կ'աջակցին : Երկու տարի վերջ՝ Հ. Ալիշանի իրքի աջ բազուկ կը տրուի Ռւխտիս այժմեան գեր . Արբան իդանատիոս կիւրեղեան : Վարժարանին նիւթական մատակարարութիւնը և ուսումնապետութեան պաշտօնը կը վարէր գեր . իդնատիոս : Հ. Ալիշան իր այդ օգնականի օրով , այլ ևս բոլորովին իր գրական աշխատութեանց կը պարապի .



Հ. Ալիշան 17 յունուար 1869:



Անդրեաս Ալբրուզին:
Կամաց համար գասառութիւնը և
գաստիարակութիւնը տաղակալի
գարձած էին. օրուան մեծ մասը
քաղքիս տէրութեան գիւանը և
գլամունը կ'անցընէր, հմտ գրչու-
շուաց և ճին տպագրեալ գրոց մէջ
կը պրապէք Հայոց պատմութեան
և վենետիկց հայ գաղութի վե-
րաբերեալ տեղեկութիւններ. նա
շարունակ իր երկասիրելիք գր-
լուածներուն համար առատ տ-
տաղձներ կը գտնար. Աշակերտաց
վրայ իր գլխաւոր աշխատութիւնն կ'ըլլայ անհնց բա-
րոյականը և կրթութիւնը հոգած:

Հ. Ալիշան այս վերջին տեսչութեան տաեն՝ հիւր ա-
շակերտ կ'ունենայ երկու Ալբրունիներն գրիգոր և Ան-
դրէսս: Նախ Անդրէսս կու գայ վենետիկ և ուղղակի
Հայր Ալիշանէն հայերէնի գաս կ'առնէ, յետոյ Գրիգոր՝
1870ին: Բայց այս թուականին Հ. Ա-
լիշանի առողջութիւնը շատ գիւրաբեկ
էր. կարելի չէր որ ինքը անձամբ գաս
տար: Գ. Ալբրունի, Հ. Ալիշանին հետ
ունեցած տեսակցութիւնը «Մշակ»ի
մէջ (1890 Ն. 50) նկարագրած է, ուս-
կեց կը յիշենք հետեւեալներն:

Ս. Ղաղար այցելելէն «Քանի մի օրից
և վարձում էի Ան Մարկօ հրապա-
րիկուր Ալբրուզի:



բակում իտալացի մի ուղեցոյց, որը ոտով տարաւ ինձ
նեղ և ողոր մոլոր փողոցներով ու փաքրիկ կամուրջներով
գէպի Բաֆայէլեան գպրոցը: — Գոլրոցը զետեղված է
մի լոյն կանալի վրայ գտնվող շքեղ հոյակապ պալատում:
Տայլ տեսչի հետ տեսակցութեան իրաւունքը ինդրած
մնելով, ևս բարձրացաց լոյն սահմանագործ, անցաց մի
քանի լինդարձակ, գեղեցիկ կորիզօրներ և շուտով բազ-
խում էի արգէն հայր Դեւոնդի առանձնասենեակի դուռը,
— Բաց... լովեց սենեակից մի թոյլ և խուլ ձայն:

Ես բաց արի դուռը և իմ աչքերիս ներկայացաւ
հետեալ տեսարաններ: Ահազին, լուսաւոր սենեակ, լի
գրքերի պահարաններով, որը բեռնաւորված էր բազ-
մութիւ գրքերով և թղթերով, մի քանի գեղեցիկ, թէ և
հասարակ բազկաթուներ, և մի գիվան, լայն և բարձր
պատուհանների վրայ մայթ գոյնի վարագոյրներ, — ահա
Ալիշանի սենեակը»:

Գուցէ Ալբրունիին և ընթերցողին այն նկարա-
գրուած սենեակը Հ. Ալիշանի մը պէս հարուստ մաքի մը
և ճոխ համբաւի մը աէր պատկառելի անձին համար շատ
խեղճ ու աղքատին երեցած է, սակայն նոյն խոկ այդ-
համեստ սենեակը իրեն աղքատասէր բնաւորութեան հա-
մար, շատ զարդարուն և շատ շռայլ նկատուած է, և հսն
բնակեր է վասն զի իր պաշտօնը կը պահանջէր:

Հետեւինք Ալբրունիին. «Առաջին բօպէին ես մարդ
չէի տեսնում սենեակում... Մի վայրկեան անշարժ կանգ-
նեցի սենեակի շէմքի վրայ... Ուզզելով հայեացքս գէպի
ահագին կոյտի մէջ տեղ: — Ինչպէս երեւմ է Հայր

Դեմնդը խորասուզուած էր ընթերցանութեան մէջ, երբ ես ներս մտայ: — Նա անմիջապէս տեղից բարձրացաւ, մտեցաւ, մեկնեց ինձ իր ձեռքը և ձեռքիցս բռնած՝ տարաւ ինձ իր գրասեղանի մօտ, խնդրելով նստել: Ես ասացի թէ ով եմ....

Ալիշան միջին հասակի, շատ նիհար, հիւանդուս գէմքով, թոյլ կազմուածքով, մստ 50 տարեկան մտրդ էր: Նա սիրեց խօսել, ձայնը թոյլ էր և խուլ, խօսակցութիւնը անդադար ընդմիջում էր չոր, անախորժ հազով: Խօսելու և պատասխան ընդունելու ժամանակ նա անդադար կարմրում էր, ինչպէս մի գերմանացի համատ պրօֆեսոր....

Ես յայտնեցի որ կուզենայի նրանից հայերէն լեզու դասեր առնել:

— Կը ներէք, չեմ կրնար, կուրծքս թոյլ է, բժիշկները արգելած են ինձի շատ խօսել և բարձր խօսել, բայց կը յանձնեմ ձեզ մեր դպրոցի օգնականին, Հայրիկնատիուսին....

Ես չնորհակալութիւնս յայտնեցի: Ես կրկն կարմրեց:

— Հրամանքդ ժամանակ առ ժամանակ կը գրէք Թիֆլիսի լրագիրներուն մէջ, շարունակեց նա:

Խօսակցութիւնը անցաւ մեր մամուլի, մեր գրականութեան վրա, ապա կովկասեան հայերի վրա....

Մնմիջապէս զանդ տալով, Ալիշան հրամայեց կափէ բերել: Վենեցիայի Մխիթարեանները ոչ մի հիւր չեն ընդունու, առանց կափէով հիւրասիրելու:

Ես ասացի, որ պարապել եմ մի ձմեռ զեէննայի Հայրերի մօտ, և աւելացրի որ կուզենայի վճարել դասերիս համար:

— Հարկ չը կայ, մենք ստակ չենք վերցնի ձեզմէ....

— Բայց հայր սուրբ ես կուզեմ վճարել, և կարող եմ վճարել....

— Հարկ չը կայ, կրկնեց նա:

Սահիպուած էի ընդունել և նորից չնորհակալութիւնս արտայայտել....

Մկանցի շարաթը չորս անգամ դասեր առնել տեսչի օգնական հայր իդնատիոս կիւրեղեանի մօտ (այժմ արբահայր): Հայր սուրբի խուցի մէջ նստած, Եղիշէ, Խորբենացի, կամ մի այլ հայոց կլասիական գիրքը կարգալով իմ դասերիցս խրաքանչիւրը մի ժամի տեղ, շատ անգամ երկու երեք ժամ էր տեւում: Գիրքը թողած՝ շատ անգամ սկսում էինք վիճել երիտասարդ վարժապետիս հետ:

Պէճը մեծ մասամբ եկեղեցու, կրօնի մասին էր, լուսաւորչական, կաթոլիկ և բողոքական եկեղեցու մասին....»

Սակայն ինչ որ գիտենք այդ խօսակցութիւնը ոչ այնքան կրօնական ինգիրներու մէջ կ'երկարէր, որչոփուսումնական նա, ինչպէս կ'ըսէ մեր վեհն, շարունակ կը հարցնէ եղեր եւրոպական գիտական բառերու հայերէնները. և թէ ինչպէս նոր բառեր կընայ կազմուիլ. իրենց ուսումնական վիճաբանութեան ամենէն մեծ և օգտակար հրատապ նիւթն այդ էր: Դիւրին է գուշակելն, որ Արծրունին ըլլալով յօդուածագիր, մանաւանդ

թէ նոյն իսկ ապագային հրապարակախօսութեան մեծ մշակ մը ըլլալու մտադրութիւն ունենալով, ի հարկէ՝ նա պէտք էր արհեստական անձանօթ բառերու մասին՝ իր հայերէնի վարժապետէն որոշ գաղափարներ առնէր. և անոր համար նա ժամերով այդ նիւթին վրայ կը ծանրացընէր իւր խօսակցութիւնը։ Արծրունին զայդ չի յիշէր, վասն զի ասովի իր ընթերցողաց հետաքրքրութիւնը պիտի չի շարժէր այնչափ, որչափ իր մէջ բերած միջանկեալ կրօնական անցողակի խօսակցութիւններով, որ հազիւ երբէք պատահեր են։ Հրապարակախօսը այդպէս կը գրէ. և դա իր անհետն է... բայց ընթերցողը պիտի հետաքրքրութիւն չ. Ալիշանի բարձրաստիճան օգնականը ի՞նչ պատասխանած է Արծրունիի այդ կրօնական առարկութեանց. ուշ դնենք լրագրադետին. կը պատասխանէ ուսուցիչն.

— « Հրամանքդ բողոքական երկրում ուսումդ ստացած ըլլալով, կը նկատեմ որ աւելի համակիր էք բողոքականութեանը, ասում էր ինձ իր մեղմ և ներդաշնակ ձայնով համակրելի վարժապետա... »

— Ոչ, հայր սուրբ, ինձ համար մի և նոյն է, ինչ կրօնի էլ պատկանի հայը. ես ծնվել եմ լուսաւորչական ծնողներից և նրանցից եմ ստացել իմ առաջին բարոյական գաղափարներս, բարձրագոյն ուսումն և համոզմնէրս՝ բողոքական գերմանիայից եմ ստացել, իսկ հայոց, մայրենի լեզուի հմտութիւններովս պարագան կը լինեմ ձեզ, կաթօլիկ հայերին... գուցէ այդ պատճառով ես միակերպ եմ վերաբերվում գէպի լոլոր գա-

ւանութիւնները, առանց որ և է մոլեռանդ զգացմունքի... »

Վարժապետ ժպտում էր իր մեղմ ժպիտով, ապա յանկարծ կտրում էր մեր վիճաբանութիւնը։

— Սակայն ժամանակը կանցնէ, դառնանք մեր խորհնացուն։

Ամբողջ վեց ամիս, շաբաթը չորս անգամ դասերս առնելով հայր իգնատիոսի մօտ. ես գասերիցս յետոյ կամ պատում էի գպրոցում, կամ մոնում էի հայր Ալիշանի սենեակը։ — Գպրոցը ինձ հետաքրքրում էր։ Գպրոցի ամերող կազմակերպութեանը և ուղղութեան վրա տիրում էր հայր տեսչի, Ալիշանի ոգին։ Գպրոցն ուսումնասիրած վնելով, կարելի էր գաղափար կազմել և նրա զեկավարի ուղղութեան, բնաւորութեան ու լայն համամարդկային գաղափարների մասին։ Ալիշանի անխարդախութիւնը, մարդկան մասին, անկեղծ բնաւորութիւնը, նրա լայն մարդասիրական և հայրենասիրական անձնանուեր հանձարը կերպարանաւորվում էր գպրոցի թէ ամբողջութեան և թէ նրա իւրաքանչիւր մանրամասնութեան մէջ։

Բաֆայէլեան գպրոցը նրա ձեռքի տակ այնպիսի բարձրութեանն էր հասել, որ համարվում էր ամբողջ վենեցիայում ամենալաւ միջնակարգ գպրոց։ Բազմաթիւ խտալացի հարուստ ընտանիքներ խնդրում, աղաջում էին, որ գպրոցումն ընդունէին իրանց զաւակները, սակայն միշտ մերժումն էին ստանում. Հայր Ալիշան միշտ պատասխանում էր որ գպրոցը միմիացն հայ զաւակների կրթութեան համար է նշանակված, առանց խարութեան

Հայ աղբութեան պատկանող աշակերտների դաւանութիւնների...:

Հայր Ղեւոնդը յայտնի է բոլոր հայերին, ամբողջ մարդկութեան՝ որպէս ուսումնական մարդ, որպէս դրոզ և բանաստեղծ:

Մեղանից ով չը գիտէ, չէ կարդացել նրա բազմաթիւ դրուածները, կամ գոնէ նրանց մասին լսել... Հարկ չեմ համարում այսուեղ մի առ մի թվել նրա բազմաթիւ և համակընելի երկաստիրութիւնները:

Բայց գուցէ շատերը չը գիտեն, որ Ալիշան խելացի մանկավարժ էլ է: Մայրենի լեզուն նրա ձեռքով զեկավաճ դպրոցի ուսմունքների հիմքն էր կազմում, հայրենագիտութիւնը դպրոցի բոլոր ուսմունքների ողին էր....

Երբ ես մտնում էի դպրոցի այն մեծ դահլիճը, որտեղ աշակերտները զբաղում էին նկարչութեամբ՝ ես ապշած էի միում: Հայր տեսուչը պատուիրել էր նկարչութեան ուսուցչին, որ աշակերտները մեծ մասամբ նկարելին հայոց պատմութեան հետ սերտ կապ ունեցող և երեխաների վաս երևակայութեանը գլխաւորապես հայրենիքը յիշեցնող գէմքեր և տեսարաններ... Մի տեղ տեսնում էիք վարդան Մամիկոնեանի ընդօրինակած կենդանագիրը, մի ուրիշ տեղ Մնիի աւերակների տեսարանը, և այն և այլն....

Եւ առհասարակ, որպէս մանկավարժ, հայր Ղեւոնդ փորձված և խելացի մանկավարժ է:

Վեց ամիս շարունակ հայր իգնաստիոսից շարաթը

չորս անգամ դասեր առնելուց յետոյ, երբ հասաւ վենեցիա թողնելու օրը, ես կրկին գիմեցի հայր Ղեւոնդ Ալիշանին, խնդրելով որ դպրոցի օգտին գոնէ ընդունէ ինձանից դասերիս վարձը: Բայց բոլոր թախանձանքներս զուր էին. — Հայր Ղեւոնդը ոչինչ կերպով չէր ուզում ինձանից վող ընդունել:

Ճարահատված, քաղաքից իմ դուրս դալուց մի քանի օր առաջ, զնեցի գրավաճառանոցում՝ ֆրանսիական կլասիկների ժողովածուն և ընծայեցի թափայէլեան դըպրոցի գրադարանին, որպէս զի գոնէ մի կերպ արտայայտեմ իմ երախտագիտութիւնս սուրբ հայրերին նրանց սիրալիք ընդունելութեան, հիւրասիրութեան և վեց ամիս շարունակ ինձ տուած դասերի համար:

Հայր Ալիշանի հետ վեց ամավայ ընթացքում՝ բաւական մօտիկ ծանօթութիւն կապելով, ես մի անգամ առիթ էի ունենում նրա հետ մոերմարար խօսել ընդհանրապէս մեզ հետաքրքրող հարցերի մասին:

Մնկասկած Ալիշանի հետ խօսողը կը համոզվի որ նա կաթօլիկութիւնից դուրս հայոց աղքե համար վըըկութիւն չէ տեսնում: Բայց անկողմնապահ և համբերով ժամանակակից ոգի ունեցող մարդը շատ լաւ գիտէ որ և լուսաւորչական հայը՝ լուսաւորչական եկեղեցուց դուրս հայերի համար ոչինչ փրկութիւն չէ տեսնում: իսկ բոլորականը բոլորականութիւնից դուրս փրկութիւն չէ տեսնում.... Ուրեմն թող ամէն մարդ ունենայ այդ համոզունքները և թող մի և նոյն ժամանակ Ալիշանի պէս պայծառ, լայն, ընդհանրապէս մարդասէր գաղափարներ

ունենայ, նրա չափ հայրենասիրութիւն ունենայ, — և այն ժամանակ անձնական հայեացքները խրաբանչիւր գաւանութեանը պատկանողի կողմից՝ ոչինչ վտանդ չեն



Ռափ. վարժարակի դահլիճը:

Ներկայացնի ընդհանրութեան համար, ոչինչ երկպառակութեան սերմեր չեն գցի տարբեր կրօնական հայեացքներ ունեցող մարդկանց մէջ, երբ նրանք այդ հայեացքներից բարձր կը դասեն ընդհանրապէս ազգը սիրելու զգացմունքը:

Այդ տեսակ լայն հայեացք մենք կարող ենք սովորել վենեցիայի Մխիթարեաններից, մանաւանդ Ալիշանի պէս համոզված մարդուց: Կարելի է Ալիշանի պէս ջերմ, նոյն իսկ մոլեուանդ կերպով սիրել կրօնը, բայց մի և նոյն ժամանակ պէտք է Ալիշանից օրինակ առնել թէ գէպի ուրիշ գաւանութիւնները նրա ունեցած լայն համբերողութեան ոգուց և թէ հայրենասիրութեան նրա անսահման և անձնուեր զգացմունքից....»

Ասոնք են այն ջերմ տպաւորութիւնները, «ըստք Արծրունիի վրայ թողոցեր են Ալիշանը, հայերէնի բարձրաստիճան ուսուցիչը, Ռափ. Վարժարականի կրթական ընթացքը և առհասարակ մեր միաբանութեան հիւրընկալ ոգին: Եւ ազգին յառաջադիմութեան համար առեղկալ ոգին: Եւ ազգին յառաջադիմութեան համար առեղծուած և նուիրագործուած մեր հաստատութիւնը նոյն նկարագրեալ ոգիէն տարբեր կերպարանք մը չէր կրնար ունենալ. Մխիթարայ տան համար այդ ոգին պարտք մ'է և ոչ առաքինութիւն...

Մեզմէ առաջ զ. Արծրունին կանխեց, ցոյց տուաւթէ Ալիշան իր այդ պաշտաման մէջ ի՞նչ էր, ի՞նչ ոգուպ կ'աշխատէր, ի՞նչ կը ներշնչէր աշակերտաց, և ի՞նչ փառքի մէջ կը պահէր իրեն յանձնուած այդ կրթական աւանդը: Ճշգրիտ էր այդ նկարագրիրը, նոյնը պիտի ընէր նաև ամէն անհատ, որ բարեբաղդութիւն կ'ունենար Հ. Ալիշանի հիւրընկալութիւնը վայլելու և գործունէութիւնը տեսնելու:

Հօր Ալիշանի գաստիարակութեան վերջալցուի աստղն է Պ. Արքիար Արքիարեան. այդ ծանօթ ու սիրուած



Ա. Արքիարեան:

Հրապարակախօսը Հ. Ալիշանի ամենէն փայլուն, ըզդայուն և երախտագէտ աշակերտն երեցաւ իր այն բազմաթիւ գրութեանց մէջ, որոնք արժանաւոր երկրպատկութիւններ էին առ իւր պաշտելի գաստիարակն. նա իր դալար վառվուուն հասակին մէջ, իր աչաց առջև ունէր այն մեծ բանաստեղծը, զոր ապագային պիտի անմահացընէր իր զարգարուն և դիւթող գրչով. և այդ պատճառաւ, նա իր աշակերտութեան ատեն, իր դիտող աչուրները չի հեռացըներ անոր նիստ ու կացէն. հետաքրքրութեամբ ունկնդիր կ'ըլլայ անոր ամէն մի խօսքերուն. տարիներու սահող շրջաններուն հետ չեն շին շինանիր այն ամէն յիշատակները, որ Հ. Ալիշանէն իրեն աւանդ մնացեր էին. Հրապարակախօս աշակերտը երբ իր դաստիարակի մասին խօսելու առիթ գտեր է, աշակերտութեան օրերու յիշատակները առասօրէն բխեր են իր գրչին ծայրէն: Հոս կարելի չէ ցողացընել այն յիշատակները որոնք իր լրագրական ջինջ կապոյտին մէջ ցրուած կը պլազման. անտարակոյս նա մի օր ի յարգանս իր պատկառելի մեծ բանաստեղծ գաստիարակին, ընդարձակ գրութեան մը մէջ, կը խառացընէ անոր տեսչութեան յիշատակները. բայց և կարելի չէ անյիշատակ թողուլ իր այն մէկ համառօտ գրութիւնը ուր շատ որոշ գուրս կը ցայտի հօր Ալիշանի գաստիարակութեան ողին. ահա թէ ինչ էր Ալիշան.

« Իմ յիշատակներս — կը գրէ Արքիար — Հ. Ալիշանի կեանքէն կը սկսին քառորդ գար մը առաջ. 1867ի մայիս ամսէն, երբ մասյ Ռաֆայէլեան վարժարանը: Հոն

անցուցած եմ երեք տարիներ ու շրջանաւարտ եղած։ Հրապարակադրի կեանքիս մէջ շատ անգամ առիթ ու նցած եմ խօսիլ վենետիկեան յիշատակներուս վրայ։ Ամէն ատեն և այժմ ալ, երբ ուղած եմ վերլուծել այն զգացումներն որք սիրաս կը կապեն Ռափայէլեան վարժարանին հետ, երբ ուղած եմ վնասուել թէ ինչու համար այնքան խորին կերպով կը սիրեմ վենետիկն, աչքիս առջեւ ներկայացած է Հ. Ալիշան, որ Ռափայէլեան վարժարանի տնօրէնն էր։ Կը յիշեմ զինքը խոհուն, մտածող միշտ, խորասուզուած իր մեծ աշխատութիւններուն մէջ, բայց միշտ սրտի տէր, միշտ յիշող թէ այդ տղաքներն յանձնուած են իր խնամքներուն, անոնց միտքը, անոնց սիրտն իսկ պիտի կը թէ ու ազնուացնէ, և անոնց կեանքն ալ առողջութիւնն ալ իր խնամքներուն յանձնուած են։ Եւ ահա կը մոռնայ անցեալն ալ, պատմութիւնն ալ, ապագան ալ, ամէն ինչ, և իր ժամերուն մեծ մասը կը զոհէ այդ տղաքներուն, առանց տրտոնջի մը, առանց գանգատի մը, այլ ընդհակառակն ուրախութեան և գոհութեան զգացումներով, կը կատարէ ինչ որ ուրիշներուն պարտականութիւնն էր և ոչ տեսչին՝ որ միայն վերին հսկողութիւն մը ունենալու պարտաւոր էր։ « Կը յիշեմ զինքն որ երբ հիւանդ էինք, անոտնաձայն լոիկ մնջիկ կուգայ մեր անկողնին քովն ամէն օր, կը հոգայ մեր առողջութեան համար, կը քաջալերէ զմեզ ու կը խնամէ իր ձեռքով։ Կը յիշեմ թէ ի՞նչպէս հոգ կը տահնէր որ ամէն մէկերնիս բանի մը կարօտ չըլլանք։ Կը յիշեմ զինքը քիչ մը անաշառ գէմքով, բայց միշտ

երկնային հրեշտակային ժամանակ մը որ կը ջանայ միշտ աշակերտները « Աստուածահաճոյ » ուղղութեան մէջ դնել։ Գուցէ իր տուած ուղղութիւնը « Աստուածահաճոյ » ըլլար, բայց մեզ միշտ հաճոյ չէր, սակայն այնքան բարութեամբ, այնքան խղճի մտօք և այնքան ներողամիտ ոգւով կը վարուէր, որ մինչև հիմա ալ ուրիշ բան չեմ պահած որտիս մէջ բայց եթէ ամենազաղցը յիշատակ մը։

Բայց ինչ որ անմոռանալի է և խորին կերպով աղդած է որտիս վրայ, այդ Հ. Ալիշանի հաւասարութիւն սիրող ոգին էր։ Դպրոցին մէջ կային աշակերտներ, որք ձրխարար ընդունուած էին, Ռափայէլի կտակին տոկոսով, կային ալ որք կիսաթոշակ կամ լիաթոշակ էին այսինքն տարեկան 30էն մինչեւ 50 ոսկի կը վճարէին։ Ծնդհանրապէս բոլոր եկեղեցականները, մանաւանդ վանականները, քիչ մը շատ գրամասէր են, ոչ թէ իրենց անձին համար, այլ իրենց միաբանութեան համար, և բնականաբար պէտք էր որ Ռափայէլեան վարժարանին մէջ ալ յատուկ ուշադրութիւն գրաւէին լաւ վճարողներն։ Բայց բնաւ ո՛ւ և է խորութեան հետք չէր տեսնուեր, ոչ ոքին յայտնի էր թէ ո՞վ է լաւ վճարողն, ո՞վ է գէշ վճարողն, ո՞վ է ձրին։ ամենակատարեալ հաւասարութիւն կար։ Քրիստոնէական բարձր գաղափար մը կը տիրէր, Հ. Ալիշանի այդ ոգին կը ներշնչուէր ամէնուն ալ»։

Երկու մեծ և փորձ հրապարակախօսներ, որոնք անձամբ ականատես եղեր են Հ. Ալիշանի գաստիարակութեան օրերուն, իրենց յիշեալ նկարագրութեամբ, զհայր

Ալիշան կը ներկայացընեն կատարեալ և համակրելի դաստիարակ մը. ընթերցողին համար անտարակոյս բաւական են այդ վկայութիւններն, որոնք անաշառ լրագրապեսներէ բխած են.

Արփիառ և իր դասընկերները 1870 օդոստոսին կ'աւարտեն չ. իրենց գասընթացքը. Ալիշանի այդ աշակերտները հայրենիք վերադառնալով, այլ ևս ինքը դաստիարակութեան պաշտօնը յառաջ վարելու այնքան խանդ ու եռանդ չունենար. նա իր ամենադարձար հասակէն շարունակաբար այդ պաշտօնը վարելով, բնական էր որ շատ յոդնած ըլլար և շատ-ալ տուժած*, քանի որ նա միանոյն ատեն իր գրասեղանէն իր սիրած գրչէն ու գրքերէն չէր հեռանար. իրեն համար հանգիստ, մոզի անդործութիւն չկար, շարունակ պէտք էր մոտածէր վարժարանի հոդը, աղոց կրթութիւնը, յառաջադիմութիւնը և իր անձնական ուսմունքները, որոնց սէրը զինքը հրավառած էին, անոնցմէ բաժնուիլը կարելի չէր. Նա թէև գեր. իդնատիսս բարձրաստիճան օգնականին ամենայն ինչ յանձնած էր, և վասահ էր անոր խղճամիտ արթուն ու եռանդուն գործունէութեան, սակայն մոտածելով որ ինքն է վարժարանի պատասխանատուն, միայն նոյն մը-

* Դաստիարակութեան մարդիք գաւազանը և յարտաշրժ զիքը երիտարդ հասակին մէջ ներմէցուցած էին նահատեամբն մաշերը. Նու գաղիւ 29 ապրելան կը զըէ.

«Նա մանւանդ զի քան ըզտիս մեծափայլէ յիս ցրտութիւն, Յերիսասարդս անկանելով ի գիտակո՞ հրս սառամանեաց».

տածութիւնը զինքը հանգիստ չէր թողուր որ հանդարտօրէն պարապէր իր սիրած գրականութեան:

Ահա այսպիսի երերեալ վիճակի մէջ, իր խոնջեալ պարտասեալ ժամուն, ֆարիզու աշակերտները կու դան վենեսեաիկ, իր դաստիարակութիւն հովանաւորութեան տակ մոնելու. ուրեմն չ. Ալիշանի պաշտօնը փոխանակ թեթեւնալու, գեռ աւելի կը ծանրանայ: Բրուս-Գաղղիական պատերազմը կը սախալէ գոցել ֆարիզու վարժարանը. աշակերտաց մէկ մասը արգէն խկ ուսմանց ընթացքը լրացուցած ըլլալով, հայրենիք կը վերադառնան, իսկ մնացածը իրենց տեսչով՝ կու դան վենեսեաիկ՝ չ. Ալիշանի քով: Բնական էր որ այդ աշակերտաց կրթութեան պատասխանատութիւնը՝ չ. Ալիշան իր նոյն գիրքին մէջ յանձն չէր կրնար առնել. սակայն և բնական ալ էր որ միանոյն վարժարանի մէջ երկու վարիչ չէր կրնար ըլլալ. բայց չ. Ալիշան դաստիարակին համար ամէն բան հնաւրաւոր էր. չ. Հմայեակ Պապիկեան որ ֆարիզէն եկած աշակերտաց տեսուչն էր, չ. Ալիշան զինքը իր պաշտօնին մէջ հաստատել կու տայ, թէի նա ըստ պատշաճութեան, կը հրաժարի ատկէ, սակայն չ. Ալիշան կը յաջողի: Նոյն ատեն այդ գաղթական աշակերտները իրենց յատուկ տեսուչ ունենալէն զատ, կ'ունենան նաև յատուկ վարդապիտ ուսուցիչներ: Մինչեւ 1872 յուլիս, այս ընթացքով չ. Ալիշան կը վարէ իր տեսչութեան պաշտօնը, զոր միարանութիւնը իր գեր. օգնականին յանձնելով, զինքը վանք կը կոչէ, ուր սահմանուած էր մինչեւ ցմահ աքնելու, խոկալու և գրելու:

Առաջին տարիները չօր Ալիշանի նիւթական գլխաւոր աշխատութիւնն կ'ըլլայ վանքին մատակարարական դործը հոգալը . նա մի քանի տարի այդ պաշտօնը կը կատարէ, յետոյ տեսնելով որ թէ մատարական և թէ նիւթական հոգածութիւնը ի միասին՝ կը հիւծեն իր յոգնած մաշած հիւտուածքը, կը հրաժարի մատակարարական պաշտօնէն. նա 1884 գեկտեմբերին հրամանաւ Ռւսական վեհին՝ այդ պաշտօնը կը յանձնէ վ. Հ. Եւգինէսս վ. Ռոկանեանի, և ինքը կը մնայ մի միայն աթոռակալի պաշտօնով, զոր ստացած էր 1877 օգոստոս 2ին. նա նոյն օրէն սկսեալ, մինչև իր ծերունազարդ արևմուտքը, ներկայ գեր. իդնատիսս կիւրեղեան Աբբահօր փոխանորդի — Աթոռակալի պաշտօնը կը վարէ: Թողղով զինքը այդ պատկառելի պաշտօնին անմեղունակ ու համակրելի դործունէութեան մէջ, մենք այժմ թարթափինք իր գրական երկասիրութեանց ովկիանին մէջ:



Հ. ԱԼԻՇԱՆԻ

ԳՐԱԿԱՆ ԱՐԴԻՒԽՆ ՔՆԵՐԸ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԵՐԿԵՐ

Հայր Ալիշանի ազգային այն համակրանքը, որ գրեթէ հակառակ իր աննկարագրելի համեստութեան աստուածացումի կերպարանք առաւ, կը բխի իր հայրենասիրական գրչի գիւթող անզուգական արդիւնքէն: Ազգին սիրաը հայրենիքի բացով բորբոքեց՝ գոզընելով իր գրեչը ազգին ամենէն զգայուն, ամենէն համակրելի և ամենէն պաշտելի զգացմանց: Այդ մոգիչ աթոռանց արշալոյսէն պիտի բարձրանանք իր արփենւոյն զենիթը և խոնարհելով՝ սիրանօք պիտի գիտենք իր երփնագեղ վերջալոյսին երկարածիդ փայլն ու շողն:

Գրական աշխատութիւնները սկսած է նորընծայարանէն: Պատանի հասակէն՝ գրած է ճառեր, զոր կարգացած է հասարակաց ներկայութեան՝ վանքի մատենագարանին մէջ: Իր այդ աշխատութիւնները մեզ ծանօթ չեն. միայն այսքան գիտենք, որ ատոնք գրական կրթութեան համար աշխատուած գրութիւններ են, որոնք իբրև քըննութեան թեզ հասարակաց կարգացուեր են: Իր ուսանողական ընթացքի վերջերն նա սկսած է հրատարակու-

թեան արժանի գործեր դրել։ Տակաւին քահանայ չի ձեռնադրուած, իր գրչէն գեղեցիկ բանաստեղծութիւններ կը հանէ, որոնք յետոյ հրատարակուեր են. միենայն ատեն նու պատրաստած է քաղաքական աշխարհագրութիւնը. զոր տարիներ վերջը, կերպարանափոխելով հրատարակած է։ Վարժարանէն պատրաստուեր է ըլլալ աշխայժ, բեղմնաւոր մատենագիր մը. և կ'ըլլայ։ Նա շատ ապրեցաւ և շատ ալ գրեց, վասն զի գիտցաւ յարգել ժամանակը որ տոկուն հանձարի համար անհամեմատ դանձ մ'է։ Եալս և առաջ գրչին ասպարէղն կ'ըլլայ «Բազմավէպ»ը։ Իր սիրելի և պատկառելի ուսուցիչն Հ. Գաբրիէլ վ. Այլազովսկի* 1843ին գեռ նոր հաստատած էր այդ վանական ամսաթերթը, որուն Հ. Ալիշան ցկեանս չի լինացեց իր համբուրելի դրիչը։ Իր մը-

* Հ. Ալիշանի երիտասարդութեան ժամանակակից սպին էր. իր տարօրինակ խանդավառ գործունէութեամբ, ամբողջ երիտասարդութիւնը գէպ ի գործ և գէպ ի անխանջ աշխատանք կը մղէ. իր աղքեցութիւնը գորաւոր էր և արդիւնաւոր. իր ժամանակէն մեացած ծերունիներն մեծ պատկառանքով կը խօսին անոր մասին։ Նա հասարակութեան սիրելին էր, վասն զի ամբողջ միաբանութեան սիրոյն նուիրագործուած սպի մ'էր։ Երիտասարդ հասակին մէջ եղած է վանքիս վարչական ժողովի անդամ, տարիներով վարած է ուսուցչութեան և գաստիարակութեան պաշտօններ։ Վանքին զրական գործունէութեան աղքեցիկ զեկավարն եղած է. ինչ որ իր օրով զբքեր տպուած են, զանոնք խնամքով սրբազնածէ, և շատ անդամ ուրիշներու հեղինակութիւնը սրբազնով, նոր ձուլած է հրատարակած՝ առանց իր անուան յիշտակութեան։ Կարելցական պարագաներու զոհ մ'է այն, որուն կորովամիտ ընդունակութենէն կ'ակնկալուէր միաբանութեան և զրականութեան մեծ մղում տուող շատ գործեր։



Հ. Գ. Այլազովսկի դաստու Հ. Ալիշանի

տաւորական գեռաբուսիկ գործոնէութեան ամէնէն եւ ռանդուն քաջալերն կ'ըլլայ Հ. Գ. Այլվազովսկի, որ ինչպէս տեսանք, պատահնի Ալիշանին ամենէն քաջ ուսուցիչն եղած էր : Նա իր ոգեկառ խրախոյսներով՝ գրելու պատրաստական Հ. Ալիշանը կը մղէ գրական գործի կատարելութեան : Այս և ուրիշ բազմաթիւ գեղեցիկ պատճառներով, Հ. Այլվազովսկի՝ Հ. Ալիշանի յասուկ համակրանքին և յարդանքին կ'արժանանայ :

Հ. Ալիշանի գրական արշալոյսի այս անցողակի նկարագիրն տալով, կը փութանք հաւատարիմ մնալու, ներկայ պարբերութեանս վերնագրին :

Նահապետին գեղանի տաղանդին անդրանիկ բարունակն եղաւ բանաստեղծութիւնը . տակաւին տասնեինը տարեկան, վանական անձուկ պարխազներու որբազան միջնարերդին մէջ, ուր նա ոչ ոք կը տեսնէ ի բաց տռեալ իր դաստիարակը և ուսուցիչն . նա աշխարհի ժխորի մէջ զանգուած, տիեզերաց ամբոխի ու խառնիճազանձի մէջ սնած ու կազզուրուած տաղանդաւոր պասնամներու ժամով և դրեթէ զուգահաւասար աւիճնով՝ պերճօրէն կը լարէ կը թնդացընէ իր տաւիզը : իր այդ հասակի վիճակը՝ զինքը ոչ միայն մարդկութեան ամբոխէն, այլ և իր բանաստեղծի դրիչը զարդարելու և մշակելու գործիքներէն բոլորովին զրկած էր . նա նոյն ատեն աստուածաբանութեան աշակերտ էր, իր մոքի զէնքերն և իր ամէնօրեայ մոքի անունդներն էին վլիճակին կարեւոր Աստուածաշնչի, Թովմայ գեմբացիի սրոճումները : Նահապետ արեղային պարսպապատ իրճիթէն ներս չէին թափանցեր ոչ մի

բանաստեղծի, զգայուն և թրթուն քնարի ներդաշնակ ձայնը . սակայն նա կը չէիր զեփիւոը, կը տեսնէր երկնաւ կամարը որ իրեն անդրանիկ մնասներն կ'ըլլան :

«Ու յԱլիմպոս խնդրեմ ի խրոխան ինձ Մուսայ, Որ ի խոնարհ խըդի մարդկաւ ի թռուչան»
ի քարձութիւնըս նըկըբահէ ոչ ուսայ, Ընկուղենայս շատ ինձ սոսիւն յերգաբանա » :

Նա կ'աղաչէ որ զով ոգի Զեփիւոը ըլլայ իր քնարին թելադիր, զայն կ'ընտրէ իրեն երգահան ու երգակից, Կ'աւետէ վարդերուն

« Աւետիս ձեզ՝ վարդ, Կարկաչ երփնաղարդ, Մեղու սոկեթեւ, Ան դայ թեթեւ, Զեփիւ զըւարթուն, Մարգաց կենաստուն » :

Հարկ չեայ որ իր ժամանակակից Մուսաներու ոիւրելի ողին Զիւկոն՝ դրգուէ Նահապետին խանդը . մանուշակինքը վառած էր իր միտքը, նա իր խզիկի անշակ երկինքը վառած էր իր միտքը, նա իր խզիկի անշակ վարագոյը պատուհանէն կը տեսնէ

« Նուաղին ասաեղք, նուաղի լուսին, Տիւ պատրաստէ զզարդն երփնաղեստ, Եւ արտասեակ ի գեղ կուսին Գողանայ զբիբա յառեալ համեստ » :

Կը տեսնէ Ժիտանեան սեամին վրայ տարածուած ագեմնեան սոկեճամուկ գորգը, երերուն սուրբ շամանդաղը, գոյն նոնենի ծագած արեւոն կոյս գէմքը : Նա մեզ կը գոյն նոնենի ծագած արեւոն կոյս գէմքը : Նա մեզ կը նկարագը արեւելքը, մենք կը դիտենք անոր գրչին հարուստ գոյնը .

« Խթրեւ հրանկեց շուրթըն լերանց
Գլուխ բըզրոյն դունի հուր.
Կողք ծաղկածինք տանուն ըզիսանձ
Ըզրյան արքեալ կենսատուր...;
Խաչապակ աշտարակին
Փայտէ զընտակ վառ ի վառ.
Բաժակք ծաղկանց ի ցող նրբին
Սրոկն ըզթերթուն կայտառ»:

Արեգային բանաստեղծ ոմափած ողին իր խղիկին մէջ
չի կրնար բանստարկուիլ՝ նաև կը թափառի բնութեան
գեղեցկութեան մէջ, ուր կը խօսի Պառնասներու յաւէր-
ժահարսանց՝ արեգի շողին, վէտ վէտ առուներու, մար-
դարտաշար ծաղկանց հետ։ Թողոնք որ նա ձեռն ի
ձնոտին՝ դիտէ առաւոտը և մենք ալ իր բանաստեղծ
ողին։

« Ձեռն ի ձնոտի՝ յեց ի կամար
Դի որով զեւայ հեղեղ սրավար,
Կամ ի կողեց զալարաւէտ
Ուստի առուաց իշանէ վէտ,
Լայնածաւալ ի գաշտ հովիտ
Կամ ի ըլուց անտառախիտ,
Դիտել զիա՞ր քաղցր է յայգուն՝
Ըզրուսագեղ ակն արեւուն, ...
Ծաղկունք՝ կտակը առաւոտ՛ւ
Մըշտաղըւարձ՝ յայգուն պահու
Խընդապատար շերտըշն ըիր
Յաւէրժարսանց պըճիւլք ի տիպ»։

Կ'երդէ սակեստուն բզեզները, որ առաւոտու ծաղիկ
դստերաց այտերէն կը քաղեն քաղցրիկ նեկտարը։ Կ'եր-
դէ գետի ալեաց վրայէն սահող ծիծառն, կարմրակատար
փոքրիկ թռչունն, լցոն ու ծաղիկ ողջունող նուագածունն».

ըու պարը, դաշտի և դալար խոսոյ զարդն ու հոգին
վաստակաւոր։

Հազար օրհնէք, բիւր գովիեստ կը խնկէ իր պաշտած
լուսնակին, որ գիշերուան միթութեան մէջ իր մնայլ խղի-
կէն ներս կը թափէ լոյսը և կ'ընկերի մենասէրի խորհող
ու բանող մարին. նա իրեն համար գիշերուան բիւրն ու
լապտերն է։

« Պըակ մըթոյն ըզքել՝ արվի ուզիսմեմ՝
Ըզքեզ սիրեմ եւ ես, զըշաց եւակէմ.
Ու յաստեղ բոցս ըսպայակունէ զօրապետ
Եւ յօրիորդս ես թափուհի լուսազգեստ,
Զըքնազըդ բուսին
Պարծանք գիշերին»։

Գիշերուան այն պայծառ և աննման հոգի Մուսային
կը պաղատի, որ չմոռնայ այն վայրը, ուր կեանքի արեւը
չի ծագիր.

« Այլ մի եւ զվայրն ինձ անմուաց մոռանաւ,
Որոյ բնակչաց չնարու արեւն այլ սապաս...
Ե՛րթ ի ասպանս՝ ուր սիրավար բերի սիրս,
Գողալ բախիլ վերաց սրտից անխըմերտ.
Եւ անդր երթ լուսին,
Փարոն գամբանին»։

Արեգայ բանաստեղծը այդ հասակէն իր գրութեանց
մէջ բնաւ ցոյց չի տար բանի և անլնական տող. իր
մոքէն գեղեցիկ հանճարի սիրելի նոր ու չքնաղ բացա-
տրութիւններ կը բիսին հեղեղորէն։ Նա իր հասակին
մէջ՝ դասական բանաստեղծի կորովալից գրչով մեղ կը
ներկայացընէ բնութեան ճոխ նկարը. ուր կը խօսին
շնչաւորը և անշոնչք, ուր կը ժպտին ծաղիկները ու դաշ-

տերը, ուր կը թնդան վհերն և խոռոշները, ուր կերպեն անտառներու և ամպերու երաժիշտները։ Նա իր վրձնոյն հարուածով կը թափէ մեր թմրիրը, և ցոյց կուտայ իր հրաշակերտ « Բնութեան պատկերը ». և կը տեսնենք առաւտեան շիկնող երկինքը, ծիրանի հագած ամպերը, արեւելքի փեղիը կը բացուի, անկոց վրայ կը փայլին գիշերուան յակինթ զմբուխտ արտասուք, կը լսենք սրավար սուրացով ծովամնուտ թաքչող ջրի խոխոջները, խրոխտապանծ լերանց վհերէն որսալնդոստ զգայումը։ Բնութեան ճարտար նկարիչը հիանալով տիեզերաց անհուն սքանչելեաց վրայ, կը թողու իր վրձինը. և կը դոռայ.

«Ո՞չ անաստուած, ցամաքեսցի բեղուղ պեղծ,
Թէ զանմանին վիմանաս գործ անարնեղծ ».

Եւ դարձեալ կը վազէ իր մուսաններուն Ռվիլիանին, Արեգին և կոյլ գիշերուան լուսարար լուսնին, որմնց հոգի կուտայ իր վրձնով։ կը դիտենք երիտասարդ աբեղայ Ալիշանին այդ քնական « Բնութեան նկարը » ու կը հիանանք. և մեր սքանչացումը կը կրկնապատկի, մտարերելով որ այդ գեղապաճոյն նկարն՝ ուսանող աբեղայի, անձուկ պարիսպներու մէջ մարզուած երիտասարդի վրձնէն ցայտեր է։ Փոքր ինչ տնտընալով նորածագ աբեղայ քերթողին արշալոյսին մէջ, մենք դործիս անձուկ էներուն դէմ դործեցինք, բայց թող ներուի մեր այս վրիտակը, զոր դործեցինք՝ ուղելով ցոյց տալ, որ ազգիս ժամանակակից քերթողահայր Նահապետը՝ իսկական քերթող մ'է և ոչ ներշնչուած օտար ազբիւրներէ դող բա-

նասաեղծ մը, և ինչպէս յիշեցինք օտար ազբիւրներ չէր կրնար վայելել իր հոգւոյն մարզարանի պարիսպներուն մէջ։ Մինքնկծելի սոխակի մը յափշտակող գեղգեղովը իր գալար հասակին մէջ երգեր է երկինքը և երկնայինները, կրօնքը և անոր հոգեղբուագ զարդերը. երգեր է գերեզմանի քնակիչները և անմահացուցեր է իր և ամենուս պաշտելի Հողը... Քահանայութենէն յետոյ ուսուցչութեան և դաստիարակութեան ժամանակ, այլ ևս նա իր բանաստեղծ քնարին վարժապետ կ'ընտրէ ամէն ազգաց գասական բանաստեղծները, որոց ընթերցումը զինքը անոնց մրցակից և ազգիս գերազոյն քերթողն կ'ընէ։ Աշակերտութեան ատեն միայն մարզարէներու սանդուռները և Նարեկացւոյն քնարի ձայնն կը լսէր. իսկ վարժապետութեան ատեն տիեզերը թնդացնող բանաստեղծներու շեփորը : Հայրունիին ամենէն վառ, յուզող ու մոնչող քնարը հնչեցուցեր է վենետկոյ քաղաքական եռուզեն խուժանի մէջ շառաչող, սթափեցնող, հրացայտ երգերու արձագանդներէն ելեկարացած։ Վենետկոյ բոլներ կած յեղափոխութեան ատեն, կարելի չէր որ Հ. Ալիշանի գիւրավառ ոգին չյուզուէր և չերգէր իր աւելրակ պարագան ոգին չյուզուէր գոռացող Աղբիականի ալեաց վրայ կ'որոտացին վենետկոյ ուումբերը, գքսական սերունդէն սկսեալ՝ մինչեւ ողորմելի ձկնորսը ազատութեան ոգով բոցաշունչ՝ սուր, սուխն ու հրացան ի ձեռին՝ մարտի գաշտը կ'ընթանան, պատերազմի հարազատ զաւակներու կուրծքէն կը թնդար կարսնի մարտերգը. Օ՞ն քաջակուրծք կը թնդար կարսնի մարտերգը, զաղենք ի մահ կամ կունք իտակից, ի սէր հայրենեաց, զաղենք ի մահ կամ

ի յաղթանակ։ Կը հնչէ զանդակը, մարտի գոռ ազաւակը սոսկալի կ'արձագանդէ իտալիոյ մէջ. կը հնչէ պրդինձը. օ՞ն փոյթ ընդ փոյթ ընկերներ, վաղենք փրկենք հայրենիքը, շող ի շող կը ճօճին սուխն, նիզակ ու սուսեր, և օդը կը թնդայ ընկերներ, ընկերներ վաղենք խոցելու...

Հասաւ օրը, վրէժ, վրէժ... իտալիոյ հրաբուխներ՝ ամբարշտաց վրայ թափեցէք ձեր հրաշէկ լաւաները... երկարածիդ բոմբիններէ կրակ կարած մեր հրացանները, օ՞ն վաղենք մինք թշնամնոյն սառած արեան մէջ... Հ. Ալիշանի միտքը կ'օրօրուէք այս մարտի երգերու որոտընդոստ բոմբիններու մէջ. նա միենոյն ատեն կը դանուէք քաղքին կեդրոնը, այն պալատին մէջ, որուն առջեւէն հազարաւոր կոնտոլավարներ յեղափոխական խուժանին հետ, կը հնչեցընեն աղատութեան երգերը։ Հ. Ալիշանի ընկճուած, կալանաւորուած կուրծքը կը բարսէ, նա կը գոռայ իր կրակոտ « Բամ. վորոտան »ը... գոռնդագունդ ի զէն ի վրէժ կը հրաւիրէ իր հայրենաւ վրէժ չայկազունները. կը դոչէ Արէք ի կուրծ քաջակորպիք... Թռիք ի սազմ ի խազմ, առէք զէն ի զարդ... Հապ՝ օ՞ն, արի արանց մանկունք ի յաղթանակ՝ օ՞ն անդր յառաջ...»

Վենետիկոյ ամբոխին զայրացկոտ ապստամբողական օրերուն մէջ միենոյն յեղափոխութեան ատեն, 1849 մարտ 2ին, կը գրէ Աւագ ու Փոքր Մասիսի խօսակցութիւնը. Հայ ընթերցողը յափշտակուած մտիկ կ'ընէ այդ սարերուն. Փոքրն յուսեաս ու հեղնող, Աւագն գոռող և

քաջայանդուգն։ Աշխարհիս քան զամէն լերունք ազնիւն Աւագ Մասիս, ահեղ ձայն արձըկելով, կը հրամայէ « ինձ մտիկ արէք... ». Ազգիս մահաթմիրիր, անտարբեր զաւակները, կ'արթնան անոր սոսկալի ձայնէն, ականջ կը զնեն ալեւոր սարին բերնէն ելած հրացայտ խօսքերուն. նա ցոյց կու տայ իր դժոխք կուրծքը որ

« Գիտես թէ մարած է զինչ հին կանթեղ.
Բայց թէ տամ քըչիկ մի քուբուրտի գեր
Յանկըսկած դաշտեր ամեն ի ման գայ,
Դու այլ հետ չերանց զողաս զինչ արդայ...
Թէ ուղենամ նոր կանգնեմ ևս սարեր,
ՅԱրագած գեսապան զըսկեմ բարկ քարեր... »

Ետ կը սպասնայ մրտաելու երկիրը ու ամպերը, բոցեղէն գետ մը ժայիծքելու. վայ կը գոռայ անոր, որ իր դէմ կը կանգնի... »

Հանց գիտցիք զԱւագ Մասիսն՝ ով եղբայր,
Հանց ցըրտիկ ծոցեր՝ ունին սիրտ հրավառ.
Մասիս թէ զոք մեռած են մարած
Չանցնիր այն ճըրագն զոր վառեց Աստուած։

Եւ Նահապեան Մասիսու ժայռէն կայծ հանեց իր երգով ու վառեց աղջին վառ վառ ճրագներ... : Իր բանաստեղծ ողւցոյն ճրագն ի ձեռին, ման կու դամ չայրունիկ հրաշակերտ աննման դրախտին մէջ, և նզովք պիտի կարգան իմ ընթերցողներ, եթէ մասնամ յիշելու այն ամէն ծաղիկներն, որ հոն ըստած են հայու արիւնով և հոն ապրած են հայու զեփիւռով. եթէ չյիշեմ Սիսուանն և Արարատ կամ անսնց նման միւս հակայ դործերը, դա ոչ է իմ մեղք այլ գրքիս անձուկ էջերուն։ Հայրու-

նիի սրտատրով, երկնադաշնակ բամբ եւ բոմբը՝ Նահաւպետին շուրջը կը հաւաքէ Հայոց սրտեր սիրակայծ. առ հա կը թրթուայ Նահապետի սանդուրը, և բարձր Հայկալանէն՝ յաւիտենից հսկայազնից փոնչող, փառագոչ բամբին՝ ձայն կու տայ, և մոռացութեան խոր անդունդէն դուրս կը կանչէ Հայոց մեծաց փառքերը և հայրենի հուրը...

«Յանոց զըրդարանն ի բնադաւառն Հայաստանեաց».

կը բարձրանայ բամբին, կը քարոզէ, կը պատմէ նախահօր ու նախամօր անախտակիր տարփանէրն, հարսանիքը, կ'երդէ անդրանիկ հարսին դեղձան հոպոպները, մեղուակն աշուշներն, կ'երդէ սէրն սիրական և կուսական, պատուէր կու տայ դիշերուան ողիներուն, որ գան համբուրեն Ագամայ դէմքը, սողոխներու՝ որ գան վլեն Եւայի մեղոյշ հոպոպներուն մէջ, պատուէր կու տայ թոշոններուն, առուակներուն, խոժուագեղ ապառաժներուն, ալէշատ ծովուն, առիւծներուն և համաստիւռ օդին որ երգեն, կարկաջեն, մանչեն ու հառաջեն սէր. սէրը հնչեն, սէրը երգեն...

«Ըստեր՝ երկնք, ըստեր՝ երկիր, ըստեր՝ ո՛վ բնութեան.
Համայն հաստուածք միաբարբառ հընկեցք ՍԵՐ ՍԵՐ...»

Հեծեց երկինք, թընդաց երկիր, հառաջեցին անդունդները, գուըրդեցաւ համօրէն տիեզերը

«Զարարչագործն վերօնելով և զմիւտն սէր...»

կը թոշինք ի վարդելուր հոգւոց մը կը հանենք մարդկութեան անմեղ անդրանիկ նահապետ Արելի շուշանապատ քնարանին վրայ: կը թառինք Ելն փառօք

ուռնձալից Մասիսու ալեզարդ գլխին վրայ և կը գիտենք համագոյիցու խանձարուր Հայոց մեծաց մեր հարազատ սարին գարշապարքն քծնող ծառայն Ոլիմպոսը և թռուցիկ Պատնասոսը. կը գիտենք վտակ վճիտ զԱկոռին, ուր Խօսնակն Ալիշան պերծ ու բարձր քերթողական արհեստով կը վչէ իր սրինգը կը գրգռէ բնութեան երաժշտապետ սոխակի նախանձն, ուշագիր իր նուագին, պիշ պիշ կը գիտենք նիշ նիշ ձայնող, վէտ վէտ վիժող, մէտ մէտ մըրցող, խուն առ խուն, միւն առ միւն աեղատարափ դարավագ ալիքները, որ թինդ թինդ առեալ կայտուեն բոյս առ բոյս... Հ. Ալիշանի քնարը հոմերական խրոխտ յաղթական ձայնը կը տարածէ Հարանց լեռնագաշտին մէջ, Հայկազնից Ոգին հոն կը տանի զմերս գիւցազներգու Նահապետն հոմեր՝ ուր Հայոց Հարանցն Զօր նետէն տապալեցաւ տիտանեան Բել: կը շարունակէ իր երգերը, կը շարժէ կիթառը և վատողի երկչոս մարտիկին յոյս ու խրախոյս կը ներշնչէ: Գարանազեաց լերանց քաջներուն և ուրուականներուն կը գուժէ ահեղազօրն արի արքային Տրդատոյ մահը, Հայաստանի ողիներուն, վհերուն, սարերուն կը հրամայէ սուրդ, լաց ու կոծ:

Նահապետը սարսափած, շուարած, կ'ողբայ տիրանենդ գաւաճանութեան վրայ. սդաւոր փողով կ'ողբերգէ Տրդատայ քաջութիւնները, արխութիւննը և արքայաշուը թագումը: Մինչդեռ հառաջով ու կոծով կը հեռանանք տանն Հայոց վասք ու ղարձանք ահեղազօր Տրդատոյ գերեզմանէն, նոյն ողբերգակ Նահապետը նոր ոգի առած, հրատապ և բոցացայտ կուրծքին՝ կը հնչէ հնչական ճակատա-

մարտի երգն, կը դզորի հոյսթիւնը, կը հնչէ կրտելու երգը երգը.

«Յուղան օսյառն վասր ասանան Հայկաց,
Տան Սասանայ հաս օր վրիժուց...»

Արքայն Պատ արեւառարեն կը դիմէ, կը դիմէ սկայաքայլ քաջակորսին Մուշեղ, յաղթական ծիծաղով բերկութեամբ, բոցաշունչ կը դիմենք թորդամի քաջարի նետահարներու եռանդուն կոխը, նոյն ճակատամարտի մէջ կը կոռի իր սուրբ դունդէն տարամերժեալն Մերուժան, այդ սեւերես Արծրունիին երեսն ի վեր բանաստեղծն կը նետէ իր շանթաձիգ բառելն.

«Կաց Արծրունիկ ուռ կաց ամբարիշ
Հայոց թագին հետախորնդիր,
Յարժան վարձուց հիմ խուսափես միշտ.
Ահա եհաս քեղ թագաղիր».

Կը հասնի Սմբատ և ազգուրացին կունտ գագաթը կրակոտ շամիխուրի թագով կը սաղէ, կրակի արբանեակը կրակով կը պսակէ... Պարսից դունդը խայտառակարար կործանուած է, կը զուայ գրգուռ, կը մնիչէ Մամիրուտ. Մուշեղի շքեղ մազերէն յաղթաթիւն կը տարափէ... Պատերազմի դաշտի մէջ Եահապետի նուազներն հրդեհող են: Սմբատէն, Մուշեղէն վերջը՝ պիշ պիշ պշուցեալ կը դիմենք զԱյք ի հանդէս, վախը կը թնդայ կը դոզայ Պարսից սեւ հոգի գնդին մէջ. կը լսուի հայ երիվարաց փափնչն եւ դոփիւն, կը լսենք անոնց դափիրն եւ թնդիւն: Պարսից վրայ կը սուրաց Ամաստանիի հեծելազօրը, վոշին բարդ ի բարդ վեր երկինք կը բարձրանայ... կայծակ

ցանուալ հայ զնոդին մէջէն անդունդներու սարսափ երկիւզ աղղող ձայն մը կը գոռայ.

«Երթամ պուղել պղտորել ըղպեղ Պարսիցն ճամբար,
Հայոց քաջաց տամ հրաւեր՝ Ամաստանիս Առանձար».

Արեաց գոնէն կը հնչէ վրիժագահնջ ահեղ շունդը. Հայտառան այդ իր սղորմելի սոսիսի բիւրաւոր հրասակէն չի սորսիր, Մելուհն վասակ ձայն կու տայ.

«Զարթիք փեշազանք զարթիք զայրովիք իմ բոցահոր.
Վասակն եմ Անդուն մահզուն, վասաց ածեմ ձեզ ձայն.
Հայոց մանկափ, ձի կալեք ընթացէք,
Արեամբ ժանտից ըզտաւերս քամեցէք»:

Հայք՝ կոռի սուրբ ձայնը կը լսեն, կը վասին Մելուհին բերնէն վրիժուց կրակի փշող բոցով, կը սասանին սատանածին Սասանայ ծնունդը: Մելուհն վասակ կը թռչի կը ովանայ, կը զարնէ քաջարար և կը զարնուի....

Նահապետի յաղթական քնարը սղբերգութեան կը փոխուի. նա խշխող սրտով կու լսյ Արարատայ վրայ տարածուած ազատութեան յետին գիշերը: Պատեր է լուսիթիւնը և սարսուռ, լուռ է երկինք, լուռ է ծով և լուսած են պատերազմի բամբիւնները. կը լսուի միայն նահապետին լական ու լացընող սանդուրի ողբն,

«Լուծաւ առեան արշակունի, ո՞չ, եւ բարձաւ ազատութիւն...
Յիս ո՞վ գիշեր, միակ գիշեր, յիս, յի՞մ բամբիւն և յԱյրարատ...
Ո՞չ, ըրքազգրիկն կրուսանէ զկենասպին ազատութիւն
Քնրոյց բամբիչն հեղաձեմիկ եւ հիսխայ հրամանահան»:

Խոցուած սրտով, կ'ողբայ զԱրարատ, կը յիշէ անոր չքնազ գեղն, և անհամեմատ տարփելի բնութիւնն և գիւցազնական վասոքն ու յիշատակ անմոռաց. սղբացէք կը գոչէ, ձեր անոյշ հայրենիքը ողբացէք...

Արտասուաց կայլակները բիբերնուս վրայ սառած,
կը դիտենք ճախրատաց սեւ սիրտ սեւ հոդի Սիւնեաց
տէրն զվասակ, ալեզարդն Դեւոնդեայ հրաթաղանթ շըր-
թոնքն կ'որոտայ. «Ուր կը վազես Սիւնեաց տէր».
Եպիրշ փառամոլ անզեղջ մատնիչը կը պատասխանէ.

«Փութամ առ տէրն Արեաց, ըգթագ վեհափառ
Անուլ զՀայոց, այնքան քըրտանց իմ փոխան»:

Ազդուրացը աւագելի էր և յաւերժական ողբերու արժա-
նի. Նահապետի զայրացկոտ քնարը կը գոռայ անոր՝ վրէժ
յուխտէ, վրէժ անմեղներէ, վրէժ տարաբախտ կուսան-
ներէ, հարսերէ, փեսաներէ, որբերէ և այլիներէ... Բա-
նաստեղծը վրդոված է, շանթեր կը տեղայ իր անուա-
նակից սուրբի բերնէն. կարելի չէ մեղմել անոր սուրբ
զայրութը, կարելի չէ բարեխօսել.

«Այր ազգատեաց չունի երեք բարեխօս...»

Հայ Յուդան պարտաւոր էր, Արեաց տէրը անոր ոչ թագ
պարզեւեց. այլ ահեղ զնդան... Նահապետի գեղակերտ
ոսկեհիւս քերթուածոց մէջ, ազդեցիկ շեշտ մ'ունի ազդ-
ուրաց Սիւնեաց տիրոջ ողբերդու տեսարաննը:

Կը բանայ Հայաստանի ոգւոյն պատկերը, որուն առ-
ջեւ ամբողջ մարմնով սարսուռ մը կը զգանք, հոն ոգին
թէւ անշունչ, սակայն կը լսենք մեր որտէն արիւն թա-
փող հառաչ, կոծ. դառն է հին յիշատակաց վիբյիշու-
մը. դա հայրենի գերեզմանի պատկերն է, որոն ամէն
աւերակներու անմուանչ բեկորներն քեզ կը նային կո-
տրած որտով, և կ'ուզեն ըսել. «Եթէ յաւերժն Հայա-
տան դեռ ո՞ղջ է»... Հայրունին մեզ իր բամբիոներովը

գաղափար կու տայ մերթ սոսկավիթիսար զայրացկոտ
ովկիանոսի յոյզն ու խռով, մերթ քազցրատեսիլ սիրա-
կարկաջ վտակի ներգաշնակ պատկերն, մերթ խրոխտ
ու գոռոզ սոխակի յազթական տիրապետող գանգիւննե-
րու հոգեղմայլ բամբն: Անոր ամպաճեմ ու վարդաճեմ
գողտրաբարբառ քնարերգու ձայնն՝ ճարտար է զմեզ հայ-
րենիքի փառքով փառաւորելու, լայով կոծելու. ի լուր իր
հրաշունչ ձայնին՝ նախ կը քաջալերունիք, յետոյ կը
բքանինք, կը տեսնենիք հայրենիքը մերթ կանգուն և մերթ
աւերակ, աւերակներ որոնց վրայ կը փլչի նաև մեր
սիրաբ... Այս խորհրդածութեամբ կը թափառինք Հայոց
Բաժիններու ծովածաւալ աշխարհազրական նուազող
նկարագրութեան մէջ. վարպետ բանաստեղծն՝ հոն այդ-
ընդարձակ էջերուն մէջ, իր հանճարին ամենէն քաջակո-
րով հարստաթիւնն թափեր է ծշգրտօրէն ներկայացը-
նելու Հայ հողին ամէն գաւառներու, քաղաքներու, գիւ-
ղերու, ձորերու, բլրակներու, լեռներու, անդունդներու,
պալատներու և գղեակներու պատկերներն, պատմական
յիշատակները, և ամենուն վրայ դրուագեր է գեղեցիկ
յատկանիշ ածական մը: Այդ էջերուն մէջ Հայրենիեաց
պատկերը մարդարտաշար տողերով հիւսուած ու խտա-
ցած է ոչ Ստրաբոնի մը գրչով, այլ Պինդարական կի-
թառէն ցայտուն և հնչուն ձայնով:

Հայրունիի տատղին մայրամուաքին մէջ, Հ. Ալիշան
ճերմկած մաղերով և ծերացած գողդոչուն ձեռքով կը
զարնէ իր քնարը, հոն այլ ևս հայ քերթողներու նա-
հապետն կ'անուանէ ինքզինքը. ուամիկ ժողովուրդը որտա-

թունդ կը յափշտակուի իր անման աշուղին ձայնէն. Ծերունին կ'աւետէ

« Հայոց աշխարհիկ, դարունդ է հասել,
Ահա գեղեցիկ դարուն քո եկել ».

Ինչ սիրուն երգեր, ինչ սիրուն վէպեր երգեց Աշուղը, իր շուրջը բոլորած, իր ճակատը համբուրած ամբողջ հայորդիք, պաշտեցին զինքը։ Հայուն դարունը եկաւ ողնաց... Բայց աղու աղաւնին տուածւ աւետիս...

« Այլ ի՞նչ ափսոսամ ըկբեղ Հայաստան՝
Երբ ձեռքն Աստուծոյ աւենում յանդ իման ».

Հաղար ափսոս ու վաշ վաշ կը կարդայ աշուղն Հայոց աշխարհին. իր մաշած չնչին վերջին հառաչանքը տալով Մասեաց սարէն հասած զեփիւռին, զայն կը հասցընէ կը ձգէ արձադանդ հայոց սրտին մէջ. ձայն կու տայ Թորդոմեան որդւոց, Որդեղ,

« Թէ զիառքն հայրենեաց ձեղ այլ քըրեք փառա...,
Հետ նահապեակս եւէք ի յԱրտազ »:

Հայրենի կրակով սրտերնիս վառած, ժուռ կու գանքը յԱւարայր. կ'երգէ պլպուլիկը, կ'երգէ զանմահ քաջըն Հայոց, կ'երգէ մեր սրտի բարեկամ հոգեակն ու խօսնակ.

« Կես գեշերն առել եր գեշերավար
Խուսնակն յամպի տակ բացիսրիկ խալայր.
Մինչ հովըն շըրմոս կախ թեւօքն յանտառ
Օդոց և ծառոց հանդիսատ կու կարդայր.
ԶԱւարայրի մուլթն ու կանաչ ծոցիկ
Ծայրէ ծայր ճըզքէր Տըրմուտն հանդարտիկ,
Մհատաբսանըման անձայն խանուտիկ
Թաւելեցընելով հաղար բիւր աւիք:

ի յաստից ու անտից կան երկու բանակք
իբրեւ անկըսիւ ընկած մեռունակ.
Յերկուցըն միջոյ բարձրացած լուսնակ
կու թուի վահան գօրաց պահպանակ ».

Սեւ գնդին վրայ կը տեսնենք տարածուած խաւար, մեր գնդին վրայ լուսնակն լուսավառ և մեր այնքան քաջերէն
քան զամենիքն քայ,

« Ման գայ ու փըչէ գընդին Հայոց հուր,
Վարդանն այն վառած ի սէր և ի սուր »:

Կ'երգէ պլպուլը զքայն վարդան և Աւարայրի վառ վառ
ծաղիկներ. կ'երգէ պլպուլը կրօնքի կոխւը. կ'ողբայ խօսնակը

« Ճերմակ ու կարմիր զինչ վարդ ու շուշան՝
Ո՛չ, քանի՞ ազուր են ի Շաւարշան՝
Գըլուքք ի խաչին եւ ոոր յատրուշան՝
Մանկըտիքն Հայոց՝ որ ի քան մահուան ».

Կը ննջեն ի քոն անմահունակ. խոնաւ գիշերը կ'իջնայ
զինչ տարափ... լուռ, կը գոչէ պլպուլ, լուռ կացէք...
վարդանը կը մրափէ... Զայն տուր պլպուլիկ, կանչէ
հոգեհայն, ձայն տուր առ վարդան որ

« Ցիշէ ԿՀայաստան առն իր սկրական
Հայաստան յիշէ զիւր կարմիր վարդան »:

Բայց օտարին հովը վչեց գառնաշունչ, սուգը պատեց
մեր գեղեցիկ աշխարհին. քարէ սիրտ, սառէ շըթունք
վաստիներ սեւ օրեր կարդացին հայրենեաց հողուն :
Յոյսն ի ծոցին Նահապետ, լարեց իր քնար, գոչէց, հառաչեց,
որոտաց ու դուաց, բայց իրեն... և մեղի միայն
խաւարն ու սուգ մնաց.

« Հէ խեղճ ժերուկ, զարկ բզգործից ու զքեզ քարի... »

Քսաւ նահապետը և սիրտը յերկուս ճղքած, մտաւ գերեզման։ Եւ Ալարատայ երկծիղ գաղաթէն երկնցաւ լուսին, վառեց իր սուրբ ջահը ծեր բանաստեղծի պաշտելի դլսին վերեւ……

Մենք հնչեցինք նահապետին ջայրութիւն քնարին ամեւ նէն հրաշունչ բորբոքած, և բանկած կտորներն. բայց նա բանաստեղծ է իր ամէն գրութեանց մէջ. նոյն խակ ի խոր ծերութեան, մարած չէր իր բոցավառ երեւակայութեան պուետական հրգեհը. նա բանաստեղծ էր նոյն խակ հոգեզմայլ ճառերուն, ներբողներուն, յորդորական և կրօնական գրութեանց մէջ, բանաստեղծ էր փշոտ ու փոշոտ հայ բոյսերն և արմատներն նկարագրած ատեն. բանաստեղծ էր իր անթիւ ու անհամար նամակներուն մէջ, որոնք ցանուցիր կը պահուին իբրև մեչենական սրբազն մագաղաթներ իր ծանօթ գրադիտաց, իր հետ թըղթակցութիւն ունեցող բարեկամաց և բանասիրաց ծոցին մէջ։ Գործիս անձուկ էջերն մեզ թոյլ չեն տար յիշելու և յիշեցնելու նուագներու միւս հատորներու մէջ հիանալի տաղերն և տաւիզներն, որոնք ալէկոծ հոգիները կը խաղաղեն, բեկեալ սրաերը կը միսիթարեն, գաղջ հոգիները կը հրկիղեն։ Կարելի չէ հնչել Յուշիկներու յուշիկ ու անուշիկ հեքեաքներու հայրենաթունդ քնարի մեղյու բամբունք։ Կարող չենք գնալ հանգչիլ իմաստասէր նահապետին Եղեցնիին ստուերին տակ, ուր նա մեզ կը պատմէ՝ ողջ մարէ բխած ծաղիկ իմաստներու իմաստուն և նուագող խոկումներ, ուր մեր տկար մարի բոցն զեփիւսի մեղմիկ քամիէն չի մարիր այլ կ'արծարծի…

Նահապետին բանաստեղծական արդեանց վրայ ընդարձակեցաւ և տարածուեցաւ մեր համառօտ գրութիւնը, և քանի որ մեր քերթողահայրը իր նուագներով տարածած էր իր հանճարի համբաւը, պէտք էր որ մենք ալ իր գրական արդեանց այդ բաժինը քիչ մ'աւելի ընդարձակ բռնէինք, և մեր այս գաղափարին յուսանք հաւատարիմ մնացինք։

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ԵՐԿԵՐ

Բանաստեղծական երկերէ վերջ, չ. Ալիշանի համացը և գրական անդիմելի որդիմքն գուրու ցայտեցուցին իր ստուարահամառը հայ բնագաւառներու նկարագեղ երկասիրութիւնները։ Իր այս ճիշդի գործերու անդրամիկ աշխատութիւնը պատրաստած է աշակերտութեան ատեն։ Ինչպէս կանխաւ յիշած ենք, վարժարանցիութեան ատեն զրած էր իր Քաղաքական աշխարհագրութեանը։ սակայն նա շուտով չըրատարակուիր, այլ տարիներ անցնելէ յետոյ, չնորդիւ ուսումնատենչ մեկենաս Յովհաննէս Ամիրայ Ժատեանի նիւթական ձեռնառութեան, 1853ին այն լրս կը տեսնէ, գրեթէ բոլորովին նոր ձուլուած։ ուսանողութեան ատեն իր այդ երկասիրութեան առաջնորդ առած էր Շօշարայ և Մինցայ գաղղիացոց Cours Méthodique de Géographie գործն, բայց յետոյ կը սախլուի ուրիշ աւելի ընտիրու նոր աշխարհագրական հրատարակութիւններ իրեն առաջնորդ առնելու Քաղաքական աշխարհագրութիւնը ծովածաւալ գրքի մը գաղափար կու տայ. տեղագրական և պատմական տեղեկութիւնք հետարբերական են. աշխարհագրութեան հետամուտ ամէն անձ՝ այդ երկասիրութիւնը կ'ընդունի իրրե յորդառատ աղբիւր մը, ուր միայն հնութիւնը կը զտուի։ Այդ գործի լրս տեսնելէն երկու տարի յետոյ կը հրատարակուի իր ընդարձակ

Հայաստանի տեղագրութեանց լուսաշող երկանց առաջին ճառագայթն «Ցեղեկագիր Հայոց մեծաց» 400 էջ, մեծագիր, երկիցնան, մանրագիր երկասիրութիւնը, զոր նոյնպէս պատրաստած էր իր ուսանողութեան ատեն։ Այդ հրատարակութեան մէջ ամփոփած է հայ երկրի ամբողջ գուաններն իրենց քաղաքներով և գիւղերով։ 1870ին այդ գործին աւելի համակրելի և մասշելի Հայկական նշանալիները մեր ձեռքը կու տայ. ատմնք երեք հատոր պատկերազարդ գրքեր են, որ Հայաստանի առաջնորդ կրնան կոչուիլ։ չ. Ալիշան հան իր բանաստեղծութիւնը, և յուշիկներու հրապուրիչ հոգին չէ կրցած ծածկել. նա իր հիւրասէր ընտանի լեզուով, ընթերցողը անով կ'առաջնորդէ Հայաստանի՝ գործով և պատմութեամբ հաշակառը քաղաքներու, գետերու և գղեակներու մէջ։ Բայց այս երկասիրութիւնը իրեն գրչին համար զբօսանքներ խաղալիկներ էին. նա ամէն նիւթական պաշտամունքէ աղատած, երբ գրչին հետ խղիկին մէջ երկար ատեն մնալու բաղին ունեցաւ, իր լուրջ զբաղումն եղաւ մեծզի և հաստ Հայկարաններու մէջ, շահմարանել տեղագրական և պատմական մեծատարած գրական տաաղձներ։ Հայկարանները գործածելու ժամն կը համնի. 1884ին սկըսեալ հետզհետէ կը հրատարակէ յաւէրժական հանձարի՝ և տաղանդի կոթող տեղագրական և պատմական Շիրակ, Միսուրան, Արարատ և Միսական հայ բնագաւառներու նկարագիրը տիեզերական հմտութեամբ ճոխու հարուստ երկասիրութիւնները։ Առանց լրս տեսնելէն առաջ չ. Ներսէս վ. Մարգիսեան Հայաստանի ճամբոր-



Հ. Կերոսս Մարգինեան :


դութենէն վաճար կը վերագառնայ, իր հետ բերելով Հայ-
րենի երկրին աւերակներու ականատես ճշգրիտ պատ-
մութիւնը. որ չ. Ալիշանի գործերուն առաջնակարգ-
օգնութիւնն և սույզ աղքիւրն կ'ըլլայ *: Ամենէն առաջ

կը հրատարակէ Շիրակ գաւառի տեղագրութիւնը, զոր
գեղագարդ ձօնով մը կը նուիրէ Հօր Ներսիսի յիշատա-
կին։ Ստուարահատոր գործերուն այդ անդրանիկ հեղի-
նակութիւնը՝ բաղդամամբ յաջորդաբար լցո տեսած-
ներուն, շատ վտիս է և աղքատ, սակայն նու իր անուանա-
կիր ամբարներուն պէս, կը բովանդակէ ցորենաշատ գա-
ւառի ամբողջ աշխարհագրական և հնախօսական ընդար-
ձակ պատմութիւնը։ Հայ գրականութիւնը անով՝ առա-
ջին անդամ գաղափար կ'առնու կատարեալ տեղագրա-
կան երկասիրութեան։ Պա այնքան գնահատելի կ'երեի,
որ նոյն աստենուան իզմիրեան մրցանակի յանձնաժողովը՝
յանկամն հեղինակին, կը վարձատրէ զայն 200 ֆրանքով։
Հ. Ալիշան իր տեղագրութիւնները եթէ կանխաւ հրա-
տարակել մկան ըլլար, նա այժմ իր խստացած առ-
բողջ գաւառներու նկարագիրն գրած կ'ըլլար ուսումնա-
տենչ բանասիրաց գրասեղանին վրայ, սակայն նա իր
կենաց արեւուն խոնարհելուն ձեռք կը զարնէ անոնց։
Շերակ գաւառի տեղագրութեան յառաջաբանին մէջ, նա
արդէն կը յայտնէ, որ իր ընդարձակ աշխարհագրու-
թեանց հասորներն կազմելու համար, ամէն կարեոր պա-
տրաստութիւններն տեսած է, և ինչո՞ւ զանոնք հրատա-
րակելու յանդնութիւն չունենար, ահաւասիկ հետա-
քըրքարական հարց մը։ Գիւրին է դուշակել որ Արարատի
և Սիսուանի պէս պատկառելի գրքեր, տպագրական ծախ-

Ուխտիս։ Սակայն նա այդ խիստ շահեկան հետազօտութիւնները կի-
սատ ձգելով, կը սահիպսւի վանք քաշուիլ։ Հրամանը դրսէն էր նոյն
ասենի աղքեցիկ աթոռի մը վրայէն ելած...

քերու համար, միշտ մեկենասներու կը կարօտին, սա-
կայն Մխիթարեան մամուլը ատոր այնքան կարեւորու-
թիւն չի տար, նա շատ անդամ յոյսի խոստմալից թե-
լագրութենէն քաջալերուած, կը սկսի մեծածախ գործե-
րը բայց այսու հանդերձ չ. Ալիշանի տեղագրութիւն-
ները 1884 թուականէն առաջ անտիպ կը մնան. հեղի-
նակը կը բաւականանայ վոքր գործերու հրատարակու-
թեամբ, տակաւին միաբանութեանս մէջ չ. Բագրատունին
իր գասական գիւցազներգութեամբ և չքնաղաճիւս քեր-
թողներու գլուխ գործոցներու թարգմանութեամբ, ու
իր հայերենագիտութեան անընկճելի համբաւովը կը տի-
րապետէր Ս. Ղաղարու գրական գործունէութեան վրայ,
գրչի և տաղանդի շոխնդը իրմէ կը լսուէր, անոր գրա-
կան վառքի արեւուն շացուցիչ լոյսին մէջ, Նահապետին
ճառագայթարձակ աստղը իր համեստութեան մէջ կը
սրովուէր. բանստեղծ էր նա, և բանհաստեղծին ասպա-
րէզ պէտք էր, պէտք էր զայն քաջալերութեան վառ-
վառուն հրավ բորբոքել... Եւ չ. Բագրատունիի վայլուն
վերջալոյսի կապյալին վրայ կը տեմնենք Նահապետի աստ-
ղը գէպի զէնիթ ձգտող։ Բագրատունիէն յետոյ ամբողջ
վանքը կը հնչէ Նահապետ և կը հոչակուի միայն անոր
տաղանդով։ Հ. Ալիշան իր բեղմնաւոր գրչով Բագրա-
տունիի արեւմուաքը շուտավ մոռցընել կու տայ։ Իր ա-
մենէն մեծ և աղքեցիկ քաջալերովն և բարոյական մե-
կենասն կ'ըլլայ Ռւխախս ներկայ վեհ. Աբբահայրն գեր.
իգնատիս վ. կիւրեղեան։ Սա Նահապետին հետ Ռա-
փայէլեան վարժարան եղած ատեն, գիտէր ու կը տեսնէր

թէ այդ ժիր գրիչը ինչպիսի մեծ գրական պատրաստութիւններ կը տեսնէ , նա կ'իմանայ որ այդ համեստ միաբանը յառաջ քաշելու ժամանակն հասեր է , և նոյն իսկ ուշացեր է . կը կի՞ գիմումներով կը յորդորէ զնահապետ որ տպագրութեան տայ իր պատրաստած տեղագրութիւններէն մին . Հ . Սլիշան պատճառառնք կը բերէ գործին տպագրութեան անհամար ծախքը , որուն միաբանութեանս , տպարանը կարող չէ գիմանալ . Գեր . Աբրամն , այդ գժուարութեան հոգածութիւնը իր վրայ առնելով , տեղագրութեան առաջին գործը մասունի կը յանձնուի . Մի քանի տարի վերջը կը սկսի երկրորդ գործին Սիսուանայ տպագրութիւնը . նիւթական ծախուց տակ ընկճուելու երկիւզ չկար . Գեր . Աբրամն մեծ լոյս ունէր որ ընկերագրութեամբ այդ ստուար գրքերը կարելի է շուտով սպառին և գոցուի ծախքը . Յուստիաբութիւն չկար . Խրաբանչիւր հատորի համար ամրագլ ծախք կ'ըլլոյ 20,000 ֆրանք , որ բաժանորդագրութեամբ գրեթէ — կը ստացուի . սակայն տպագրութիւնը կը դանդաղի . յաջորդաբար հատորները լոյս չեն տեսներ . այդ վիթխարի հրատարակութեանց համար , մեր տպարանը շատ գաճաճ էր , անոնց լոյս տեսնալուն՝ պէտք էր մի քանի տարիներ , և տպագրութեան ուշանալուն ամենէն մեծ պատճառներէն մին ալ էր հետաւոր տեղերէ համելիք պատկերներու , կարեւոր տեղեկութեանց յապաղումն և հեղինակին խըզճամիտ փոփոխութիւնք , զոր կը կատարէր գործին տպագրուելու ատեն , և այս պատճառաւ յառաջացաւ հեղինակին ծերութիւնը և ետ մնացին միւս խոստացուած



Գեր . Աբրամայր Իգնատիոս Ա . Կիորեղեան :

գաւառներու նկարագրութիւնք, զոր կատարելու համար, պէտք էր առողջ և թարմ հասակ, տաղտկալի և անտանելի աշխատանաց և վաստակոց կարօտ գործեր էին անոնք: Բայց ինչ որ ալ լինի, այսօր ամբողջ հայութիւնը իր ամենէն դժուարահաճ իրական և շինծու քանասէրներով և գրագէտներով ի միասին երկրպագու են Նահապետի այն գողգոջուն ձեռքին, որ հայ մատենագրութեան պարգեւեց իր չորս ստուար տեղագրութիւնները, ուր կը կարդանք մեր պատմական երեք լայնատարած գաւառներու աշխարհագրական, և քաղաքական պատմութիւնը, անոնց մէջ կը գտնենք իւրաքանչիւր գաւառներու լերանց, հանքերու, բուսոց, կենդանեաց վրայ ամփոփ և ցանուցիր տեղեկութիւններ. մեզ կը ներկայանան վաղեմի և ներկայ հայաբնակ ամրոցները, կրօնական հաստատութեանց վանօրայք, կանգուն ու կիսակործան եկեղեցիներ, ուխտատեղիներ, խաչարձաններ, աշտարակներ, հայպետաց ճիւղագրութիւնք. հայրապետներու, հայկակուններու անցեալ իշխանութեանց վրայ կը ստանանք պատմական տեղեկութիւնք, որնք քաղուած են քաղմաթիւ հայ պատմիչներու գործերէն, իսկ աշխարհագրական հմտալից կուռ ու հոծ տեղեկութիւնք հոն խտացած կը տեսնենք մեղուօրէն քաղուած ու ծծուած ազգային և օտարազգի ուղեւորաց պատմական և աշխարհագրական ընդարձակ և համառօտ բազմաթիւ գործերէ: Այդ հատորները առ հասարակ ամէն հայ աշխարհագէտի, բանասէրի, և գրգէտի համար կը ծառայեն իրեւ գրական հարուստ բովիր ուր գանձը յարդի և անսպառ է: Այս ընդարձակ

հատորներու մէջ ամենէն աւելի գերազանցապէս գնահատելի աշխատութիւնն է, հեղինակին այն նոր ու թարմ տեղեկութիւնները, զոր ոչ միայն նամակներով ստացած է, այլ կարդալով Հայաստանի ամէն աշխարհագրական եւրոպական նոր հեղինակութիւնները. նա շարունակ եւրոպական գրքերու ցանկերը կը պրապէր, կը թըլթակցէր օտարազգի գրավաճաններու. հետ և կը ճարէր նոր լոյս տեսած անզղիերէն, գերմաններէն իտալերէն տեղագրութիւններ. շատ անդամ հնախօսական և աշխարհագրական ընկերութիւնները այդ հրատարակութիւնները ուղղակի իրեն նուէր կը յդէին. իր աշխարհագրական և հնագիտական մասնաճիւղը հռչակուած էր ամէն գիտնական կաճառներու և ընկերութեանց մէջ: ինքը Եւրոպացիէն և հայտգէտ Եւրոպացի գիտնականներն ալ իրմէ կ'օգտուէին, և օգուածը փոխադարձ էր:

ԶԱՆԱԶԱՆ ԳՐՈՒԹԻՒՆՔ

ՔԵՐԾՈՂԱԿԱՆ գրութիւններէ զատ, Հ. Ալիշան ուրիշ բազմաթիւ ինքնագիր՝ և թարգմանածոյ գրութեամբ հարըստացուցած է հայ գրականութիւնը։ Փոքր գրուածներէն շատերն կրօնական են։ Նա ատոնց մէջ ցոյց կու տայ իր աստուածային սիրոյ երկնային անգուսպ հուրը։ Փոքր գրուածոց մէջ, անխոնջ մոքի աշխատութեան գողարիկ գոհարներ են Յուշիկք հայրենեաց Հայոց, Շնորհալի և Պարագայ իշր, Հայրուսակ, Հին հաշառք հայոց, Հայ-վենետ, Արշալոյս և այլն, ասոնք ամէնն ալ նախ « Բազմավէպ »ի մէջ լոյս տեսած են և նոյն ամսագրի ամենէն պատուաւոր էջերն կազմած։ Իր այդ իւրաքանչիւր գրքի վրայ ծանրանալը մեր նողատակէն դուրս է։ Ամոնք թէե համեստ ծաւալով մեզ կը ներկայանան, սակայն կը պարունակեն իրենց նիւթին վերաբերեալ այն խոր հմտութիւնը, որ մի՛ միայն Հ. Ալիշանի տաղանդէն կը բախի։ — « Շնորհալի և պարագայ իւր » Կիլիկիոյ մեր ամենէն շնորհալի և սիրելի Ներսէս հայրապետի լիակատար կենսագրութիւնն է, դա հոգեզմայլ գրութիւն մ'է. պատմական, աշխարհագրական և բանասիրական անհուն տեղեկութիւններով լի, դա միանդամայն գեղագարդ իրական վէպի գաղափար մը կու տայ։ Օրենակ, մենք կարդանք անոր էջերուն մէջ նկարագրուած Հոռմելլայի ամրոցը, ահա մեզ կը ներկայանայ հայ զի-

նուորական պատմութեան ամենէն գեղեցիկ էջերէն մին։ Նա մեր առջե կը պատկերացընէ կուներով կոթող կանգնուած հայ ամրոցին հնութիւնները, ուր կը չնշենք կրակ ու փառք։ . . .

« Հայրուսակ »ը մեր աղքատ ուսումնական բառերու շտեմարանին համար, անգին գանձ մ'է, և կարելի է ըսել՝ աննման աշխատութիւն մը. որ հայ բժշկաբաններու խորթ բառերը մասամբ մը կը մեկնէ և կը լուսաւորէ։ Մնով կը տեղեկանանք Արարատեան գաշտի և ամէն հայաշատ քաղաքներու և գիւղերու և ամրող հայ բնագաւառներու մէջ ժպտուն ծաղկանց, բուժող տերեւներու, արմատներու բնիկ և հարազատ անուանց և անոնց առասպեկաշնորհ յատկութեանց։ « Հայ Վենետ » և անոր նման հրատարակուած իր ուրիշ մի քանի հատոր երկերն, մեզ կը պատմեն Հայաստանի հողէն ու ջրէն կորուած և օտար բութեան մէջ ապրող, անեցող և օտարին մէջ ձուլուող բութեան մէջ ապրող, անեցող և օտարին մէջ ձուլուող բաղթականութեան անցեալը։ Ասոնք հայ գաղթականութեան պատմութիւնը կազմողի մը համար անմիջական տաշուած ու կոկուած առձեռն պատրաստ ատազձներ են։ Համեստ ծաւալով երկերու մէջ խիզախ առաւելութիւն մ'ունի իր « Հին հաւատք »ը. դա չքնաղ գործ մ'է. արգիւնք երկարատև քննութեանց։ Հեթանոսութեան մնիւրէն յարութիւն առած ներկայ հայ քրիստոնեայ ժողովուրդը, զարմանքով կը գիտէ հոգի առնող հայ ոգիները, պարիկները, որոնք իրենց խորհրդական մագիչ ձիբքերով կուզեն կախարդել ընթերցողին միաբը։ Այդ գործը պիտի ծառայէ իրքի հայ կոատանց

մեհենագիր, անոր մէջ պիտի կարգանք մեր քուրմերու, քրմեւհեաց, գիւցազանց լարքը ու փառքը, որոնց ճառագայթները կը խուարին Հայ. Եկեղեցւոյ « Արշալոյսի » ճաճանչագեղ լոյսին մէջ, լոյս լուսաւոր, շունչ և հոգի Լուսաւորչի....

Գրական հոյակապ հսկայ գործիչին համար, յիշեալ հասորիկներն մոքի կայծեր էին, որ մերթ ընդ մերթ կը փայլատակէին իր պարզուկ սենեակէն. հետաքրքրական էր տեսնել անոր վերջալոյսը, որ աննշան պիտի չանցնէր. Հայ գրականութիւնը այդ ծերունի մոքի մեծ վաստակաւորէն այլ ևս չէր սպասեր հսկայ գործեր, ժամանակը մաշած էր անոր միտքը, սպասած էր անոր ուժը. նա պէտք էր անցեալին փառաւոր և յաղթական արդեանց մէջ հրճուէր և հանգիստ տար իր հիւծած կազմուածքին, հանգիստ իր համբուրելի գրչին. Սակայն ազգասիրութեան հրդեհը իր մէջ բոնկած էր. Լուսաւորել հայրենիքը, ճոխացընել իր սիրատենչիկ ազգին մատենագարանը, իրեն հետ ապրող բոց մ'էր. որ ծագեցաւ իր հաճարին հետ, և շիջաւ. իր արեւուն վերջին ճառագայթին հետ. և այդ բոցավառ գաղափարը անշարժ չի թողուց ծերունիին գրիչը. նա շարժեցաւ. երկու տարուան մէջ լոյս տեսաւ Ազգիս պատմութիւնը, ոչ այն ոճով և գրութեամբ՝ ինչպէս մինչև յարդ պատմած են մեր ծանօթ ու կէս ծանօթ պատմիչներն. Նահապետական էր նաև այս գործի պատրաստութիւնը. Այս եւս իր հայկական գանձարաններու մէջ ամբարուած անկազմ անզատասատ և բոլորվին կիսկատար երկ մ'էր.

փութաց հոգի շունչ առւաւ այդ գրական քառոյն, և ոնեցանք ստուար վիթխարի հասոր մը, ուր կը գըտնանք մեր ազգի նահապետէն սկսեալ՝ մինչև Ժի գար՝ Հայ պատմութիւնը, ուզգակի մեր բոլոր հաբազատ պատմիչներէ պատմուած, իրեն ծանօթութիւններով լուսաւորուած. Հոն կը գտնանք ամբողջ մեր պատմիչներու կենսագրական իր բնատուր գրչով գրուած: Զայն անուանեց « Հայապատում » և նուիրեց ի յիշատակ Ռւխտիս երկդարեան յորելինի: Այն եղաւ նոյն հանդիսին մտաւորական ամենէն շքեղ զարդը և իր պաշտելի աճիւնին գամբանագարը... Հ. Ալիշանի գրական արդեանց մեծ մասը խտացած է « Բազմավէպ »ի էջերուն մէջ: Անոր մէջ ծագեցաւ իր մոքին անդրանիկ աստղն: 1843 մինչև 1901 իր հանճարը ստանեցաւ այդ ամսաթերթի էջերուն վրայ: « Բազմավէպ »ը իրեն սիրահար գրական ընկերն էր, ինքը իր գաստիարակ Հ. Գ. Այվազովսկիին հետ անոր կեանք տուած էր, և ամբողջ կենօք նա պէտք էր խնամեր զայն, հսկեր անոր վրայ. և այս գործը իրեն համար նուիրական էր. նա « Բազմավէպ »ի հոգին եղաւ, և իր կորովի հանճարին շոխնդը նախ անով տարածուեցաւ. Հայ հասարակութեան մէջ. իր Նուագներուն, Յուշիկներուն ամենէն գեղեցիկ կտորները նոյն ամսագրի մէջ հրատարակուեցան, ժողովուրդը յափշտակուեցաւ, անոր ազգաշնորհ գրչով. « Բազմավէպ » անոր յօդուածներով գիւթեց ընթերցողները: Ազգը զնահապետ ճանշցաւ. « Բազմավէպ »ով. Տիւզեանց աւագ տաներէց քերխողահայրն Բագրատունին, զմայլած էր Նահապետին

երգերուն. կ. Պոլսէն առահճին նոտմակով վանքէն կ'ուզէ իմանալ, թէ ի՞նչ նորագիւտ նախնի մ'է այդ Նահապետը, նա չէր գիտեր թէ Ալիշանն է Բամմ Փորոտանի հեղինակն : Պէշիկթաշեան և այլ նոյն ատենուան կ. Պոլսոյ գրագէտ ու բանաստեղծ նոր երիտասարդութիւնը, Բարգրատանին հետ կը զմայլին չ. Ալիշանի քերթողական հանճարին :

Դաստիարակութեան ատեն նա անդադար « Բազմավէպ » ի մէջ հրատարակած է ազգային կենաց և բարուց գեղեցիկ յատկութեանց վրայ ձուլուած բարոյական ճառեր : Հ. Այլվազովսկիէն վերջը, ինքը 1849—54 կը վարէ « Բազմավէպ » ի խմբագրութեան պաշտօնը . իր գաղափարին համեմատ, կուզէր որ « Բազմավէպ » ը ըլլայ ժողովրդական ամսագիր . բովանդակէ համառօտ բազմաթիւ յօդուածներ, և խմբագրուած ըլլայ մի՛ միայն ներքին երիտասարդ քահանաներու գրուածներով . նա զ « Բազմավէպ » նկատած էր նորընծայ քահանայից գրչի վարժարան : Ցկեանս նա մեր ամսագրին յօդուածներ տուած է և միշտ իր աշալուրչ գիտող աչքը, անոր վըրայէն չէ բամնած, գրեթէ ամէն խմբագիրներու օրով մանաւանդ իր աթոռակալութեան ժամանակ, խղճի մոօք սրբագրած է « Բազմավէպ » ի ամէն պրակներն : Եւ « Բազմավէպ » իր բարձր համրաւը մեծ մասամբ, նաւ հապետական յօդուածագիր բանաստեղծ և բանասէր նահապետին հանճարին կը պարտի :

ՅՈՒՆԵԼԵԱՆ

Հ. Ալիշանի համբուրելի ճակատը պսակած էին իր ձիւնափայլ մազերն, մոռաւոր աշխատութեան, անընդհատ գրչի շարժման նշանն էր ժամանակէն տառջ անոր մազերու սպիտակութիւնն : 1840էն մինչև 1890 անցեր էին 50 տարիներ, այդ կիսադարեան միջոցին մէջ, նա ազգին տուած էր նախ իր գաստիարակութեան պտուղ մորի և կը թութեան սաներ . հրատարակած էր իր ամենէն գեղեցիկ գործերէն մեծ մասը . իր արուսեակը գիմած էր, բարձրացած գրականութեան զէնիթին . ուսկից շող ի շող ազգին վրայ կը սփոքը սէր և հուր հայրենի, հանճար և միտք տարփելի : Ելատն տարուան մէջ, նա իր գրական երկերով յեղաշրջած էր ազգին մտաւորական անդաստանը, հանճարեղ գրագէտներէն, վիպասաններէն և քերթողներէն մեծ մասը, իրմէ ազգուած, սկսած էին նոր յառաջագիմական կենսական մկում մը տալ ազգային զանգուածին . երախտագէտ հայութիւնը մեծ բանաստեղծ և մեծ մատենագիր հօր Ալիշանի անզուգական գրական վաստակը պսակելու համար, առիթ գտաւ անոր քահանայութեան յորելեան հանգէսը, որ զուտ կրօնական չմնաց, այլ պսակուեցաւ գրական ցոյցերով :

1890 մայիս 25ի օրն Ս. Գաղարու Միարաններուս համար, ամենէն նշանաւոր օրերէն մին էր . նոյն օրը ամբողջ մեր ազգը ոգեւորուած, հեռագրով, նամակներով,

ուզեցին անմահացընել Նահապետի գրական գործունէութեան յիշատակը . յարգանքի և երախտագիտութեան ցոյցերը պաշտումի կերպարանք առին ջակաւին նոյն օրը իր գեղեցիկ և եռանգուն յիշատակներով, թարմ մնացած է մեր յիշողութեան մէջ։ Մուրատ Ռափայէլեան աշակերտաց բազմութեան հետ, միանալով յորելեան հանդիսի յատուկ ազգային նուիրակներ, իտալական պայծառ և ծիծաղկոտ կապոյտին տակ, Ս. Ղազար իբրև բեկոր մը Արարատեան երկրի, Կօրորուէր վենետիկեան արծաթաշող լճակի վէտ վէտ ալեաց մէջ։ Նահապետին երգերը կը թնդային երիտասարդ հայ կուրծքերէն, զանգակներու գանդիւնը, յաղթական հնչիւն մը կը տարածէ . իսկ խորանին վրայ բաղկատարած բանատեղծ ծերունին՝ իր յափառակուած դիրքով, յիշել կուտար Աւարայրի դաշտը, իր անուանակիր սուրբի հրաշունչ և հոգեշունչ սրտաբուխ օրհնութիւնները։ Նոյն օրը ակադէմիական հանդիսի տաեն, երբ նա ցնցելով իր սպիտակ խոպոպները առիւծի մը թափով սկսու աստուածային քերթուած մը կարդալ, հանդիտականաց վրայ տարօրինակ յուղում մը պատեց, նա իր գերբնական զգացումը ամենուս զգացուց . նոյն վայրկեանին իր հոգեկան զգացմանց հրաբուխը բռնկած էր, ինքզինքը չէր կընար զսպել. իր կերկերուն գողգոջուն ձայնը, խզդուեցաւ կեցցէ Նահապետ յաղթական որոտընդուստ երկարատեւ գոսում զոչումի մէջ։ Օտարազգի մեծանուն հանդիտականներ կը զարմանային տռ Հ. Ալիշան ցոյց տըրուած և եղական, տարօրինակ, և խնկելի յարգանաց հա-




Հ. Ալիշան Յորեկեսեի ժամանակ :

մար. կը զմայլէին՝ երբ ընդ մէջ երաժշտական խմբերգ-ներու, կը կարդացուէին բազմաթիւ հեռագիրներ : Հեռագրատանց պաշտօնեայք զարմանօք՝ կը հարցընեն ո՞վ է Ալիշանը, ո՞վ Նահապետը. անոնց համար տակաւին անծանօթ մնացած էր մեր սարերը սասանեցընող, ամպերը բարկացնող և վչերը մնչեցնող մեծ բանաստեղծը :

Յորելնանին առթիւ մեր Նահապետին եղան նաև
նիւթական նուէրներ, թբքահայք նուիրեցին մի ալա-
պաստրէ մետալ՝ արծաթ քնարէ կախուած, մի կողմը
քանդակուած էր Նահապետին կենդանագիրը, միւս կող-
մը գրուած «Հ. Ղ. Ալիշանի, ի յիսներեւակ յորելինի
գրականուրեւան. երախտապարտ հայուրիւն. Կ. Պոլիս
1890 Յունիս 7/19 ». նոյն հասարակութիւնը նուիրած
էր նոյնպէս նորագիւտ ինքնագիր ոսկեգրիչ մը, Մա-
նուէլ Եսայեան Էֆէնտի օրացոց մը. իսկ Տրապիզոնի
ազգային երիտասարդութիւնը գաւառին և գիւղերու հա-
զուագիւտ ծաղիկներու հաւաքածոյն, գաւառական հայ
հարազատ բարերով*, Ռուսահայք նուիրած էին փետրա-
ձեւ ոսկեգրիչ մը, Բաշխնչաղեան նկարիչն Արարատյա
իւղաներկ գեղեցիկ պատկերն. Կ. Շահլամեան ուղունքով

* Հայրուսակի յառաջաբանին մէջ, զրքին ստուգողները յիշուելէն
յետոյ, կը յիշատակուե նաեւ հետեւեալն. «... յիշեմք չնորհակալու-
թեամբ՝ հաւաքում մալ Յօքն աւելի թէ բաւսոց և թէ անուանց,
վայելուչ զրքաձեւ կողից մէջ ամիսովուած, զոր Պ. Հայեակ Խուշգա-
շեան ուսուցիչ, Պ. Պետրոս Մարիմեան և այլ քանի մի բանասէր երի-
տասարդք Տրապիզոնեցիք՝ քաղքին քով գելերէն և լեռներէն ժողովի-
ւով, յամի 1890, յոպելինի առթիւ, լնծայեցին առ մեր Հ. Պ. Ալե-
շան, և սր հաճոյ եղաւ իրեն քանի զայլ յիշատակո»:

բաժնուած Պատկեր Հայաստանի ելիքնագեղ ձեռագործը. և այն: Վարժապետ և հրապարակագիրի յոթելերներու պէս չարժանացաւ նիւթական նուէլներու, բայց այդ



Հ. Ալիշանի իր գրասեղանին առջեց:

վաղանցուկ ու մուցուկ նուէրներէն տւելի, անթառամ և
անհամեմատ նուէրն ունեցաւ ամբողջ հայութեան երախ-
տագիտութեամբ զբայռն, սիրուն սիրտը, որոնց թարգ-
ման եղան հեռագիրներն, նամակներն և լրագրաց մէջ
չըստարակուած յօդուածներն:

Յորելեանի ժամանակ ամբողջ ազգային լրագիրները
միաբերան, անխարդախ ովսաննաներ կը գոչէին, կը գը-
րտատէին ազգին նահապեալ: Թէ յորելեան հանգիսի
հրատէր ոչ ոքի չէր գացած և կանխաւ յայտարարուած
էր թէ այդ հանգէսը վանական համեստ բան մը պիտի
ըլլայ, սակայն այսու հանգերձ, ազդը մասնակցեցաւ այդ
նշանաւոր տօնին: Գեր. Ազարեան Պատրիարքն հայ
հռովմէական հասարակութեան կողմէն, նուիրակ յղեց
զգեր. Միսքճեան Յով. Վարդապետ, որ հանգիսի ատեն
կարդաց քերթուած մը. Կ. Պոլայ ազդասէր դասա-
կարգին կողմէն, հանգիսակից եղաւ Հ. Ալիշանի սիրելի
սանն Պ. Ա. Արփիարեան, իսկ Արտասահմանի գաղթա-
